

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՃԻՇԵՑԻ ՊԱՏԱՐԱԳԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Խորհրդի խրատ աստվածագործ քահանաներին՝ գրված Հովհաննես վարդապետ Արճիշեցու [կողմից], Ով կոչվում է նաև Ոսպնակեր

Ամեն ինչի ժամանակը կա, և ամեն գործ ունի իր ժամանակը (Ժող. Գ 1): Արդ, երբ մեր առաջին հայրերը և Եկեղեցու վարդապետներն աստվածային պատգամներից ինչ որ բան էին կամենում խոսել կամ գրել՝ նուրբ ու առակավոր դարձվածքներով և գեղազարդ ու պաճուճված բառերով էին ջանում շարադրել՝ լսողներին ցանկալի դարձնելու համար: Եվ սա ոչ թե զուր տեղը և կամ թե մարդկանցից փառք որսալու համար, այլ, որովհետև տեսնում էին, որ այդ ժամանակի մարդիկ ունեին փափագ Խոսքն ուսանելու և ձգնասեր էին: Եվ որպեսզի դյուրությամբ գտնելու պատճառով դյուրությամբ էլ չարհամարիվեր դրանց իմաստը, այսպիսի օրինակով էին գրում կամ խոսում նրանց հետ:

Բայց տեսնում ենք, որ մեր ժամանակակիցները նույն փութաջանությունը չունեն իրենց հոգիներում, կամ էլ ջանք իսկ չեն թափում գրվածքների ընթերցման համար, իսկ եթե ընթերցում են, ապա բնավ չեն քննում գրվածքների իմաստը: Ոմանք էլ կարդում են գրվածքը և չեն ըմբռնում, և կան, որ ամեն օր բերաններն առած ասում են, սակայն չեն իմանում ու հասկանում ո՛չ Ղավթի սաղմոսները, և ո՛չ էլ պատարագի խորհրդի աղոթքները: Ինչպես և խորհուրդը կատարող քահանաներից ոմանք բերանով ասում են աղոթքները և չեն հասկանում, [խորհրդա]գործում են և չեն գիտակցում, այլ միայն արագ և փութկոտ լեզվով արտասանում են աստվածային աղոթքների խոսքերը՝ բնավ չիմանալով, թե ի՞նչ են խոսում կամ գործում, այլ միայն ձգտում են ավարտին հասնել և ոչ [թե] աստվածային խորհրդի ստույգ ճանաչմանը:

Ո՛վ այր, աստվածային խորհուրդների կատարող և սպասավոր, կարո՞ղ է պատահել, որ ձեռքի աշխատանքով զբաղվող արհեստավորներից մեկը՝ լինի հյուսն, դարբին կամ ջուլիակ, երբ կամենա ինչ-որ իր պատրաստել, նախապես չխորհի ու չմտածի իրի ձևի և օրինակի [մասին], այլ առանց խորհելու միայն ձեռքը գործի դնի. հնարավո՞ր է [արդյոք], որ նա պիտանի ինչ որ իր պատրաստի: Եվ եթե այս անհնար է, ապա որքան պետք է մտավոր խորհրդագործությամբ և մանավանդ մեծ երկյուղով ու զգուշությամբ, ձեռնարկել այս մեծ ու սարսափելի խորհրդագործությունը, քանի որ սա աստվածագործություն է և ո՛չ թե հասարակ ինչ-որ գործ: Դրա համար [էլ] Խոսրով Մեծը՝ Գրիգոր Նարեկացու հայրը, իսկ հետագայում նաև Տարսնի վերատեսուչ Ներսեսը, ընդարձակ և պայծառ քննությամբ մեզ ավանդեցին պատարագի մեկնությունը: Բայց կան ոմանք, որ պատճառաբանում են խոսքերի առատությունը, ոմանք՝ խրթնությունը, և անշահ են մնում, թեպետև ծածուկ ոչինչ չկա նրանց խոսքերում: Այս պատճառով ետինս բարիներից, վերջին ժամանակի ծնունդս՝ Հովհաննես Արճիշեցիս, սրբազգյաց քահանաներից ոմանց թախանձանքով հարկադրված՝ ձեռնարկեցի համառոտ և պարզ խոսքերով վերստին նրանց տալու սույն խորհրդի մեկնությունը՝ հուսալով Սուրբ Հոգուն և սրբերի աղոթքներին, [սակայն] ոչ թե վերոհիշյալ այրերի մեկնության խոսքերի իմաստներին ինչ-որ բաներ ավելացնելով, այլ միայն նրանց խոսքերը կարճելով՝ պարզեցրի, որն եթե ձեզ հաճելի լինի, Տիրոջից պարզև [կլինի], իսկ եթե ո՛չ, նույնպես Տիրոջ շնորհը [կլինի], բայց միայն թե անպարսավ մնամ ձեզանից:

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Թե ի՞նչ խորհուրդով ենք ամեն օր Քրիստոսին պատարագում, և որ Նա փրկություն է ոչ միայն ողջերի, այլև ննջեցյալների [համար]: Դարձյալ, թե պատարագը մեռյալներից ում [համար] է փրկություն և ում համար՝ ոչ: Նաև պատարագի ընծաներն ումի՞ց և կամ ինչպիսի՞ օրինակով է վերցնում քահանան, իսկ ընծաներ տվողներն ինչ կամքով պիտի տան քահանային: Նաև, թե ի՞նչ խորհուրդ ունի ննջեցյալների [համար] քառասունք կատարելը:

Արդ, նախ պետք է իմանալ այս, թե ինչու հրաման ընդունեցինք պատարագել Քրիստոսին ամեն օր, ինչպես Ինքը Քրիստոս, Վերնատանը, Իր չարչարանքների խորհուրդն ավանդելիս, պատվիրեց Իր աշակերտներին՝ ասելով. «Այս արեք Իմ հիշատակի համար» (Ղուկ. ԻԲ 19):

Բազում են սրա պատճառները, բայց հասկանալի, համառոտ և կարճ այս իմացեք: Թեպետև Բանի գալստյամբ և Նրա չարչարանքներով ու մահվամբ մենք փրկվելով ազատվեցինք մեղքերի ծառայությունից և Նրա արյամբ կենդանացանք մահվան ապականությունից, սակայն քանի դեռ այս մարմնում ենք, ամեն օր, կամա թե ակամա, մարմնի կարիքներից դրդված և չարից խաբված՝ մեղանշում ենք, և ասվեց, թե՝ «Ով որ մեղանշի, նա էլ պիտի մեռնի» (Եզեկ. ԺԹ 3-4, 20): Ուրեմն Նա, մեր մեղքերի պատճառով, ամեն օր մարդասիրապես մեռնում է Իր անմեղությամբ և մեզ կենդանացնում Իր անմահությամբ՝ մեզ տալով փրկության դեղը՝ Իր սուրբ Մարմինն ու Արյունը, ինչպես ասում է Հովհաննեսը. «Աստծու Որդու արյունը մեզ սրբում է մեղքերից» (Ա Հովհ. Ա 7):

Եվ սա ոչ միայն ողջերի [համար] է փրկություն լինում, ովքեր հավատով են հաղորդվում, այլև՝ մեռյալների, ովքեր այս հույսով ու հավատով ննջեցին ի Քրիստոս: Որովհետև Քրիստոսի մահն ոչ միայն ողջերի համար եղավ փրկություն, այլև՝ մեռյալների, ինչպես ասում է Պետրոսը. «Գնաց ավետարանեց հոգիներին, որոնք դժոխքում էին» (Ա Պետր. Գ 19): Ինչպես այն ժամանակ Քրիստոսի չարչարանքն ու մահն ողջերին և մեռյալներին փրկություն բերեց, նույնպես և այժմ Նրա մահվան հիշատակումն ու [խորհրդի] կատարումը փրկություն է տալիս նաև մեռյալներին: Սակայն, պարզապես ոչ բոլորին, քանզի եթե սա այսպես կարծես, թե Քրիստոսին պատարագելն անխտիր փրկություն է բոլոր մեռյալներին, ուրեմն պատարագի կատարումը փրկություն կլիներ նաև հեթանոսներին ու անհավատներին նույնպես, և նրանց համար ևս պետք է պատարագել: Եվ քանի որ այս անհնար է, ուրեմն արժանի է քննել, թե որո՞նց համար է պետք պատարագ մատուցել և որոնց համար՝ ոչ:

Արդ, այսպես իմացիր, որ ոչ բոլոր մարդիկ են նմանօրինակ մեղքերում և հանցանքներում: Չնայած որ բոլորն էլ մեղանշեցին, սակայն ուրիշ են նրանք, ովքեր մեղքեր են գործում, իբրև չարից ակամա խաբվածներ, կամ էլ մարմնի կարիքներից դրդվածներ, ընկնում են շնության, սպանության, գողության, հարբեցողության, հայիոյության կամ այլ մոլությունների մեջ, բայց մոլության մեջ չեն ուրախանում, այլ ընդհակառակը՝ լալիս, ողբում ու նախատում են իրենց [անձերը] այն մեղքերի պատճառով, որ գործեցին: Եվ օրնիբուն շարունակ տանջվելով խղճմտանքից, նրանց տառապյալ անձերը գերի են դառնում տարակուսանքներին, ինչպես ասում է Դավիթը. «Գիշեր-ցերեկ շրջեցի վշտացած, քանզի հոգիս լցվեց տանջանքներով և մարմնիս համար բուժում չկա» (Սաղմ. ԼԷ 8-9), իսկ Պողոսն ասում է. «Իմ մարմնի անդամների մեջ տեսնում եմ այլ օրենք, որ պայքարում է իմ մտքերի օրենքներին հակառակ և ինձ գերի է դարձրել մեղքերի օրենքին» (Հռոմ. Է 23):

Ուրեմն, այսպիսի մարդիկ թեպետև միշտ չարչարվում են իրենց խղճմտանքից, սակայն իրենց չար սովորությունների և մարմնական հաճույքների պատճառով չեն կարողանում ետ դառնալ մեղքերից և ապաշխարել, և սատանան էլ, համաձայն իր սովորության, նրանց հաճելի է

դարձնում մեղանշական վիճակն ու հետաձգում ապաշխարությունը, և նրանց համար հանկարծակի է վրա հասնում այս կյանքից ելնելու [ժամը]: Իսկ այն ողորմելիներն ոչինչ չունենալով իրենց մեջ՝ մաս կամ ինչ-որ պաշար բարուց կամ առաքինություններից, այլ միայն մեղքերի պաշարները, որ կուտակեցին, այն ժամանակ դառնում և ապավինում են Քրիստոսի ողորմությանը և Նրա կամավոր մահվանը, զղջում են իրենց մեղքերի համար և խոստովանում հանցանքներն ու որպես հոգևոր պաշար են վերցնում Քրիստոսի մարմինն ու արյունը: Եվ այսպիսիների հույսն է Տիրոջից ողորմություն գտնելը: Եվ [Տերը քահանաներից] ընդունում է այն ամենը, ինչ որ անում են նրանց համար՝ աղոթք, պատարագ, ողորմություն:

Իսկ նրանք, ովքեր անխտիր թավալվում են մեղքերի և չարիքների մեջ և ո՛չ ցավում են, ո՛չ տրտմում և ո՛չ էլ բնավ հիշում դատաստանի օրն ու տանջանքների սարսափը, այլ ուրախությամբ, իբրև բարություն, չարիքներ են գործում և բնավ չեն զղջում կամ խոստովանում, այլ մեռած են մեղքերի և անօրենությունների մեջ, այսպիսիների համար ոչ միայն օգուտ չէ ողորմություն անելը կամ պատարագ մատուցելը, այլև ինքը՝ քահանան, եթե այսպիսիների համար նյութական ընծաներ կամ ողորմություն ընդունի և Աստծու առաջ աղոթքով ու պատարագով հիշատակի՝ իր անձի վրա դատաստան կընդունի և քահանայական կարգից պետք է զրկվի, ինչպես և ասում է սուրբ Դիոնիսիոսը¹: Իսկ եթե այսպիսի անգեղջնեղներն պատահի մահվան ժամին՝ մահճում զղջալ մեղքերը ու դառն արտասուքով չարիքները խոստովանել, քահանայի պարտքն է նրանց չզրկել աստվածային շնորհից՝ այլ հուսալ Քրիստոսի անոխակալությանը և Նրա անբավ քաղցրությանը, Ով ավագակին մի խոստովանության համար, թեպետև վերջին շնչում էր, Իր հետ դրախտի մեջ ընդունեց: Եվ դարձյալ առակավոր խոսքերով Տերն այս հույսը մեր առաջ է բերում տնտեսի օրինակով, ով թեպետև անիրավ էր, սակայն իր մտքում զղջաց և ուղիղ դատաստան տեսավ երկու պարտապանների միջև, այսինքն՝ հոգու և մարմնի, և գովաբանվեց Տիրոջից, քանզի իմաստությամբ գործեց: Նաև բարեկամի առակում, որ գիշերով բախեց դուռը, [թախանձողը] սաստիկ աղաչանքի համար ստացավ այն ամենը, ինչ կամեցավ (տե՛ս Դուկ. ԺԱ 5-8):

Բայց դու, ո՛վ քահանա՝ միջնորդ Աստծու և մարդու միջև, զգույշ եղիր քո անձի համար և անարժաններից և չզղջացող մեղավորներից նվերներ կամ ողորմության տուրք մի՛ վերցրու, ազահության կամ մարմնի ինչ-որ կարիքների պատճառով, որովհետև, ինչպես ասում է Եսայի մարգարեն, այն պիղծ ու գարշելի է Աստծու առաջ: Եվ դու մի՛ պղծվիր պղծություններով և դարձյալ այս բանում զգույշ եղիր, որովհետև տեսուչ ես կարգված ժողովրդի գլխին, քանզի պարտավոր ես ամեն օր պատվիրանի փողով նրանց ազդարարել դատաստանի ահը և դժոխքի տանջանքների սարսափը, և չդադարել միշտ նրանց խրատելուց և ուսուցանելուց, մանավանդ գիշեր-ցերեկ աղոթքներով և պաղատանքներով տքնել նրանց համար, և նրանց մահվանից հետո պատարագներով նրանց հաշտեցնել Աստծու հետ: Իսկ եթե սա անփութորեն թողնես, հաստատապես իմացի՛ր, որ նրանց արյունը Քրիստոս Թագավորը քո ձեռքից է պահանջելու, և ժողովրդի բոլոր տուրքերն ու նվերները, որոնք վերցնում ես, քեզ համար գողացված են համարվելու, իբրև ավագակների ու սպանողների կողմից արված զրկանքներ:

Եթե հավատացյալներից մեկը կամենա պատարագի համար քահանայի ձեռքը տալ ինչ-որ իր, պետք չէ դրա համար անհույս և հիմար մտքով հաշիվ պահանջել քահանայից, իբրև իրեն պարտականից, և ոչ ոք թող քահանայի հանդեպ ինքն իրեն երախտավոր չհամարի ու չմեծամտանա: Այլ տուրքը պետք է տալ այնպիսի հավատով, ինչպես եթե այն [տրվեր] Աստծուն

¹

և ոչ իբրև տուրք, այլ իբրև պարտքերի հատուցում վերցված շնորհների [դիմաց], ինչպես Աստծու բարիքներն ընդունողի գոհությունն ու շնորհակալությունը: Իսկ եթե մեկը չքավորության պատճառով չի կարող մեծ կամ շատ բան տալ, [այդուհանդերձ՝ տվողի] հավատքի պատճառով, Աստծու առաջ փոքրը մեծ է համարվում, ինչպես այրի կնոջ ողորմությունը, այսինքն՝ լուման: Եվ այդ հույսով ոչ միայն այդ քահանայի աղոթքից և պատարագից, այլև միաժամանակ ամբողջ տիեզերքում ուղղափառ քրիստոնեական եկեղեցիներից, որտեղ պատարագվում է Քրիստոս, բոլոր տեղերից մաս ու բաժին է ընդունում: Քանզի եթե հավատում ենք, թե մի է Քրիստոս, Ով պատարագվում է բոլոր [տուրք] սեղանների վրա, ապա սրան ևս պետք է հավատալ, թե նա, ով պատարագի համար նվեր տվեց մի եկեղեցուն և քահանային, փոխարենն իր համար վարձ է ընդունում համայն քրիստոնյա եկեղեցիներից, որտեղ պատարագվում է Քրիստոս: Թեպետև տարբեր քրիստոնյա ազգերը տարբեր ձևերով ու արարողություններով են պատարագում, սակայն նույն հացը և նույն բաժակն է, որ ամբողջ տիեզերքում, բոլոր քրիստոնեական եկեղեցիների սեղանների վրա սրբազործվում է Նույն Սուրբ Հոգով:

Իսկ եթե ասես, թե նրանցը խառնուրդ է՝ [հաց թթխմոր, և գինին ջրախառն], իսկ մերը՝ ոչ, իմացիր, ո՛վ եղբայր, ճշմարիտ են քո խոսքերը և ստույգ, որովհետև բոլոր Աստվածաշունչ Գրքերով ստուգված է, որ հացն անխմոր և բաժակը՝ [գինին]՝ անապակ պետք է [[իննեն]: Բայց դու նրանցը մի՛ հայհոյիր, որովհետև նրանց քննողն ու դատողն Աստված է, այլ դու քոնի մեջ հաստատուն մնա, որ խառնուրդով չհաղորդվես և դատապարտվես Աստծուց: Նաև իմացիր, թե մենք որտեղի՞ց ունենք այս սովորությունը, քանի որ մեր սուրբ լուսավորիչներից է՝ սուրբ Թադեոս Առաքյալից և սուրբ Գրիգոր Լուսավորչից: Որովհետև մեր Տեր Հիսուս Քրիստոս Վերնատան մեջ, ուր հացը վերցրեց, բաղարջ էր, իսկ գինին՝ անապակ, քանզի այս էր պատշաճում կուսածին մարմնին, որ առանց խառնուրդի էր: Եվ արդ, մերն ավելի գեղեցիկ և անուշահոտ է. հացն՝ անխմոր և բաժակը՝ անապակ:

Իսկ այժմ, թե ի՞նչ խորհուրդ ունի քառասուն օր պատարագելը, որ կատարում ենք ննջեցյալների [համար]: Սովորենք Աստվածաշունչ գրքից, նաև ստուգապատում պատգամագիրներից, թե հոգիները, որոնք ելնում են այս մարմնից, այստեղ պատերազմում են օդային դևերի [դեմ], ինչպես տեսավ Անտոնը տեսիլքում², նաև վկայում է առաքյալը, թե մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ, այլ՝ իշխանությունների, պետությունների ու այս խավարայինների հետ, որոնք գտնվում են երկնքի տակ (տե՛ս Եփես. Ձ 12): Դրա համար էլ քահանան պարտավոր է, հավատացյալներից որևէ մեկի մահանալու դեպքում քառասուն օր պատարագ մատուցել նրա համար, ինչպես և պատվիրեց Փիլիպպոս առաքյալն իր համար քառասուն օր շարունակ պատարագ մատուցել³: Իսկ եթե մեկ ուրիշը մեռնի, նրան ևս առաջինի հետ պետք է հիշատակել: Այնպես որ վնասակար ոչինչ չկա, եթե երկուսին կամ շատերին ևս մի օրվա պատարագում հիշատակի, քանի որ ոչ թե միայն մի անձի համար է պատարագվում Քրիստոս, այլ ամբողջ աշխարհի:

Այս պատճառով էլ սահմանվեց ամեն օր պատարագ մատուցել, որովհետև չկա օր, որում չլինի մարդու մահ, որի համար էլ պետք է ամեն օր պատարագ մատուցել: Բայց բազում խոչընդոտներ են լինում, որ քահանաները չեն կարողանում խորհրդի կանգնել բնական

² .
³ Տե՛ս «Թանգարան Հայկական Հին ու Նոր դպրութեանց» Գ. Անկևանոն գիրք Առաքելական, Վենետիկ, 1904, էջ 319:
57 4 06/15/11

կարիքների, Աղուհացի և Առաջավորաց պահքի օրերի [պատճառով], որովհետև օրինավոր չէ [այդ օրերին] պատարագել: Իսկ դրանից հետո, երբ պատարագելու ժամանակը գա, կարիք չկա թվի ու քանակի մասին հոգ տանել, այլ միայն այնքան, որքան կկարողանա կամ հնարավոր կլինի, թող չծուլանա կանգնել խորհրդին՝ մատուցելու աստվածային փրկագործությունը, որպեսզի նա չար ու վատ ծառաների հետ աստվածային գավիթից դուրս նետված չլինի:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՅՆ ՈՒ ԲԱԺԱԿԸ՝ [ԳԻՆԻՆ] ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԱՐՅԱՆ ՕՐԻՆԱԿԸ
ՉԷ, ԱՅԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՃՇՄԱՐԻՏ ՄԱՐՄԻՆՆ ՈՒ ԱՐՅՈՒՆՆ Է, ՈՐՈՒՄ ՇՆՈՐՀԸ ՉԻ ՊԱԿԱՍՈՒՄ
ԱՆԱՐԺԱՆ ՄԱՏՈՒՑՈՂԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Մեր Տեր և Աստված Հիսուս Քրիստոս, երբ իջավ սուրբ Կույս Աստվածածնի արգանդը, վերցրեց նրա արյունից և խառնեց Իր Աստվածության հետ, դարձավ ճշմարիտ մարդ և Աստված: Եվ մարմինը, որն առավ Կույսից, ճշմարտապես աստվածացավ, սակայն դրանից բնության թանձրությունը, ձևը և մյուս [հատկությունները] չփոխվեցին: Եվ նույն մարդացյալ Աստվածը, Վերնատանը, հինգշաբթի երեկոյան, վերցրեց հացն ու բաժակն Իր ձեռքը, որով ստեղծեց երկինքն ու երկիրը, և խոսեց նույն ձայնով, որով ասաց և ամեն ինչ եղավ, թե՛ «Այս է Իմ մարմինը և արյունը»: Թեպետ հացն ու բաժակն որակով չփոխվեցին մսի և արյան, սակայն աստվածային բնությունը խառնվելով նրանց հետ, աստվածացրեց նրանց, ինչպես և այն մարմինը, որն ընդունել էր սուրբ Կույսից: Նույնպես և այն հացն ու բաժակը, որոնք Նրա հրամանով [քահանան] վերցնում և դնում է սուրբ սեղանի վրա, ինչպես Քրիստոսի ձեռքերի վրա, քանի որ, ըստ սուրբ Դիոնեսիոսի, Հիսուսն է սեղանը: Եվ սրանք օրհնում ենք Քրիստոսի խաչի և մահվան պատմությամբ և Հորից հայցում խորհրդակատար Սուրբ Հոգին, որպեսզի իջնի և այն կատարի: Այն ժամանակ ըստ Հոր կամքի և Որդու հրամանի, որ ասաց, թե. «Այս արեք Իմ հիշատակի համար» (Ղուկ. ԻԲ 19), իջնում է Սուրբ Հոգին և [սրա] հետ խառնում Իր աստվածային գործությունն ու այն վերափոխում Քրիստոսի ճշմարիտ մարմնի և արյան: Ոչ թե սոսկ օրինակի, այլ ինչպես Նա է ճշմարիտ Աստված, առանց կասկածանքների, նույնպես և սա, համաձայն ճշմարիտ [այն] խոսքի, որ ասաց. «Դուք եք Իմ աշակերտները, որ Իմ փոխարեն երկրի վրա կարգեցի» (Հովհ. ԺԵ 16), «Այս արեք Իմ հիշատակի համար» (Ղուկ. ԻԲ 19): Սա անկասկած Քրիստոսի ճշմարիտ մարմինն ու արյունն է:

Իսկ եթե պատարագիչ քահանան անարժան մեկը լինի, այնուամենայնիվ, նրա պատճառով չի նվազի Սուրբ Հոգու շնորհը, որովհետև եթե քահանայի անարժանության պատճառով նվազեր շնորհը, և հացն ու բաժակը չաստվածանար, այն ժամանակ պատարագիչն ինչպե՞ս կդատապարտվի իբրև Տիրոջ մարմինն ու արյունը չգատորոշող (Ա Կորնթ. ԺԱ 29): Արդ, անգամ եթե քահանան անարժան լինի ու բոլոր մեղքերի մեջ շաղախված, դարձյալ՝ ճշմարտապես հացն ու բաժակը կաստվածանա, առանց որևէ կասկածանքի: Քանի որ քահանայական շնորհը, իբրև բնական [բան], անբաժանելի է քահանայից, ինչպես օրինակ հրեշտակները և մարդիկ, ովքեր իրենց իսկ ստեղծման օրից միահավասար բանականությունն ու անձնիշխանությունն Արարչից ստացան: Սակայն հրեշտակներն անմարմին լինելու պատճառով, իրենց անմահ բնությամբ առավել են մարդուց, որովհետև նրանք ամբողջապես անմահ ստեղծվեցին, իսկ մարդն եղավ մահվան և կյանքի միջնասահմանում: Եվ երբ մեղանչեցին, տեղից ու պատվից զրկվեցին, բայց ոչ բնական շնորհից, որ ունեին: Նույնպես և Սուրբ Հոգու բոլոր շնորհները, որոնք Եկեղեցում են մատակարարվում, իրենց բնությամբ անբաժանելի են ու մշտամնաց, ինչպես օրինակ

մկրտության շնորհը: Որովհետև թեպետ մկրտվածները բազում մեղքեր են գործում, անգամ երբ ուրացության մեջ են ընկնում և հետո զղջում, նրանց միայն ապաշխարել է հրամայվում, այլ ոչ թե մկրտվել, քանզի մի է մկրտությունը, ինչպես դավանում ենք Նիկիականում:

Այսպես իմացիր՝ քահանայական աստիճանը և շնորհներն անաղոտ և մշտամնաց են, դրա համար էլ աստվածային խորհուրդը նույն քահանայական շնորհն է խորհրդագործում, և ոչ թե մեղավոր քահանան: Որովհետև այլ է քահանան և այլ է քահանայական շնորհը, որը Սուրբ Հոգուց է: Քանզի նույն Սուրբ Հոգին իրեն նյութ է վերցնում քահանայական շնորհը և նրանով կատարում սուրբ և աստվածային խորհուրդը: Սրա համար էլ առավել պատժի և դատապարտության է արժանի այն եղկելին, ով մեղքերով շաղախված համարձակվեց մոտենալ սուրբ խորհրդի աստվածագործությանը. նա կրկնապատիկ ու եռապատիկ պատուհաս կբերի իր անձին: Նախ, որ մեղանչեց և չպատկառեց քահանայական շնորհից, որն ընդունել էր Սուրբ Հոգուց:

Եվ երկրորդ, որ նա շաղախված աշխարհիկ գործով, հանդգնեց մոտենալ աստվածագործությանը:

Երրորդ, որ ճաշակեց, որի համար էլ դատապարտվում է՝ իբրև Տիրոջ մարմինն ու արյունը չզատորոշող, ըստ խոսքի. «Ով որ ուտում և խմում է անարժանորեն, իր իսկ դատապարտությունն է ուտում և խմում», ասում է առաքյալը (տե՛ս Ա Կորնթ. ԺԱ 29):

Եվ եթե կամենում ես վկայությամբ հաստատել խոսքերը, ապա պատմություններում ասվում է, որ մի եպիսկոպոս շնանում է մի հրեա կնոջ հետ, որից հետո հանդգնությամբ պատարագ մատուցում: Եվ մի օր պատահում է, որ այդ կինը գնում է եկեղեցի և տեսնում, որ պատարագի ժամանակ մի հրեշտակ է ելնում խորանից ու եպիսկոպոսին տանելով կապում եկեղեցու սյուներից մեկին և ինքը գալով՝ մատուցում պատարագը: Երբ կինն եպիսկոպոսին պատմում է այդ տեսիլքը, եպիսկոպոսը զղջում է և ապաշխարում, իսկ կինը մկրտվելով դառնում քրիստոնյա, քանզի անչափ են Տիրոջ շնորհները, ինչպես հայտնում է առաքյալը (տե՛ս Հռովմ. ԺԱ 29) և չի հեռանում իր բնակության վայրից:

Այսուհետև, Հոգու օգնությամբ, գանք առաջիկա խորհրդի տեսությանը:

ԶԱՆԱԶԱՆ ԶԳԵՍՏՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Երբ քահանայապետներից կամ քահանաներից մեկը պատրաստվի պատարագ մատուցել, նախ պարտավոր է զգույշ լինել ամեն տեսակի մեղքերից և զերծ բոլոր տեսակի բժերից ու արատներից, և [[ինի] արդար, աստվածապաշտ, հեզ ու խոնարհ ամեն ինչում, լցված բարի գործերով ու օտարացած ամեն տեսակի չարիքներից: Նախ պետք է աստվածանալ ըստ կարողության և ապա՝ աստվածագործել: Նախ պետք է գնա իր խոստովանահոր մոտ և ծնկաչոք, բաց գլխով, խոստովանի իր բոլոր հանցանքները՝ գործով, խոսքով և խորհուրդներով:

Սարկավագները պատարագի հացը պատրաստելուց հետո պիտի մտնեն ավանդատուն, որտեղ գտնվում են պատարագի զգեստները և զգեստավորեն, յուրաքանչյուրն ըստ իր աստիճանի և պատվի: Պատրիարքի, Կաթողիկոսի, Արքեպիսկոպոսի, որ թարգմանվում է հայրերի հայր, զգեստները՝ պատմուճանը⁴, բազմախաչ շուրջառն⁵ ու եմփորոնն⁶ է՝

գարդարված հինգ խաչերով և գլխին խույր, իսկ եպիսկոպոսինը, որ թարգմանվում է տեսուչ՝ առանց խաչի շուրջառ և եմփոփոն: Քահանան պիտի հագնի պատմուճան և շուրջառ, ինչպես և եպիսկոպոսը, բայց երկու ուսերին պետք է ուրար⁷ զցի և ոչ եմփոփոն: Սարկավազը պետք է հագնի միայն պատմուճան առանց գոտու, և ուրար՝ ձախ ուսով: Կիսասարկավազը նույնպես պիտի հագնի պատմուճան առանց գոտու, սակայն ուրարը պետք է կրի բազկին և ոչ՝ ուսին: Իսկ դպիրները պետք է հագնեն միայն առանց գոտու պատմուճան և բոլորն էլ բաց գլխով կանգնեն սուրբ խորհրդի առջև:

Մեկնություն

Քահանայի ավանդատուն մտնելը, նախկին հանդերձի հանելը և այլ ավելի պայծառները հագնելը, այն է խորհրդանշում, որ մերկացանք հին մեղավոր մարդուց և հագանք նորը՝ Քրիստոսին և նորոգվեցինք սրբությամբ և արդարությամբ: Որովհետև, մինչ այդ ծածկաբար խոստովանությամբ, միայն Աստծուն ցույց տրվեց մտքի մաքրությունը, [իսկ] այժմ, տեսանելի զգեստների միջոցով, երևում է նաև մարդկանց: Որովհետև, ինչպես ասում է առաքյալը, մեզ պարտ է ոչ միայն Աստծու առաջ սուրբ երևալ, այլև մարդկանց առաջ (հմմտ. Եփես. Ա 4):

Իսկ բազմախաչ շուրջառը և հինգ խաչերով գարդարված եմփոփոնը, որոնք հագնում են կաթողիկոսը, պատրիարքը և արքեպիսկոպոսը, խորհրդանշում են նրանց ամբողջապես խաչվելն իրենց հինգ զգայարաններով, մեղքերի և աշխարհիկ ցանկությունների [համար] մեռնելը, ու միայն Քրիստոսի խաչն իրենց անձերում կրելը: Իսկ գլխի խույրը խորհրդանշում է իմաստության պսակը և փրկության սաղավարտը, որով խորհրդակատարը պայծառանում է: Քահանայի ուրարը, որը կրում է երկու ուսերով, ցույց է տալիս Քրիստոսի Ավետարանի քաղցր լուծը:

Սարկավազի միայն ձախ ուսին ուրարի զցվելը, ցույց է տալիս նրա դեռևս տկար լինելը և Քրիստոսի օրենքների լուծը կրելու բովանդակ կարողությունը չունենալը, և սարկավազը միայն տկար անդամների մի մասով է կարողանում մոտենալ պատվիրանին, որը ձախ ուսն է: Իսկ կիսասարկավազը, ով ձախ բազկին է կրում ուրարը, աներևութապես [ցույց] է տալիս ներքին մարդու հասակի տղայությունը, որպես թե, [լոկ] փոքր ինչ չափով միայն կարողացավ հավել պատվիրանի գործին: Սարկավազի և դպիրների գոտելույծ պատմուճանը խորհրդանշում է Աստծու տան մեջ նրանց իշխանությունը, քանզի գոտին ծառայական⁸ է, ինչպես նաև նափորտը⁹, որ հագնում է քահանան արծակած գոտիով: Իսկ բաց գլխով աղոթք մատուցելը ցույց է տալիս սրտի համարձակությունն ու պարզությունը:

ԸՆՆԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՍՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բայց ոմանք հակառակվում են և ավելորդ ու անօգուտ համարում այս զգեստների բարի սովորությունը, քանզի ասում են, թե Աստված միայն սրտի սրբությունն է պահանջում: Ո՛վ եղբայր, բարի է ասածդ, բայց որքան [ժամանակ] այստեղ՝ այս մարմնի մեջ ենք, առանց մարմնական նյութերի և զգալի նշանների, անհնար է մեզ մոտենալ աննյութ Աստծուն, ինչպես և հնարավոր չէ առանց ջրի մկրտության՝ մաքրություն, կամ առանց մեռնի՝ Հոգի ստանալ, կամ առանց Եկեղեցու, [սուրբ] սեղանի, հացի ու բաժակի՝ պատարագ մատուցել: Արդ, եթե սրանք բոլորը զգալի նյութեր են՝ հարկավոր ու պիտանի, և ոչ միայն [սրանք], այլ և խնկարկությունը, լուսավորությունն ու այլ սույնպիսիները, նմանապես և քահանայական զգեստները, ինչպես ասվեց, հարկավոր են և խորհրդին պիտանի: Իսկ եթե ասես, թե զգեստների պայծառության հետ սատանան պճնամոլության և մարդահաճության ախտ է խառնում, ապա նույն ախտը նաև ողորմության հետ էլ կարող է խառնել, ինչպես նաև՝ աղոթքի, պահեցողության և բոլոր բարեգործությունների հետ: Ինչ էլ անեն մարդիկ, միևնույն է, սատանան մարդահաճության և փառասիրության ախտով պատերազմում է [նրանց հետ]: Իսկ մենք ոչ թե հրաման առանք բարեգործությունից հեռու մնալ, այլ ախտի դեմ պայքարել:

Քահանայական զգեստը կրի՛ր Աստծու փառքի համար և ոչ թե քո անձի փառքի համար, և արհաբար մաքառի՛ր փառասիրության ախտի դեմ, այսպես և բոլոր առաքինություններում: Եթե փիլոնոս համարում ես քահանայական զգեստ, ապա քեզ պարտ չէ, իբրև ամենօրյա զգեստ, գիշեր-ցերեկ միշտ կրել և բոլոր գործերն անխտիր դրանով վարել, նաև երազախաբությունների և բոլոր խառնակությունների մեջ առանց խղճի խայթի կլինես փիլոնովո: Ղարծյալ՝ եթե այն քահանայական զգեստ ես համարում և [դրանով] մոտենում աստվածագործության խորհրդին, ապա դա մեծ ամբարշտություն է, [փիլոնով զգեստավորված ամեն տեսակի գործ անելը], նույնիսկ եթե աղքատության պատճառով ես դա անում: Արդ, ես այն չեմ ասում, թե պետք է կերպասից կամ թե մեկ այլ թանկագին նյութից զգեստը լինի, այլ միայն այն, թե ինչ նյութից էլ որ լինի, միայն պատշաճող զգեստ լինի: Եվ կամ ինչո՞ւ ձեզ վայելուչ չի թվում սրբության զգեստով մոտենալ սրբությունների սրբությանը և ոչ թե սովորական զգեստներով: Եվ դու սա մի համարիր նոր ու [մարդկանցից] ներմուծված սովորություն, որովհետև Ինքն Աստված [Հին Ուխտում] Մովսեսին հրամայեց վերցնել վայելուչ և պայծառ զգեստներ և դրանցով զգեստավորված առաջին ու մեծ քահանայապետ Ահարոնը խորանում սրբագործում էր ժողովրդին: Իսկ Ահարոնի որդիները՝ Նաբաթը և Աբիուդը, երբ անարժանաբար մտան խորան՝ գինուց արբած, հուրը բուրվառից ելնելով այրեց նրանց, բայց քահանայական զգեստներին, որ նրանք հագել էին, դրանց հուրը չհամարձակվեց մոտենալ (տե՛ս Ղևտ. Ժ 1-2): Եզեկիել մարգարեն հրեշտակապետին տեսավ քահանայական զգեստներով զարդարված, ինչպես և ասում էր, թե՝ հագել էր պատմուճան (տե՛ս Եզեկ. Թ 1-3): Իսկ Նորում, ինչպես հայտնում է պատմությունը, առաջին եպիսկոպոս՝ Հակոբոս Տյառնեղբայրը միշտ սպիտակ հանդերձով էր սպասավորում Տիրոջը¹⁰: Իսկ սուրբ Բագրատը՝ Պետրոս առաքյալի աշակերտը, քահանայական եմփիորոնով, իբրև վառվող բոց, երևում է քաղաքապետ Ոնիփատոսին¹¹: Նաև Մեծն Բասիլիոսը¹², և բոլոր քահանայապետներից ու երեցներից և ոչ մեկը չհամարձակվեց առանց քահանայական զգեստների մոտենալ որևէ խորհրդի: Նույնպես և մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչը և նրա բոլոր թոռները սուրբ Խորհուրդը կատարում էին քահանայական զգեստներով:

Իսկ ով չի ընդունում գլխաբաց լինելը, նա Պողոսից թող սովորի նույնի հարկավորությունը, [քանի որ նա] ոչ միայն օրինադրում է բանալը, այլև չբացողներին սաստում է՝ ասելով. «Ով որ աղոթքի կանգնի կամ մարգարեանա ու գլուխը ծածկած պահի, անպատվում է իր գլուխ Քրիստոսին» (Ա Կորնթ. ԺԱ 4):

Ի՞նչն է սրանից ավելի մեծ հանցանք, երբ չնչին բաների համար անպատվում ենք մեր փառքը՝ Քրիստոսին: Ուրեմն, այս է սրա խորհուրդը, որ մեր ամեն ինչը հայտնի և բաց է ծածկագետ Աստծուն: Ղարծյալ՝ այսպես էր Քրիստոս խաչի վրա, և մենք էլ բաց գլխով, մեր ձեռքերը տարածելով՝ Նրան ենք նմանվում: Բայց կինը չպետք է բանա գլուխը, այլ ծածկի, առավելապես Եկեղեցում: Իսկ որ այժմ աբեղաներն իրենց բոլոր աղոթքների [ժամանակ] չեն բացում իրենց գլուխները, պատճառը հետևյալն է: Որովհետև աբեղայությունը կրոնավորություն է, իսկ կրոնավորը պետք է իր բոլոր զգայարանները ծածուկ պահի: Բայց պատարագի ժամանակ, ով էլ լինի պատարագիչը, թե՛ քահանա, թե՛ եպիսկոպոս և թե՛ մեկ ուրիշը, պարտավոր է բանալ գլուխը: Նախ բնությունն է սովորեցնում քեզ այս, քանզի սա բնական է, որովհետև բոլոր ազգերն էլ, ոչ միայն քրիստոնյաները, նույնիսկ անհավատներն էլ, բաց գլխով են կանգնում աղոթքի:

Ա մաս
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆ ԶԳԵՍՏԱԿՈՐՄԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՉ ՔԱՀԱՆԱՅԻ

Ի՞ՆՉ ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒՆԻ ՔԱՀԱՆԱՅԻ ՍԱՂՄՈՍՆ ՈՒ ԱՂՈԹՔԸ ԶԳԵՍՏԱԿՈՐՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ

Եկեղեցին Երկնավոր Թագավորի տունն ու բնակության [վայրն] է, իսկ քահանաների ու սարկավագների դասերն իբրև իշխաններ են կարգված Աստծու տան մեջ, և ինչպես պատշաճ չէ իշխանին կանգնել թագավորի առաջ առանց իշխանական կեցվածքի, այսպես և սրանք, նախ՝ ավանդատանն իշխանական ձևով զգեստներով զարդարվում են և ապա գալիս Թագավոր Քրիստոսի առջև: Եվ հանդերձների զգեստավորության ժամանակ ասում են խորհրդին պատշաճ սաղմոս. «Տեր, հիշիր Դավթին և նրա բոլոր հեգությունները» (Սաղմ. ՃԼԱ 1): Սաղմոսի բոլոր խոսքերն այս են նշանակում, քանզի Հորը հիշեցնում են Որդու, (Որին Դավիթ է կոչում) անչափ և անհաս հեգությունը: Եվ թե ո՞րն է Նրա հեգությունը. այս է, որ ասում է. «Երդվեց Տիրոջը և ուխտ դրեց Հակոբի Աստծու հետ» (Սաղմ. ՃԼԱ 2): Իսկ երդումը Նրա Որդու տնօրինության գործն է, որ չմտավ վարագույրի ներքին կողմը և չհանգստացավ հայրենի փառքի մահճին, որ Նրանից անբաժանելի էր, ու ոչ էլ ննջեց, և դադարեց իր արարածներին խնամելուց, մինչև գտավ մարդիկ, որպես [օթևանի] տեղ Իր և Հոր կամքի հանգստի համար: Ու այս օրինակով մյուս սաղմոսներն էլ քննիր հերթականությամբ: Իսկ սարկավագը, երբ Սաղմոսից իմանում է Աստծու պարգևների այսքան առատության մասին, հրաման է տալիս ժողովրդին՝ ասելով. «Ո՛վ եղբայրներ, մարգարեների միջոցով տեղեկացանք, թե որչափ Աստծու գթությունը Քրիստոսի միջոցով հեղվեց մեր վրա: Ուրեմն, քաջալերվելով այս հույսով և հավատով միաբանվելով Տիրոջից խնդրենք, որ իր ողորմության շնորհը հեղի մեր վրա»:

Մեկնություն

Այսինքն՝ լսեցիք, որ Տերը խոստացել է. «Ձեզնից երկու միաբանվածներ, ինչ որ խնդրեն հավատով՝ կստանան» (Մատթ. ԺԸ 19): Արդ, մենք էլ համախմբված մարմնով, միաբանությամբ լծվենք հոգու իղձերին ու հավատքի կամքին և Տիրոջից խնդրենք մեզ համար Նրա ողորմության շնորհը, ով կարող է մեր խնդրվածքներն ի բարին տնօրինել:

«Եվ մեր ամենակալ Տեր Աստվածը կապրեցնի՝ և կողորմի՝ մեզ»:

Եվ սարկավագը, նրանց իբրև վերակացու և դաստիարակ աղոթքների ճանապարհը սովորեցնելուց հետո, առ Աստված է ուղղում իր խոսքը՝ ասելով. [«Ամենակալ Տեր աստված մեր, ապրեցրու՝ և ողորմիր»]: Այսինքն՝ «Տեր, որ բոլորին տիրում ես և բոլորին նախախնամում, ապրեցրու՝ մեզ [Քո] ողորմությամբ՝ կործանիչ մեղքերից և սայթաքեցնող խորհուրդներից»: Իսկ եղբայրներն իմանալով, որ այս է արժանի խնդրել Աստծուց՝ այսինքն՝ ապրեցնելը, միանում են խոսքերի վարդապետին ու նույնը կրկնում՝ ասելով. «Ապրեցրու՝ Տեր»: Ասելով, որ՝ երբ Դու, խնամքով պարսպապատելով ապրեցնում ես, չկա մեկը, որ համարձակվի կործանել:

«Ողորմիր մեզ Տեր Աստված Քո մեծ ողորմությամբ»: Այս և սրա նման խոսքերի [զորության իմաստը] սովորի վերևում հիշված սարկավագի քարոզից:

Ապա քահանան միանում է նրանց աղոթքներին և ընտանեբար խոսում Քրիստոսի հետ՝ ասելով. «Տեր մեր Հիսուս Քրիստոս, Դու, որ հագել ես լույսն իբրև հանդերձ, անձառելի խոնարհությամբ երևացիր երկրի վրա և շրջեցիր մարդկանց մեջ»:

Մեկնություն

Մեծ և անչափ է Քրիստոսի խոնարհությունը, քանզի երկնքի և երկրի Արարիչը մարդացավ և շրջեց մարդկանց մեջ:

«Որ ճշմարիտ, հավիտենական քահանայապետ եղար ըստ Մելքիսեդեկի կարգի և զարդարեցիր Քո սուրբ Եկեղեցին»: Մելքիսեդեկի կարգը՝ մշտնջենավոր քահանայությունն է (տե՛ս Եբր. Զ 20), որով զարդարվեց Եկեղեցին Սուրբ Հոգու պեսպես շնորհներով (տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 8):

«Ամենակալ Տեր, որ մեզ պարզեցիր հազնելու նույն երկնային հանդերձը»: Երկնային հանդերձը, որով զարդարվեցինք, Սուրբ Հոգու շնորհներն է ասում:

«Այս ժամին ինձ՝ Քո անպիտան ծառային, որ համարձակվում և մոտենում եմ Քո փառքի նույն հոգևոր պաշտոնին, ևս արժանացրու, որպեսզի մերկանամ իմ բոլոր ամբարշտություններից, որը պղծության զգեստն է, և Քո լույսով զարդարվեմ»: Խոնարհությամբ աղերսում է Որդուն՝ ասելով. թեպետև անպիտան եմ Քո ծառայության համար, սակայն Դու արժանավորիր ինձ այս հոգևոր պաշտամունքին, որովհետև սա մարմնական չէ, ինչպես հրեաներինը, որպեսզի մերկանամ այս թխատեսակ մեղքերից, և մարմնական այս հանդերձը հազնելիս, հոգիս զարդարվի իմաստության և սրբության լույսով:

«Հեռացրու ինձանից իմ չարությունները և թոթափիր իմ հանցանքները, որպեսզի արժանի լինեմ Քեզանից բխող գալիք Լույսիդ»: Դարձյալ նույնն է կրկնում, որ այժմ ասաց:

«Շնորհիր ինձ քահանայական փառքով մտնել Քո սրբությունների պաշտամունքի մեջ նրանց հետ, ովքեր անմեղությամբ պահեցին Քո պատվիրանները»: Խնդրում է, որպեսզի մաքուր մտքով մտնի երկինք առ Աստված և մարմնով սեղանի պաշտամունքի մեջ լինի նրանց հետ միասին, ովքեր իրենից առաջ անմեղ խորհրդով սույնը պաշտեցին, [որպեսզի] նրանց հետ ինքը ևս արժանի լինի:

«Որպեսզի ես էլ իմաստուն կույսերի հետ պատրաստ գտնվեմ երկնային առազաստին՝ փառավորելու Քեզ, Քրիստո՛ս, որ վերցրեցիր բոլորի մեղքերը»: Երկնավոր առազաստը, այժմ աստվածային խորանն է կոչում, իսկ իմաստուն կույսերին, որպես իր համադասակիցների՝ Եկեղեցու ժառանգավորներին:

«Որովհետև Դու ես մեր անձերի սրբությունը և Քեզ՝ Բարերար Աստծուդ, վայելում է փառքը, իշխանությունը և պատիվը հավիտյանս հավիտենից»:

ՆԱԽԱՄՈՒՏ

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ

(ԲԱՆ ԼԳ ՀԱՏՎԱԾ Դ և Ե)

ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԶԳԵՍԱՎՈՐԿԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ ԱՂՈԹԵԼԸ

[Պատարագիչը] զգեստավորվելուց հետո, գալիս է սուրբ սեղանի առաջ և երկրպագելով, աղոթք է ասում Սուրբ Հոգուն, որն ասվել է մեր հայր Սուրբ Գրիգոր Նարեկացու [կողմից]¹³:

Մեկնություն

Քրիստոսին աղոթելուց հետո, քահանայի դառնալը և Սուրբ Հոգուն աղոթելն այն է հայտնի դարձնում, որ Քրիստոսից հետո, հրեշտակների միջնորդությամբ, Սուրբ Հոգին եղավ մեզ նախախնամող և բոլոր եկեղեցական գործերի կատարող, որի պատճառով էլ Քրիստոսից սրբություն խնդրելուց հետո, մոտենում է Հոգուն աղերսելու [պահը], որպեսզի չարգելի իր գործակցությունն առաջիկա գործում, և [քահանան] երեսի վրա ընկնելով՝ մատուցում է իր աղոթքներ, որպես թե ասելով. «Քանի դեռ Քեզնից չենք զորացած, գլխիկոր ենք, իսկ երբ զորանում ենք, Քեզանով համարձակությամբ մեր ձեռքերը և գլուխը դեպի Քեզ ենք բարձրացնում»:

Աղոթք

«Ով ամենակալ բարերար և մարդասեր Աստված բոլորի, հորինող երևելիների և աներևույթների, փրկող և հաստատող, խնամող և խաղաղարար Հոր հզոր Հոգի»:

Մեկնություն

Այս ամենով ցույց է տալիս Սուրբ Հոգուն, [որպես] Աստված և հավասար Հորը և Որդուն, և արարածների Արարիչ ու խնամող:

«Հանդիման լինելով Քեզ Ահավորիդ, հեծության ձայնով, բազկատարած մաղթանքով հայցում ենք Քեզանից, մոտենում ենք մեծ դողությամբ, սաստիկ երկյուղով նախ մատուցելու այս բանավոր պատարագը, Քո անզննին Տերությանը»: Կարծես հոգու աչքերով նայելով, տեսնում է մեծ ու սուկալի գահի [վրա նստած] Թագավորին, Ում առջև է [ինքը], և զարհուրելով դողում է Նրա ահից, որի համար նախ այսպիսի աղերս է անում Նրա առաջ:

«Իբրև Աթոռակցի, Փառակցի և Արարչակցի՝ Քո հայրենի անկապույտ պատվիդ»: Սուրբ Հոգուն կոչում է Հոր Աթոռակցից, Փառակցից և Արարչակցից, Ումից անկապույտ, այսինքն՝ անկողոպտելի է մնում այսպիսի պատիվը:

«Եվ Էմմանուելի՝ Հոր՝ Քեզ Առաքողի, բոլորի Փրկչի, Կենդանատուի և ամենայնի Արարչի, ամենակատար կամքի խորածածկ խորհուրդները Քննողի»: Հոգին, Ում Էմմանուելն առաքեց, Հոր խորհուրդների Քննող է:

«Քո միջոցով մեզ ծանուցվեց միասնական Աստվածությանդ երեք Անձնավորությունները, որոնցից Մեկն էլ Դու ես ճանաչվում, Ո՛վ Անհասանելի»: Որդին Հոգիով հայտնեց մեզ Երրորդության իմացությունը:

«Քեզնով և Քո միջոցով նահապետական տոհմի առաջին շառավիղները՝ տեսանողներ, անվանակոչվածները, անցյալն ու գալիքները, եղածներն ու չգոյացածները, անստվերական բարբառով Խոսքը վերապատմեցին»: Մարգարեների մասին է ասում, ովքեր սկզբնավորվեցին Աբրահամ նահապետից, և չկատարվածներն իբրև կատարված տեսան ու պատմեցին:

«Աստծու Հոգի՛, Մովսեսի կողմից քարոզված անպարագիր Ձորություն, որ ջրերի վրա Քո գնալուց ահեղ շրջարկությամբ տածողական թևապարփակ պաշտպանությամբ գթասիրելով նոր ծնվածներին, ավազանի խորհուրդը ծանուցեցիր»: Այն է ասում, ինչ ասաց Մովսեսը. «Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրա» (Ծննդ. Ա 2): [Այս խոսքը] ցույց է տալիս, որ Նա Իր խնամող թևերով, կենդանացնող զորությունը ջրերի վրա դրեց, որն օրինակն էր ավազանի խորհրդի, քանզի ինչպես այն ժամանակ Հոգու շրջելով կենդանիներ էին ծնվում ջրերից, նույնպես և այժմ, նույն Աստծու Հոգով մարդիկ են ծնվում հավիտենական կյանքի համար:

«Որի նմանությամբ նախքան ջրային հաստատության վերջին վարագույրիդ պատրաստելը, տիրական կարողությամբ ոչնչից հորինեցիր բոլոր էությունների և գոյությունների բովանդակ

բնությունը»: Ավագանի խորհուրդի համար է ասում, թե նախքան ջրեղեն կամարի հաստատելը, որ ջրային հաստատություն և վերջին վարագույր է կոչում, մկրտության խորհուրդը՝ Հոգով պատկերվեց:

«Քեզանից եղածները Քեզնով են ստեղծվում հարության նորոգությամբ, այն ժամանակ, որ վերջին օրն է այս կյանքի և առաջին օրը կենդանիների երկրի»: Մեռելների հարությունը Սուրբ Հոգով է լինում, ինչպես և ասում է Դավիթը. «Ուղարկում ես Քո Հոգին և վերաստեղծում նրանց ու նորոգում երկրի երեսը» (Սաղմ. ՃԳ 30):

«Քո ազգակիցը, և Հոր էակիցը՝ Անդրանիկ Որդին մեր կերպարանքն առած Քեզ հնազանդվեց, ինչպես և Իր Հորը, կամքի միությամբ»: Որդու մարդանալը, խաչվելը և մյուս բոլորի հանձն առնելը նշանակում է հնազանդություն Հորը և Հոգուն, քանզի մարդկանց փրկության համար, որ Հայրն ու Հոգին էին կամենում, Որդին եկավ և գործով մեզ համար կատարեց:

«Քեզ ավետարանեց Ճշմարիտ Աստված, հավասար և համագո Իր Հզոր Հորը, և Քո դեմ հայիոյությունն անքավելի մեղք հայտարարեց, և Քեզ հակառակողների՝ իբրև աստվածամարտների, չարախոս բերանները փակեց, մինչդեռ Իր դեմ եղած մեղքը ներեց՝ Արդարը, Անարատը և ամենքի Գտնողը»: Քանզի ասաց, եթե մեկն Որդուն մի բան ասի, նրան կներվի, բայց ով որ Սուրբ Հոգուն հայիոյի, չի ներվի (տե՛ս Մատթ. ԺԲ 32), ու սրանով մեզ ցույց տվեց Հոգու Աստվածությունը:

«Որ մատնվեց մեր մեղքերի համար և հարություն առավ մեզ արդարացնելու համար»: Պարզ է, որ խոսքն Որդու մասին է:

«Նրան փառք Քո միջոցով և Քեզ բարեբանություն ամենակալ Հոր հետ»: Հոգով՝ Որդուն և Որդիով՝ Հոգուն, փառավորում ենք հավիտյանս հավիտենից:

«Դարձյալ կրկնում են խոսքերը, նույն կարգով, մինչև որ լույսի վերահայեցողության վստահությունը հրաշապես ազդված հայտնվի՝ վերստին ավետարանելու նույն խաղաղությունը»: Մինչև այստեղ ասում է, թե՛ մտքով հայեցի վերև՝ Քո իմաստության լույսին, և թող նույն լույսի զորությունը հրաշապես ազդելով հայտնվի մտքիս մեջ, որպեսզի մտքերիս խռովությունը վերցնելով, վերստին դարձնի նույն խաղաղությամբ:

«Ամբողջ էությամբ, արտասովալից հառաչանքով՝ աղաչում ենք փառավորյալ Արարչությանդ, անեղծ, անստեղծ, անժամանակ և գթացող Հոգուդ»: Որովհետև արտասուքն է, որ լուսավորում է հոգու աչքերը և հառաչանքն է, որ Քրիստոսի սիրո բոցը, աղերսական ձայնով և արտասովաթոր մորմոքումով ընծայում է Աստծուն:

«Որ մեր անմռունչ հեծությամբ, միշտ բարեխոս ես մեզ համար Քո ողորմած Հոր առջև»: Քանզի Հոգին մեր համար բարեխոս է (տե՛ս Հռոմ. Ը 26), ինչպես ասում է առաքյալը: Քանի որ, երբ մեր սրտերում անմռունչ հեծեծում ենք, Սուրբ Հոգին տեսնում է մեր սրտի լցվելը և այն մատուցում Հորն ու մեզ համար բարեխոսում:

«Որ սրբերին պահպանում ես և մեղավորներին մաքրում, և Բարձրյալ Հոր կենդանի և կեցուցիչ կամքի տաճարներ կառուցում»: Քանզի Սուրբ Հոգին է, որ սրբերին անվնաս է պահում, և մեղավորների զղջումներին ապաշխարանք տալիս, որով և մաքրվում են:

«Արդ, ազատիր մեզ այն բոլոր անմաքուր գործերից, որոնք հաճելի չեն Քո բնականությանը»: Որովհետև Սուրբ Հոգին չի հոժարում բնակվել անմաքուրների մեջ:

«Եվ թող Քո շնորհների լույսի շողերը չհանգչի մեր մտքի աչքերի տեսողությունից»: Շնորհների լույս է կոչում Սուրբ Հոգու զանազան շնորհները: Հայցում է, որ նրանք չհանգչեն հոգու տեսողությունից:

«Որովհետև սովորեցինք, որ Դու միանում ես մեզ, [մեր] ընտիր վարքի և խնկաբույր աղոթքի միջոցով»: Արդարև ընտիր, անուշահոտ վարքի և աղոթքի միջոցով է մեզ միանում Սուրբ Հոգին:

«Եվ Որովհետև Երրորդությունից մեկը պատարագվում է և մյուսն ընդունում՝ հաշտվելով մեզ հետ Իր Անդրանիկի հաշտարար արյունով: Դու՛ ընդունիր մեր պաղատանքները և մեզ համար պատվական ու ամենապատրաստ օթևաններ հարդարի՛ր՝ վայելելու համար Երկնավոր Գառի ճաշակունը»: Որդին պատարագվում է, Հայրը հոժարում, իսկ Սուրբ Հոգին, որպես Հոր և Որդու կամակից, մեզ սրբելով պատրաստում է, ճաշակելու համար Ամսահ Գառին:

«Եվ առանց պատժի, դատապարտության ընդունելու նոր փրկություն, կյանքի անմահացուցիչ այս մանանան, և թող այս հրով հալվի մեր գայթակղությունը, ինչպես մարգարեինը՝ ունելիով մատուցված կենդանախարույկ կայծակով¹⁴»: Մեծ երկյուղի մեջ է, որպեսզի չլինի թե այս անմահության դեղը մահվան առիթ լինի, որի համար հայցում է, որպեսզի աստվածային սուրբ խորհրդի հրով հալչի մեղքերի գայթակղությունը, ինչպես որ մարգարեինը՝ աստվածային կրակից:

«Քանզի այս ամենով Քո գթությունն է քարոզվում, ինչպես Աստծու Որդիով՝ Հոր քաղցրությունը»: Քանզի ինչպես Որդին իր շնորհով ինչ որ արեց, Հոր քաղցրությունը ցույց տվեց, նույնպես և Դու՛ Տեր, մեզ սրբելով, Քո անունը փառավորիր:

«Ով անառակ որդուն մոտեցրեց հայրենի ժառանգությանը և պոռնիկներին առաջնորդեց դեպի արդարների երանության երկնային արքայություն»: Մեջտեղ բերելով Քրիստոսի ողորմությունը, աղերսում է Հոգուն՝ ասելով, թե ինչպես Որդին նրանց ծրիաբար արդարացրեց, այնպես և Դու ինձ ողորմիր:

«Այո՛, այո՛, ես ևս նրանցից մեկն եմ, ինձ ևս ընդունիր նրանց հետ՝ իբրև մեծ մարդասիրությանդ կարոտի՝ Քո շնորհներով ապրողիս և Քրիստոսի արյամբ գնվածիս, որպեսզի այս ամենով, ամեն ինչում ճանաչվի Քո մարդասիրությունը»: Դարձյալ թախանձանքով աղաչում է Հոգուն՝ ասելով, [թե] ինչպես Որդին պոռնիկի նկատմամբ մարդասեր գտնվեց, և անառակ որդուն Հայրն ընդունեց, այսպես և Դու՛ իմ նկատմամբ մարդասեր գտնվիր, որ նման եմ նրանց: Քրիստոս [Իր] արյունով գնեց ինձ, սակայն ես նորից գերվեցի, այսուհետև կարոտ եմ Քո շնորհին ու օգնությանը, որն ավանդեց ինձ պահել. ուրեմն Քո ողորմությամբ երկնավորների ու երկրավորների հանդեպ Քո մարդասիրությունը հայտնի ինձանով և սրանով փառք ստացիր ամենքից:

«Համապատվաբար Հոր հետ փառավորվելով՝ գովաբանելու մի կամքով և մի գովելի իշխանությամբ, որովհետև Քոնն է գթությունը, կարողությունը, մարդասիրությունը, գրությունն ու փառքը, հավիտյանս հավիտենից. ամեն»:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քահանան գալիս է ընծայարանի խորանի առջև, ում նախասարկավազը մատուցում է նշխարը, և քահանան վերցնելով [այն] դնում է մաղզմայի¹⁵ վրա. ասելով՝ «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հիշատակի համար»:

Քահանան գինին վերցնելով, լցնում է սկիհի մեջ, ասելով՝ «Մեր Տեր Աստծու և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի փրկագործ տնօրինության հիշատակի համար»: Քրիստոսի հիշատակ է կոչում հացն ու բաժակը, ըստ Քրիստոսի ճշմարիտ խոսքի, որ ասաց, թե այս արեք Իմ հիշատակի համար (Ղուկ. ԻԲ 19), որպես թե, Հորը և Աստծուն հիշեցնում ենք Իր Որդու՝ Հիսուսի մահը: Ինչպես օրինակ, երբ մեկը բարկացած է մյուսի վրա, ինչ որ հանցանքների պատճառով, և վերջինս աղաչում է նրան ու հիշեցնում նրա սիրելի որդու մահը, այսպես և մենք: Միաժնի մահն ու չարչարանքը հիշում ենք Իր երկնավոր Հոր առաջ, Ով բարկացավ մեզ [վրա], մեր մեղքերի պատճառով և Նրա ողորմության գուրջը շարժում մեր հանդեպ:

Եվ քահանան ծածուկ ասում է Հովհան Ոսկեբերանի աղոթքը. «Տեր Աստված մեր, որ երկնավոր Հացդ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որպես ամբողջ աշխարհի Կերակուր ուղարկեցիր իբրև Փրկիչ, կյանք տվող և Բարերար՝ օրհնելու և սրբելու մեզ»:

Աղոթում է Հորը, ասելով՝ Դու, Հայր, ողորմեցիր և Քո Որդուն, Ով Իրեն երկնային Հաց անվանեց, ուղարկեցիր մեզ համար որպես Փրկություն և Սրբություն:

«Դու Ինքդ Տեր, օրհնիր այժմ այս ընծան և ընդունիր սա երկնային Քո սեղանի վրա»: Եվ այժմ, ասում է, օրհնիր այս նյութը, որը դրեցինք Քո առաջ և արժանի արա սա ընդունել երկնային սեղանի վրա, այսինքն՝ սուրբ խորանում, կամ իմանալի [խորանում], որ երկնքում է:

«Իբրև բարերար և մարդասեր հիշիր մատուցողիս և [նրանց], որոնց համար է մատուցվում, իսկ մեզ էլ անդատապարտ պահիր Քո աստվածային խորհրդի քահանայագործության մեջ»: Երեք բան է խնդրում. առաջին՝ որ սա լինի փրկություն պատարագ մատուցողների [համար], որոնք քահանայական դասերն են, երկրորդ՝ որոնց համար պատարագվում է [Քրիստոս], այսինքն՝ աշխարհի: Եվ երրորդ՝ որպեսզի ինքը [քահանան] անդատապարտ մնա աստվածային խորհրդի քահանայագործության մեջ:

«Որովհետև սուրբ և փառավոր է Հոր, Որդու և Սուրբ Հոգուդ փառքերի ամենապատիվ մեծ վայելչությունը. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Եվ ապա քահանան մոտենալով ծածկում է [սկիհը] քողով, սարկավազի հետ սաղմոս ասելով՝ «Տերը թագավորեց, վայելչություն հագավ»: [Սարկավազը] բուրվառը տալիս է քահանային կանգնելով նրա կողքին:

Սարկավազ՝ թարգմանվում է պաշտոնյա ու սպասավոր, և սա սպասավոր է ոչ թե մարդու համար, այլ՝ Աստծու և Նրա սեղանի ու Խոսքի: Սա Ստեփաննոսի ու նրա ընկերների աստիճանն է, ինչպես ասացին [առաքյալները] «Գործք Առաքելոցում. «Մեզ հաճելի չէ թողնել Աստծու Խոսքը և սեղաններ սպասարկել: Եղբայրներ, ընտրեցե՛ք ձեր միջից վկայված յոթ մարդու, որոնց կնշանակենք այդ պետքերի համար, իսկ մենք աղոթքի և խոսքի սպասավորությանը նվիրվենք: Այս խոսքը հաճելի թվաց ամբողջ բազմությանը, և ընտրեցին Ստեփաննոսին, որ հավատով և Սուրբ Հոգով լցված մի մարդ էր» (Գործք. Զ 2-5): Առաքյալները նրանց ձեռնադրեցին այս պետքերի համար: Դրա համար, երբ Պետրոսը պատարագում էր, Ստեփաննոսի պարտականությունն էր բերել սպասքը և հացը նրա առաջ, բացել ու ծածկել, մաքրել ու պահել, իսկ ինքը միայն նրա վրա աղոթքներ էր կարդում: Նմանապես և սարկավազները միայն նրա սպասավորության գործն են կատարում, իսկ քահանան [ինչպես Պետրոսը], միայն պատարագի աղոթքները և օրհնությունը:

Երկրորդ՝ քահանան Աստծուն է պատարագում ժողովրդի բերածը, իսկ սարկավազը, ով ժողովրդից է առաքված, նվերներն ու ընծան բերում է քահանայի մոտ: Քանզի անհարմար է պատգամավորին վերցնել ընծան և խոսել, ինչպես այն սովորություն է մարդկանց մոտ, այլ

քահանան միայն խոսքի առաքումն է կատարում, իսկ սարկավագը՝ նվերներն է բերում նրա մոտ: Եվ քահանան այն վերցնելով դնում է Աստծու առաջ՝ սեղանի վրա:

Ուրեմն՝ սարկավագը սպասավորն է տերունական սեղանի և նրա սպասքների: Իսկ կիսասարկավագը՝ քահանայի և նրա զգեստների, սրա համար էլ սրան պատշաճ չէ համարձակվել և ձգտել բոլոր տերունի գործերին, նաև քահանային, ով աղոթքներն է կատարում, պատշաճ չէ գործ կատարել: Այլ սարկավագը [քահանային] առընթեր, սուրբ խորհրդի արտաքին՝ մարմնական սպասավորության հպատակությունն է համարձակությամբ կատարում՝ ծածկելով և բացելով, բերելով և տանելով, որոնք նույն տեսակի գործեր են:

Սաղմոսի մեկնությունը

Նայելով սաղմոսի վերնագրին, բավական են համարում առանց քննության հայտնել դրա իմաստի նշանակությունը, որովհետև գրված է. «Շաբաթվա առաջին օրը՝ [կիրակի], երբ հաստատվեց երկիրը. Դավթի օրհներգը» (Սաղմ. ԴԲ) Քանզի ահա՛ տեսնում ենք երկրի հաստատությունը, որը Քրիստոսից ընդունեց Նրա մարդեղության շնորհով:

Եթե օրհնությունն արարչության առաջին [օրվա] մասին լիներ, ապա չէր ասի իբրև սասանելի հաստատություն, ըստ խոսքի. «Աշխարհը հաստատեց, որպեսզի չսասանվի» (Սղմ. ԴԲ 1), այլ կասեր ստեղծված և գոյություն: Ուրեմն նշանակում է, որ այն ստեղծված երկիրը և նրա բնակիչներն Ադամի մեղքերի պատճառով անիծվեցին և սասանվեցին, իսկ այսօր Նոր Ադամով՝ Քրիստոսով օրհնվեցին ու հաստատվեցին: Որի համար էլ մարգարեն շնորհակալ, գովերգու և ներբողիչ է դառնում՝ Նրան օրհնության երգ ասելով. «Տերը թագավորեց» և այլն:

Իսկ քահանայի խնկարկելն այս է նշանակում: Քանի որ խունկը զգալի անուշահոտություն է, ինչպես և աղոթքը՝ իմանալի, բավական չի համարում միայն իմանալի աղոթքներ մատուցել, այլ նաև՝ զգալի խունկ: Քանի որ, ոչ միայն իմանալի հոգի ունենք, այլ նաև զգալի մարմին, դրա համար երկուսն էլ օրինակ ենք վերցնում, ինչը և հետևյալ աղոթքն է հայտնի դարձնում:

Բ մաս
ՃԱՇՈՒ ՊԱՇՏՈՆ
ԽՆԿԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Աղոթք

«Ո՛վ Քրիստոս, խունկ եմ մատուցում Քո առաջ՝ որպես հոգևոր բուրմունք»: Այսինքն՝ զգալի խունկերի հետ նաև հոգու ծուխը, սիրո կայծակների աղոթքների արծարծմամբ նվիրում եմ Քեզ:

«Քո սուրբ երկնային և իմանալի մատուցարանում ընդունիր իբրև անուշահոտություն»: Երկնային մատուցարանը նույն Ինքը Հիսուսն է, Ում վերառաքում ենք մեր աղոթքները:

«Փոխարենը մեզ ուղարկիր Սուրբ Հոգուդ շնորհները և պարգևները»: Որովհետև դրան ենք կարոտ, որպեսզի Սուրբ Հոգուն տաս մեզ գործակից:

«Եվ Քեզ մատուցում ենք փառք, Հոր և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»: Եվ ապա քահանան նրանց հետ միասին իջնում է եկեղեցի և խնկարկում ամբողջ եկեղեցին մինչև վերջին մարդը, իսկ սպասավորներն ասում են խնկարկության շարականը, մինչև քահանայի խորան վերադառնալը:

Մեկնություն

Խորանի դեմքը, սրբությունների Սրբությունն է, երկինքների երկինքն է և Աստծու [բնակա]տեղը, իսկ տաճարը հավասար է երկնքին, և ժողովուրդը, որ նրա մեջ է, հավասար է հրեշտակներին: Եվ քահանայի սուրբ սեղանի շուրջը խնկարկելը, այնտեղից իջնելը, ժողովրդին խնկարկելն ու դարձյալ նույն տեղը վերադառնալը, այս է նշանակում: Քահանան պատկերն է Քրիստոսի, թեպետև բարձրագույն է Աստծու Որդու երանությունը, սակայն Նա եկավ ու իջավ մեր մեջ՝ վերցնելով ամեն ինչ մեր նվաստ բնությունից, բացի մեղքերից և համբարձվեց Իր սեփական տեղը՝ հայրական ծոցը: Սույնպես և քահանայապետը նմանվելով Քրիստոսին՝ գալիս և անցնում է ամենքի միջով, մինչև իսկ հետիններին հավասարվում և ապա վերադառնում ու մտնում է իր տեղը՝ սուրբ խորանը: Իսկ խունկը նշանակում է Քրիստոսի նախախնամական զորությունը, որ այնտեղից՝ ի վերուստ՝ սեղանից է գալիս և անցնում ամենքի միջով, խնամելով բոլոր արարածներին, սակայն Ինքն ամենքին անհասանելի է մնում և Իրեն միայն հասանելի: Սույնպես և խնկարկությունը, սեղանից եկավ և դարձյալ սեղան վերադարձավ:

Այս օրինակով [Տերը] ցույց է տալիս նաև Իր ներգործությունը, քանզի ինչպես Քահանայապետ ձեռնադրության շնորհը, քահանայությունը, քարոզչությունը և վարդապետությունն աննախանձաբար բաշխում է ամենքին, ինչը և խնկարկությամբ ցույց տրվեց, Ինքն անորսալի մնալով ինչ-որ նվաստ գործերի և վարքի համար, և Իր սեփական տեղն է [դառնում], Աստծու մոտ, ուր առաջնորդում է [մեր] մտքերը: Այսպես և սուրբ Պատարագի խորհուրդը. թեպետև բոլորս մասնակցում ենք սրան և սրբվում սրանով, բայց [այն] կա և մնում է իր անհասանելիության [մեջ], և միայն Սուրբ Հոգուն է սա իմանալի:

ՍԿԻԶԲ

Ապա սարկավազն իջնում է եկեղեցի և ձայնում դեպ խորան՝ դիմելով քահանային. «Օրհնի՛ր Տեր»: Եվ քահանան ասում է. «Օրհնյալ լինի Հոր, Որդու և Սուրբ Հոգու թագավորությունն այժմ և միշտ և հավիտյանս»:

Մեկնություն

Ինչպես ցույց տվեց խոսքը՝ քահանայապետը նման է Քրիստոսին: Արդ թեպետև Քրիստոս՝ Ինքն է կամենում բարեխոսել մեզ համար, սակայն կամենում է, որպեսզի մենք էլ աղերսենք Իրեն: Նույնպես և քահանան Քրիստոսի օրինակով մտնում է երկինք, մտնելով սուրբ խորան, Աստծու առաջ բարեխոսելու ժողովրդի համար, որի պատճառով նրանք պետք է խնդրեն քահանային, որ աղոթի իրենց համար: Իսկ սարկավազը, ով ժողովրդի ուսուցիչն է և նրանց միջնորդը քահանայի մոտ, իբրև ամբողջ ժողովրդի բերան, ձայնում է նրան, որպես թե երկրից մինչև երկինք, տաճարից՝ քահանային:

«Օրհնի՛ր Տեր»: Այսինքն՝ դու ես մեր տերը Քրիստոսի փոխարեն: Ուրեմն, օրհնի՛ր, և մեր աղաչանքները մատուցիր Աստվածության առջև:

Եվ քահանան պատասխանում է. «Օրհնյալ լինի Հոր, Որդու և Սուրբ Հոգու թագավորությունը»: Ամենամեծ խորհրդի համար պետք է խնդրել, սրա համար էլ օրհնում է՝ գոհանալով ստացած պարգևների համար, որպեսզի մյուսները ևս ստանա:

Ապա ժամամուտ է լինում օրվա խորհրդի համաձայն, իսկ ավարտին սարկավազը քարոզում է, ասելով. «Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը»:

Եվ քահանան ասում է այս աղոթքը. «Մեր Տեր Աստված, կարողությունդ անքննելի է, իսկ փառքդ՝ անհասանելի: Ողորմությունդ անչափ է և գթությունդ անսահման»: Իբրև որդի համարձակորեն պատմում է Աստծու փառքի անքննելի ու անհասանելի կարողության և Նրա անսահման գթության ու անչափ ողորմության մասին:

«Դու ըստ Քո առատ մարդասիրության, նայիր Քո ժողովրդին և այս սուրբ տաճարին: Եվ մեզ ու մեր աղոթակիցներին առատորեն տուր Քո ողորմությունը և գթությունը»: Քանի որ քահանան ժողովրդի հայրն է, աղոթում է առ Աստված՝ մարդասիրապես խնամքով նայելու համար նրանց, և իրեն ու Իր աղոթակից ժողովրդի համար խնդրում անել Իր ողորմությունը:

«Որովհետև Քեզ վայելում է փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»: Եվ սրանից հետո ասում են սաղմոս և շարական, ըստ օրվա խորհրդի: Եվ քահանան, փոքր-ինչ սեղանից հեռու կանգնելով, ծածուկ աղոթում է:

Աղոթքի մեկնությունը

«Մեր Տեր Աստված, ապրեցրու՛ Քո ժողովրդին և օրհնի՛ր Քո ժառանգությունը»: Մենք Քրիստոսի սեփական ժողովուրդ ենք անվանվում՝ Նրա արյունով գնված: Ըստ որում Պողոսն եփեսացիների երեցներին ասում է. «Ձգույշ եղեք ձեր հոտի նկատմամբ, որի վրա ձեզ կարգեց Սուրբ Հոգին՝ հովվելու Տիրոջ ժողովրդին, որ գնեց Իր արյունով» (Գործք Ի 28): Արդ, քանզի այսպես զգույշ մնալու հրաման առան [քահանաները] նույն Ինքն [քահանան], Քրիստոսից աղերսում է պահպանություն իրեն վիճակված հոտին և ժառանգությանը:

«Պահի՛ր Քո Եկեղեցու ամբողջությունը»: Այսինքն՝ որպեսզի որևէ մեկը մեր ժողովի բազմությունից չզրկվի, հափշտակվելով սատանայի կողմից, այլ անվրդով պահի՛ր:

«Սրբի՛ր նրանց, ովքեր սիրով ողջունեցին Քո տան վայելչությունը»: Քահանան հավաքվածներին մաքրելու պետքերը [հոգալու] համար, ապավինելով մեր աղոթքների

զորությանը, աղաչում է ասելով. «Արդ, Ղու, որպես ամենաբավական հոտի՝ սրբիր նրանց համաձայն իրենց հավատքի և նույնը [տուր] ավելիով»:

«Ղու մեզ փառավորի՛ր Քո աստվածային զորությամբ և մի՛ լքիր Քեզ հուսացողներին»:
Որովհետև Քեզ սպասելով հույս ենք տածում և Ղու ես մեր փրկության Կարապետը, աղքատացածներիս հարստացրո՛ւ Քո աստվածեղեն առատ կամքով և որպես բազմողորմ, մի՛ անտեսիր:

«Որովհետև Քո՛նն է կարողությունը, և զորությունը և փառքը հավիտյանս. ամեն»:

«Խաղաղություն ամենքին»:

«Որ այս բոլորին և մեզ ամենքիս միաձայն աղոթել սովորեցրիր: Եվ Քո անունով երկու կամ երեք միաբանվածների խնդրանքները խոստացար շնորհել»:
Ասվածները պարզապես Քրիստոսի հրամաններն են հիշեցնում, ըստ խոսքի. «Եթե ձեզանից երկուսը միաբանվեն, ինչ որ խնդրեն, նրանց կտրվի» (Մտթ. ԺԸ 19): Եվ դարձյալ. «Որովհետև ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մեջ» (Մատթ. ԺԸ 29): Ուրեմն, հավաքվել և աղոթել քեզանից սովորեցինք, և ոչ թե մարդ [արարածներս] հանդգնում ենք երես առ երես խոսել Աստծու հետ, այլ լսեցինք ասվածը, թե՛ ինչ որ խնդրեք, կտրվի ձեզ:

«Ղու այժմ էլ հոգուտ Քո ծառաների կատարի որանց խնդրանքները»:
Քեզնից ենք խնդրում, որ խնդրել սովորեցրեցիր, և վայելուչ է Քեզ Քո խոստումը կատարել, ինչպես և Ղու ես քննում մեր օգուտը:

«Այս հավիտյանում մեզ շնորհելով Քո ճշմարտության գիտությունը, իսկ հանդերձյալում՝ հավիտենական կյանք պարգևելով»:
Այստեղ այն ենք փափագում, որպեսզի Աստծու կամքն իմանանք և Նրա վկայության ճանապարհներին իմաստուն լինենք, որը և խնդրում է [քահանան], քանզի սրանք են, որոնք առաջնորդում են մեզ դեպի հավիտենական կյանք:

«Որովհետև բարերար և մարդասեր ես Աստված, և Քեզ վայելում է փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

ՃԱՇՈՒ ՄՈՒՏՔ

Եվ շարականի վերջին տունն ասելիս երիցս երկրպագում են [սուրբ սեղանի առջև] և քահանան [ծածուկ] ասում է այս աղոթքը:

«Տեր Աստված մեր, որ Քո փառքի սպասավորության համար երկնքում կարգեցիր հրեշտակների և հրեշտակապետների դասերն ու զինվորությունները, այժմ արժանացրու մեր մուտքի հետ մտնել նաև սուրբ հրեշտակներին և լինել մեզ պաշտոնակից և փառաբանակից Քո բարերարությանը»:
Որն է խոսքի նշանակությունը. [այն], թե ինչպես երկնքում իմանալիների դասերը Քեզ են սպասավորում, այնպես և այստեղ՝ Եկեղեցիում, որը երկինք է երկրի վրա, Քո նույն պաշտամունքի մեջ նաև մեզ են սպասավորակից [լինում]:

Ձայնով

«Որովհետև Քո՛նն է կարողությունը, զորությունը և փառքը, հավիտյանս. ամեն»:
Եվ համբուրում են սեղանն ու շարականի ավարտին սարկավազը բարձր ձայնով գոչում է. «Պռոպխումե»:

Բարձրացնում են սուրբ Ավետարանը, և ժողովուրդը ձայնով երգում է «Երեքսրբյանը»՝ ասելով. «Սուրբ Աստված, Սուրբ և Հզոր, Սուրբ և Անմահ, որ խաչվեցիր մեր համար, ողորմի՛ր մեզ»:

Սրանց մեկնությունը

Շարականների երգը և սաղմոսների քաղցրանվագ ձայնն ունի հետևյալ խորհուրդը: Քանի որ ամբողջ ժողովուրդն աշխարհի հոգսերից և զբաղմունքներից տազնապած եկան ու մտան եկեղեցի, մեկը՝ իշխանական հոգսերից, մեկ ուրիշը՝ դատական ատյանից, շատերը՝ մարմնավոր չարչարանքներից, մյուսները՝ տարբեր արհեստներից, և միասին հավաքվեցին սուրբ Եկեղեցում, սակայն դեռևս խռովքի մեջ են: Որի համար էլ, նախ՝ սաղմոսների ու շարականների հեշտալուր երգերը քաղցրացնում են ժողովրդի լսելիքը, որպեսզի նրանց մտքից մաքրվեն մարմնական հոգսերը և երգելով միանան Աստծուն:

Երբ սա այսպես է ավարտվում, սարկավազը դրդող ձայնով գոչում է «Պռոսխումե», այսինքն՝ «ուղիղ վեր նայեցեք», և այս խոսքերով Ավետարանը բարձրացնում է ի տես նրանց: Իսկ ժողովուրդը սարկավագի ձայնից ելնելով ու վեր նայելով՝ տեսնում է Ավետարանը, որ Քրիստոսի տնօրենության պատմողն է: Այլև այն են հիշում, որ իրենց քահանայապետը, ով ըստ Քրիստոսի նմանության պատվով ավելի բարձր է ամենքից, ամենևին ամոթ չհամարեց իջնել բարձրագույն տեղից և գալ ու լինել իբրև մեկը ժողովրդից, քանզի նվաստանալով դռան մոտ եկավ և ապա դարձյալ՝ ըստ Քրիստոսի նմանության, բարձրացավ բոլորից ավելի [վեր], մտավ բեմ, ինչպես և Քրիստոս Հոր մոտ՝ վարագույրի ներսի կողմը:

Տեսնելով այս բոլորը, ամբողջ Եկեղեցին, երկնավորների և սանդարամետականների նմանությամբ, Հիսուս Քրիստոսին Տեր է խոստովանում Հայր Աստծու փառքի համար՝ ասելով. «Սուրբ Աստված, Սուրբ և ...»: Իբրև այս է կամենում ասել. «Դո՛ւ, Քրիստոս Աստված մեր, որ Քեզ նմանվեց այս քահանայապետը, թեպետև Դու Սուրբ, Հզոր և Անմահ ես, սակայն բավական չհամարեցիր միայն մարդ լինել և հավասարվել մեզ, այլև անարգ և հետին մահն ընդունեցիր մեզ համար, որ խաչն է: Այնքան անպատմելի խոնարհությանդ համար, ողորմի՛ր մեզ»:

Եվ քահանան միանում է ժողովրդի սրբասացությանը հետևյալ աղոթքով, որն ասում է, երբ երգում են «Սուրբ Աստված»-ը:

Աղոթքի մեկնությունը

«Սուրբ Աստված, որ սրբերի մեջ ես բնակվում, և երեքսրբյան ձայնով սերովբեները Քեզ են գովում ու քերովբեները՝ փառաբանում, և երկնային բոլոր զորությունները Քեզ են երկրպագում»: Այստեղ հիշում է Եսայի և Եզեկիել մարգարեների տեսիլքները (Եսայի Զ 1-4, Եզեկ. Ա):

«Որ ոչնչից ստեղծեցիր բոլոր արարածներին և մարդուն ստեղծեցիր ըստ Քո պատկերի ու նմանության և Քո բոլոր շնորհներով նրան զարդարեցիր, և սովորեցրիր նրանց իմաստություն ու զգոնություն խնդրել»: Քանզի դրախտը զանազան ծառերով իմաստությունն է առակում, ուր դրվեց մարդը՝ այն քննելու և պահելու համար, որն այստեղ խնդրեց:

«Եվ չանտեսեցիր մեղավորին, այլ նրա վրա դրեցիր փրկության ապաշխարությունը»: Ու հանցանքներից հետո, նրանց արժանացրեց ապաշխարության:

«Եվ մեզ՝ Քո նվաստացած անարժան ծառաներին, արժանացրեցիր այս ժամին կանգնել Քո սուրբ սեղանի փառքի առջև և Քեզ օրինավոր երկրպագություն ու փառաբանություն մատուցել»: Ասում է, թե Տիրոջից մեզ տրվեց աղոթքների այս զգաստությունը, որը նախապես ասված շնորհները տվեց մարդկանց:

«Դու, Տեր, ընդունիր մեղավորներիս բերանից երեքսրբյան օրհնությունը, և Քո քաղցրությամբ պահիր մեզ, ներիր մեզ մեր կամա և ակամա հանցանքները, գիտակցաբար և անգիտակցաբար [գործած մեղքերը], մաքրիր մեր հոգին, միտքն ու մարմինը, և շնորհիր սրբությամբ Քեզ սպասավորել մեր կյանքի բոլոր օրերում»: Պարզ է ասվածը, քանզի աղոթքների ընդունվելուց հետո հայցում է մեղքերի թողություն, և խնդրում՝ սուրբ վարքով ամեն օր Նրան սպասավորել:

«Սուրբ Աստվածածնի և Քո բոլոր սրբերի բարեխոսությունով, ովքեր հավիտենությունից ի վեր Քեզ բարեհաճ դարձան, որովհետև սուրբ ես, Տեր Աստված մեր»: Քրիստոսի մոտ բոլոր սրբերը վշտակից և բարեխոս են, և մանավանդ Տիրամայրը, ում [նույնպես] ներառնում է:

«Եվ Քեզ վայելում է փառք, իշխանություն և պատիվ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Եվ միասին ավարտում են աղոթքն ու երեքսրբյանը: Իսկ սարկավագը քարոզում է. «Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը»:

Ժողովուրդը՝ «Տե՛ր, ողորմիր»:

Սարկավագը՝ «Համայն աշխարհի խաղաղության և սուրբ Եկեղեցու հաստատության և բոլորի օրհնության համար ևս աղաչենք Տիրոջը»:

«Բոլոր քաղաքների և գավառների համար, ու նրանց՝ ովքեր հավատով բնակված են դրանցում, աղաչենք Տիրոջը»:

«Մեր հայրապետի կյանքի և նրա հոգու փրկության համար աղաչենք Տիրոջը»:

«Պատվական քահանաների, Քրիստոսի սարկավագների և Եկեղեցու ժառանգավորների համար աղաչենք Տիրոջը»:

«Բարեպաշտ և աստվածապահ թագավորի, բոլոր պալատականների և զինվորների համար աղաչենք Տիրոջը»:

«Հիշենք ամենասուրբ Աստվածածնին և ամենաօրհնյալ Տիրուհուն ու միշտ կույս Մարիամին, նաև բոլոր սրբերին, և նրանց հետ աղաչենք Տիրոջը»:

«Եվ կրկին միաբան մեր սուրբ և ճշմարիտ հավատքի համար աղաչենք Տիրոջը»:

Ինչո՞ւ են միասին սկսում. սարկավագը քարոզը՝ Եկեղեցու միջից, և նրան զուգահեռ քահանան՝ աղոթքները՝ սուրբ խորանից:

Ոչ ոք թող չկարծի [թե], ծանրության կամ ծուլության պատճառով է սարկավագի քարոզության և քահանայի աղոթքի միմյանց զուգահեռ ընթանալը: Եվ իրավունքն է դատում մեկին լռել, մինչև մյուսի ավարտելը, այսինքն՝ քահանայի՝ մինչև սարկավագի լուռ կանգնելը, և ապա նոր սկսելը: Սակայն պետք է իմանալ, թե ինչ պատճառով սահմանվեց միմյանց զուգընթաց լինելը: Որովհետև նույնն է խորհրդի զորությունը, քանզի ինչ որ քահանան խորհրդաբար խնդրում է, նույնը և սարկավագը բարձրաձայն հրամայում է ժողովրդին՝ աղերսել: Դրա համար նրանք պետք է լինեն միմյանց համաձայն: Որպեսզի ցույց տան ժողովրդին Աստծուն աղաչելու [կերպը], համաձայն դաստիարակ սարկավագի հրամանի, թե՛ «Մեր կամքի իղձը նույնն է քահանայի հետ, որ մեր ամենքի փոխարեն մտավ Քո առաջ: Թեպետև մանուկ ենք իմաստների հարցում և չենք կարողանում այդպես հրեշտականման աղաչել Քեզ, սակայն «Տեր ողորմիր» ասելով, թախանձում ենք, որպեսզի Դու ողորմած կամքովդ հատուցես խնդրանքները, որոնք խորհրդապես աղոթում է քահանան»: Եվ նույնն է պատգամում նաև սարկավագը քարոզության վարդապետությամբ նրանց հորդորելով: Ամեն կերպ պետք է իմանալ, որ բոլոր քարոզներն իրենց զանազանություններով հանդերձ այս խորհուրդն են պատգամում, որպեսզի ժողովրդին հորդորեն քահանային աղոթակից լինել, որովհետև երկուսն էլ պարատվոր են

միասին աղոթել ու միասին ավարտել, քահանան՝ ծածուկ խոսելով, իսկ նրանք՝ միաձայն և հայտնապես:

Սարկավագի քարոզության մեկնությունը

Քահանայապետը Քրիստոսի օրինակով մտնում է վարագույրի ետևի կողմը, բոլորի համար բարեխոսելու: Սարկավագը սերովբեների նմանությունն ունի, և ինչպես նրանք անմիջնորդ իմացողներն են Աստծու կամքի, այնպես էլ սարկավագն է իմանում քահանայի կամքը: Որի համար էլ գալիս է ժողովրդի մոտ և խորհրդատեյակ դարձնում նրանց, թե՛ «Քահանայապետը մտավ Աստծու առաջ՝ բարեխոսելու ձեզ համար: Պարտավոր եք և դուք նրա հետ աղոթակից լինել»:

Իսկ թե ի՞նչ, կամ ինչպե՞ս պետք է աղոթել, սովորեցնում է՝ ասելով. «Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը»: Սա այն խաղաղությունն է, որ Տերն ասաց, թե թողնելու է աշակերտներին (Հովհ. ԺԴ 27), որն է Սուրբ Հոգին, և այն է հրամայում ժողովրդին խնդրել Տիրոջից: Եվ այս ոչ թե մի անձի համար, այլև՝ ամբողջ աշխարհի ու գավառների, ուր կա Տիրոջ երկյուղը: Ապա սկսելով [հիշատակումը], քահանայապետից մինչև թագավորը, այն ավարտում է գինվորական դասերով: Նաև [պատվիրում է] հիշել Տիրամորն ու բոլոր սրբերին և նրանց միջոցով Տիրոջը խնդրել: Դարձյալ՝ [պատվիրում է] միաբանված խնդրել ողորմություն, մեր սուրբ և ուղղափառ դավանության քրիստոնեական հավատի համար ու անկեղծ սիրով միմյանց համար աղոթել, և ամենակալ Տիրոջը մեր մեջ կրել, և բոլորի համար ողորմած Տիրոջից մեծ ողորմություն խնդրել:

Եվ մինչ սարկավագները քարոզում են, քահանան ծածուկ ասում է այս աղոթքը. «Տեր Աստված մեր, ընդունիր Քո ծառաների բազկատարած աղաչանքները և ողորմիր մեզ Քո մեծ ողորմությամբ: Քո գթությունն ուղարկիր մեր և այս բոլոր ժողովրդի վրա, ովքեր Քեզանից ակնկալում են Քո առատ ողորմությունը: Որովհետև Աստված լինելով՝ ողորմած և մարդասեր ես, և Քեզ վայելում է...»: Պարզ է խոսքը և կարիք չունի մեկնության:

ՃԱՇՈՒ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Սրանից հետո քահանան երկրպագում է սեղանին և գալով բազմում աթոռին, իսկ սարկավագը նրան է հանձնում Ավետարանը: Եվ դարձյալ խոնարհվում է նրա ծնկների վրա և վերցնում [Ավետարանը]:

Մեկնություն

Քահանայապետի աթոռին բազմելն այս է նշանակում: Քանզի Քրիստոսի նմանությամբ մտավ բարեխոսելու ժողովրդի համար, և սրբասացության այս երկու աղոթքների ավարտին համբուրեց սեղանը և նստեց աթոռին, ասելով ժողովրդին. «Այս պատիվը և աստվածավայել փառքը, որոնց ձևն այժմ ընդունեցի և նստեցի աթոռին, իմ սեփականը չեմ, այլ բոլորիս Աստված՝ Քրիստոս Փրկչինն է, իսկ ես միայն Նրա պաշտոնյան ու սպասավորն եմ: Արդ, որ տեսնում եք Նրա պատգամը, այսինքն՝ Ավետարանը, իմ գրկում, սրա միջոցով տեսեք նույն Իրեն՝ մեր Տիրոջը՝ բազմած Իր աթոռին, և ոչ թե ինձ՝ Նրա ծառային»:

Եվ սրանից հետո սաղմոսերգուն երգում է սաղմոսը, իսկ ընթերցողը նախ ընթերցում է մարգարեական [գրքից], ապա՝ առաքելական:

Մեկնություն

Ժողովրդին Աստվածաշունչ գրքից ընթերցումները, վարդապետությամբ խրատելու և բարին հորդորելու համար են, նաև՝ նախագուշակ և վկա Տիրոջ տնօրենության: Որի համար, նախ մարգարեականներից է ընթերցվումը, իսկ հետո առաքելականներից, որպեսզի ցույց տա, թե սրանց և նրանց միտքը նույնն է, քանզի ինչ մարգարեները նախապես գուշակեցին, դրանց առաքյալներն ականատես եղան:

Եվ ընթերցումից հետո, դարձյալ առաջ է գալիս սաղմոսերգուն և սկսում «ալելուիան», և ամբողջ ժողովուրդը նրանից վերցնելով «ալելուիան», նույն եղանակով կրկնում է, իսկ սաղմոսերգուն առանց եղանակի սկսում է սաղմոսը, մինչև փոխի ավարտը, և ժողովուրդը կրկնում է նույն նախասաց «ալելուիան»:

Մեկնություն

«Ալելուիան» թարգմանվում է «Օրհնեցե՛ք Աստծուն», և սա հրեշտակների երգ է, որ այժմ Եկեղեցու ամբողջ բազմությունը մի առ մի հաջորդելով քաղցր եղանակով երգում են նախքան Ավետարանի ընթերցումը, քանզի Աստված պետք է խոսի, որի համար էլ մարդիկ հրեշտակների նման Նրան մատուցում են հրեշտակային օրհնություն:

Սաղմոսերգուի միայնակ «մեսեդի» ասելն առաքելական գրքերի [ընթերցումից] առաջ և Ավետարանի [ընթերցումից] առաջ «ալելուիա» ասելը, այս է նշանակում: Արդ, ինչպես սարկավազը քարոզության վարդապետությամբ իր աստիճանի առանձնահատկությունը ցույց տվեց, նույնպես, և սաղմոսերգուն երգելով իր գործն է անում, իսկ ընթերցողը՝ կարդալով: Իսկ եթե բոլորը նրա երգելուն ձայնակցեն, անկարգություն կտիրի, և չի գատորոշվի մասնահատուկ պատիվը: Արդ, պարտ է, որ ինչպես միայն սարկավազն է քարոզում ժողովրդին, և ընթերցողն ընթերցում, այնպես և սաղմոսերգուն՝ սաղմոս և ալելուիա ասի, և ապա նրանից՝ նրա հրամանով ու առաջնորդությամբ սիրվի ամբողջ Եկեղեցու բազմության մեջ, որպեսզի կարողանանք պահել հրամանները, ըստ խոսքի. «Ձեր ամեն ինչը պարկեշտությամբ և ըստ կարգի թող լինի և ըստ Աստծու Եկեղեցու» (Ա Կորնթ. ԺԴ 40):

Այն ժամանակ՝ «ալելուիայից» հետո, սարկավազը վերցնելով Ավետարանը՝ խնկով և մոմերով հանդերձ, գալիս է բեմի դռան մոտ՝ (խորանի առաջ) ու «ալելուիայի» ավարտին բարձր ձայնում.

«Օրթի», որ թարգմանվում է՝ «ականջ դրե՛ք», կամ «ոտքի ելե՛ք»:

Իսկ քահանան խորանից դառնում է դեպի ժողովուրդը և խաչակնքում՝ ասելով. «Խաղաղություն ամենքին»: Որպես թե նախ այս էր հայցում ժողովուրդը, «Եվ խաղաղության համար ևս ...» [քարոզով] առավելապես խաղաղություն ստանալ, որն այժմ քահանան վերցնելով Աստուծուց տալիս է ժողովրդին: Որին ժողովուրդը՝ [պատասխանում է]. «Եվ քո հոգու հետ»: Որպես թե, այն խաղաղությունը, որ տվեցիր մեզ, նաև քո հոգու հետ [թող] լինի: Սարկավազն ասում է՝ «Երկյուղով լսեցե՛ք», իսկ քահանան կամ սարկավազը՝ «Հիսուս Քրիստոսի սուրբ Ավետարանն ըստ Մատթեոսի», կամ ըստ այլոց:

Այս խոսքով հայտարարում է, թե Աստծունն է խոսքը և ոչ թե մարդունը, որի համար էլ հրամայում է մեծ երկյուղով ու դողով լսել աստվածային պատգամները:

Ժողովուրդը ասում է. «Փառք Քեզ Տեր Աստված մեր»: Ժողովուրդը հիանալով կատարվածի մեծությամբ, փառք են տալիս Աստծուն, որ արժանացրեց մեզ՝ հողեղեններիս խոսել Իր հետ:

Սարկավազը՝ «Պռոսխումեն», այսինքն՝ ուշադրություն:

ժողովուրդը՝ «Օթեոս»՝ ասում է Աստված:

Սարկավազը զգուշացնող խոսքերով ամբողջ ժողովրդին հրամայում է պատրաստակամ լինել աստվածային խոսքերը լսելու համար: Իսկ նրանք ընդունելի ձայնով պատասխանում են՝ «Ասում է Աստված», այսինքն՝ թե զգուշացանք և պատրաստ ենք, թող խոսի Աստված, քանզի պատրաստ ենք լսելու:

Եվ կարդում են Ավետարանը: Ավետարանի ընթերցումը սովորեցնում է, թե որքան առատ և անչափ է Հոր սերը մարդկանց հանդեպ, քանզի տվեց ոչ միայն խաղաղություն, այլև Իր Միածնին պեսպես տնօրինություններով հանդերձ, որն է մարդեղությունը, վարդապետության խոսքերը, սքանչելի գործերը և այս բոլորից առավել՝ խաչելությունը, թաղումը և հարությունը: Այս բոլոր երախտիքներն է պատմում Ավետարանը, որոնք լսելով ամբողջ ժողովուրդը, հիանալով փառք է տալիս Աստծուն՝ ասելով. «Փառք Քեզ Տեր Աստված մեր»:

Եվ ապա վերջում ասվում է Նիկիական դավանանքը:

ՀԱՎԱՏԻ ՀԱՆԳԱՆԱԿ

Մեկնություն

Նիկիականի դավանության մեկնությունը, որ այժմ խոստովանում են բոլոր եկեղեցիներում, թեպետև չգրեցինք բառ առ բառ, սակայն ըստ մեր կարողության, կասենք նրա համառոտ բովանդակությունը: Արդ, բոլոր բարիքների սկիզբը և ավարտը հավատքի ճշմարտությունն է: Դրա համար էլ նրանք, ովքեր պատրաստ են սարսափելի խորհուրդն կատարելու և հաղորդվելու նրա հետ, նախ ուղիղ հավատի խոստովանությունն են դավանում, ապա [նոր] արժանի դառնում այս աստվածային խորհրդակատարությանը: Իսկ թե ինչպիսի օրինակով է պետք իմանալ դավանությունը՝ կասենք: Ուրեմն վայել է հավատքով, իմանալի մտքով Աստծուն ճանաչել անեղ և սկիզբը եղածների: Ում Բնությանն ոչինչ նման չէ, կամ էլ օրինակը [չկա] եղածներիս մեջ: Բայց Այն օրինակն է մեր բանական հոգու, որն Աստծու պատկերն է: Եվ ինչպես անշունչ պատկերն է գատված ողջերից, քանզի միայն ձև ունի և ոչ թե զորություն, այսպես և մեր բանական հոգիները Նրա անձնավորության հատկությանն են միայն նման և ոչ թե՝ բնությամբ: Ուրեմն, ինչպես մեր բանական հոգին պարզ, անմահ և անապական է ու ծնվում է նույն բանական հոգուց, առանց որևէ ախտի՝ բարի կամ չար: Եվ խոսքն որ ծնվեց հոգուց՝ գատվելով անձնավորվում է և երևում որպես հոգուց ամեն ինչով զանազանվող էություն, որովհետև գատված է նրանից իբրև ծնունդ և դարձյալ նրանից է իբրև բնութենակից: Այսպես և իմացի՜ր Աստծու Բանը (Խոսքը), որովհետև Նրա՝ Հորից ծնունդն անախտ է, քանզի գատվելով անձնավորված է Նրանից, որովհետև Նրա ծնունդն է: Դարձյալ՝ անխառն և անշփոթ [կերպով] է միավորված, քանի որ բնութենակից է Նրան, ինչպես վկայում է Հովհաննեսը՝ ասելով. «Սկզբից էր Բանը, և Բանն Աստծու մոտ էր և Բանն Աստված էր» (Հովհ. Ա 1-2):

Դարձյալ՝ խոսքը, որ անձնավորվում է հոգուց՝ նրա կամքով, դուրս է բխում և ելնում բերանից, որ բառ ենք անվանում, կամ թե գրելով ենք արտահայտում: Եվ արտաբերված խոսքը, որ ելավ բերանից, հոգուց և խոսքից ծնված, ուրիշ անձ է երևում, որովհետև բերանի խոսքը նման է բանական հոգուն և նրա ծնունդը՝ սրտի խոսքին, որը սակայն նրանցից գատված տարբեր անձ է, և նրանց մոտ [հանդես է գալիս], որպես բխում: Այսպես և Սուրբ Հոգու բխումը Հորից է, որ վերցնելով Որդուց անշփոթ և անխառն ձևով՝ անձնավորված լինելով Նրանցից՝ անբաժանելի է Հորից և Որդուց, քանզի բնութենակից է և բաժանվելով՝ անձնավորված է,

որովհետև Սուրբ Հոգին բխում է: Եվ այս օրինակով պետք է երկրպագելի խոստովանել Սուրբ Երրորդությունը՝ Հայր, Ծնունդ և Բխում, Երեք անձ և մի Աստվածություն, և մի՛ բնություն, մի՛ էություն, մի՛ զորություն, մի՛ կամք, մի՛ անեղություն և անսկզբնականություն. ու մնացած բոլորը: Բայց շատ տարբեր և հեռու է այս օրինակը, որ բերեցինք, Աստծու սկզբնատարությունից, քանզի Աստծու Խոսքը, և [Հոգու] բխումն անժամանակ է և անանցանելի է և Հոր մոտ անաղավաղելի, իսկ մերը ժամանակավոր է և անցնում է, ցնդում ու աղավաղվում օդի մեջ: Իսկ հավատալով Աստծու Բանի մարդեղությանը, այսպես ենք ճանաչում. որ Հոր Աստծու կամքով Հոգին նախ մաքրեց Կույսին մարդկային ախտերից, ըստ հրեշտակի խոսքի, որ ասաց. «Սուրբ Հոգին կգա քո վրա» (Ղուկ. Ա 35), և թե՛ «Նրանից ծնվածը Սուրբ Հոգուց է» (Մատթ. Ա 20): Քանզի, թեպետև սուրբ էր ամենամաքուր Կույսը, սակայն կրում էր ինչ որ [նյութական] բան և նրանում կար մարդկային կիրք, որովհետև նախաստեղծի դուստրն էր, ուստի և Սուրբ Հոգին նախ մաքրեց նրան, և ապա Աստծու Բանը՝ Որդին հոժարեց բնակվել նրա մեջ և վերցնելով Կույսի արյունից, խառնեց Իր Աստվածության հետ՝ անձառելի խառնմամբ, որն ավելի վեր է քան միտքն ու խոսքը, և գոյանալով եղավ կատարյալ մարդ հոգով, մտքով ու մարմնով, կամքով ու հոժարությամբ, և այն բոլորով, ինչ մեր մեջ կա, բացի մեղքից: Խառնվեց և միացավ անշփոթ խառնմամբ երկու բնությունների անձառելի միավորությամբ: Եվ դրանից ոչ Աստվածությունը նվազագույնս տկարացավ, մարդկային տկար բնության խառնման պատճառով, և ոչ էլ մարդկայինը հեռու դրեց, այսինքն՝ բնության կրքերը, թեպետև միացավ Աստծու [բնության] հետ: Եվ Տերն ոչ թե անհրաժեշտությունից էր կրում բնական կրքերը, ինչպես մենք, որ ծառա ենք ախտին, այլ Նա ինչ որ կամենում էր, այն էր կրում: Երբեմն թույլ էր տալիս բնությանն իրենը կրել, որպեսզի հաստատվի մարդկայինը, և երբեմն գերիշխում էր կրքերի վրա՝ իբրև Աստված: [Այստեղ] պետք է խոսքը համառոտել, որպեսզի շատ չերկարածվի:

Քրիստոնյային պետք է երկու չար հերձվածներից զգուշանալ, նախ Նեստորի մարդադավան բաժանումից, որովհետև Կույսին մարդածին խոստովանեց և ոչ թե՛ Աստվածածին: Եվ երկրորդ՝ Եվտիքեսի չարաչար խառնակությունից և անիմաստ շփոթությունից: Պետք է դավանել Աստծուն մարդացած, Աստված և մարդ կատարյալ, միացած և խառնված երկու կատարյալ բնություններից, մի Քրիստոս և մի կատարյալ Որդի, Ով Հորից ծնվեց անժամանակ և Աստվածածին Կույսից եղավ ժամանակի մեջ, Ով օրհնված է հավիտյանս. ամեն:

Սրանից հետո [պատարագիչը] գալիս է սեղանի առջև. եթե եպիսկոպոս է, հանում է եմիփորոնը և ինքը կանգնում սեղանի առաջ, իսկ քահանաները դաս-դաս կանգնում են եպիսկոպոսից հետո՝ բեմի մի եզրից մինչև մյուսը: Եվ սարկավազը քարոզում է դռան մոտ:

Մեկնություն

Քահանայապետի եմիփորոնի հանելն այս է նշանակում: Մինչև այժմ նա փառքով զարդարվելով Փրկչին էր նմանվում, բայց այժմ, երբ պետք է սեղանի վրա բերվի Քրիստոսի նշխարը, մերկանում է այս կերպարանքից և լինում իբրև սպասավորներից մեկը և մնում Քրիստոսի սպասավորության մեջ:

Յուրաքանչյուր աղոթքից հետո սարկավազը քարոզում է, և [պատարագիչի հետ] միասին սկսում են ու միասին էլ՝ ավարտում: Եվ սա ոչ թե այն բանի համար, որ արագ կատարվի, այլ որ ունի հետևյալ խորհուրդը: Քանզի ինչը սարկավազը քարոզում է ժողովրդին և [նրանց] ուսուցանում աղոթել ու խնդրել Տիրոջից, նույնը քահանան է աղոթում [Տիրոջը] նրանց համար, որպեսզի տարբեր չլինեն քահանայի և ժողովրդի խնդրանքները:

ԱՂՈԹՔ ԸՆԹԵՐՈՑՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Սարկավագի քարոզի մեկնությունը, ասված Խոսրով Անձևացի եպիսկոպոսի կողմից

«Եվ խաղաղության համար ևս Տիրոջն աղաչենք»:

Իսկ ժողովուրդը՝ «Տեր ողորմիր»:

«Եվ առավել հավատով աղաչենք և խնդրենք Հայր Աստծուց՝ Ամենակալ Տիրոջից և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսից՝ պաշտամունքի և աղոթքի այս ժամին, որպեսզի ընդունելության արժանացնի...»: Ասենք թե «Եվ առավել...»-ը ինչ է: Հավատով աղաչենք, որովհետև հավատքն է [աղոթքը] դարձնում լսելի, ինչպես ասել է Հակոբոս առաքյալը. «Եթե ձեզանից մեկը նվազած լինի իմաստությունից, թող խնդրի Աստծուց, որ տալիս է բոլորին առատապես, չի նախատում ու տալիս է նրան» (Հակ. Ա 5):

Ինչո՞ւ է երկուսն էլ ասում և՛ «աղաչենք», և՛ «խնդրենք»: Որպեսզի ցույց տա, որ մեծ պաղատանքով է պետք խնդրվածքները կատարել և սրտի մտքով ու եռանդալից ջերմությամբ աղաչել, ըստ մարգարեի խրատի. «Աղաչիր Տիրոջից և Նա կտա քեզ քո սրտի խնդրածները» (Սաղմ. ԼԶ 4):

Եվ Աստծուն կանչեց երկու անուններով, և երրորդն էլ ավելացրեց. «Հայր Աստծուց և Ամենակալ Տիրոջից»: Ուսուցանելով Աստծու գութը և առ Աստված երկյուղ ունենալը և գթության, խնամածության և պահպանության համար հույսով Նրան կոչել:

«Պաշտամունքի և աղոթքի այս ժամին, որպեսզի ընդունելության արժանացնի...»: Այն ժամանակն է, ասում է, երբ աղոթքի ենք հավաքված, որ պաշտամունք և աղոթք է անվանում, ցույց տալով, թե Հայր Աստծու և ամենակալ Տիրոջ սպասավորներ լինելով, միշտ պարտավոր ենք առանց ծուլության, Նրա պաշտամունքին գնալ:

«Պաշտոնը» ծառայության անունն է: Ոչ թե, անիմաստ ձևով նախ պաշտոնը և ապա աղոթքը դրեց, որը խնդրվածքն է, այլ որպեսզի սովորես, թե ծառայելով պետք է խնդրել պետքերը:

«Տերը, կլսի մեր աղաչանքների ձայնը, կընդունի մեր սրտի խնդրվածքները, կների մեր հանցանքները և կողորմի մեզ»: Քանզի այնպիսիներից է սովոր լսել, ովքեր ըստ Նրա կամքի են հայցում: Դարձյալ չասաց, թե՝ ընդունի մեր խնդրվածքները, այլ թե՝ մեր սրտերի [խնդրվածքները], քանի որ ոչ թե շրթունքների, այլ սրտի խնդրվածքն է Նրան ընդունելի:

«Մեր աղոթքները և խնդրանքներն ամեն ժամ թող մտնեն Նրա մեծ տերության առաջ»: Եթե այնպես աղոթենք, ինչպես ասվեց. և՛ Աստծու համար հաճելի լինեն, և՛ մեզ օգտակար, ոչ միայն հիմա, այլև ամեն ժամ մեր աղոթքները և խնդրվածքները կմտնեն Նրա մեծ տերության առաջ:

«Եվ Նա մեզ տա միաբան մեկ հավատով բարի գործերի մեջ արդարությամբ վաստակել, որպեսզի ամենակալ Տերն Իր ողորմության շնորհներն իջեցնի մեր վրա»: Տեսա՞ր աղոթքների շահը, ինչպես և ցույց տվեց ուղիղ հավատով միաբանվելը և արդարությամբ վաստակելը: Սա լինում է, երբ Ամենակալ Տերն Իր ողորմության շնորհներն է իջեցնում, այսինքն՝ Սուրբ Հոգու շնորհները, որ ողորմելով տալիս է խնդրողներին: Դրանք այն են, որ զորացնում են հավատքի մեջ: Նույնը նաև արդարության արդյունքն է զորացնում: Սա այն է, որ տաժանելի բաները դյուրին է դարձնում: Եվ ապա աղոթքն ավարտում է՝ [հետևյալ] խոսքն ասելով. «Ապրեցրու և ողորմիր մեզ»:

Քանի դեռ նվերները չէին բերվել սեղանի վրա, քահանայի բոլոր աղոթքներն ուղղված էին Քրիստոսին: Իսկ երբ նվերները բերվում են սեղանի վրա, քահանան խոսակցությունը փոխելով դիմում է Հորը, և մեր փոխարեն Քրիստոսին է նվիրում Հորը, սակայն այժմ այսպես է աղոթում

Քրիստոսին. «Մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս, որ մեծ ես Քո ողորմությամբ և առատ՝ Քո բարերարության պարգևներով: Դու, որ Քո կամքով այս ժամին մեր մեղքերի համար խաչի և մահու չարչարանքներին համբերեցիր»: Այստեղ ուսուցանում է Քրիստոսի մեծ սերը, որովհետև [Նա Իր] անձը մեզ համար խաչի մահվան ենթարկեց:

«Եվ Սուրբ Հոգուդ պարգևներն առատորեն շնորհեցիր երանելի առաքյալներին»: Դարձյալ՝ խաչելության այն ժամին, երբ վերցրեց մեր մեղքերը, տնօրենության կատարումից հետո, նույն ժամին Հորից վերցրեց Սուրբ Հոգին և [որպես] Պարգև հեղեց Իր արարածների վրա:

«Աղաչում ենք Քեզ, Տեր, մասնակից արա և մեզ աստվածային պարգևներիդ՝ մեղքերի թողության և Սուրբ Հոգու ընդունելության»: Նույնպես և այժմ անփոփոխ է Քո սերը մեր հանդեպ: Նաև մեզ մասնակից դարձրու այն պարգևներին, սրբիր մեզ մեղքերից, և տուր Քո Սուրբ Հոգին, ինչպես և նրանց:

«Որպեսզի արժանի լինենք գոհությամբ փառավորել Քեզ Հորդ և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»: Ժողովուրդն ասում է՝ «Ամեն», իսկ Քահանան խաղաղություն է տալիս ժողովրդին, [և ժողովուրդը պատասխանում է]. «Եվ քո հոգու հետ»: Սարկավազն ասում է. «Աստծուն երկրպագեցե՛ք», և ժողովուրդը [պատասխանում է]. «Տեր Քո առաջ»:

Մեկնություն

Թե ի՞նչ նշանակություն ունի խաղաղությունը, նախապես ասվեց: Իսկ սարկավազի հրամանը՝ «Աստծուն երկրպագեցե՛ք», հայտնում է, որ խաղաղության համար պետք է աղաչենք Տիրոջը, և Նրան երկրպագությամբ շնորհակալ լինեն այն [բանի համար], որ տվեց քահանայի միջոցով:

Քահանան դարձյալ ավելացնում է իր աղոթքների վրա և ասում. «Քրիստոս Փրկիչ մեր, Քո խաղաղությամբ, որ վեր է մեր ամեն մտքից ու խոսքից, ամրացրու մեզ և աներկյուղ պահիր բոլոր չարիքներից»: Այստեղ «խաղաղություն» է կոչում անհասանելի Նախախնամությունը, որով հայցում է ամրանալ բոլոր չարիքներից, որոնք երևում են և որոնք չեն երևում:

«Հավասարեցրու մեզ Քո ճշմարիտ երկրպագուներիդ հետ, ովքեր հոգով և ճշմարտությամբ Քեզ են երկրպագում»: Նրանց է ասում, ովքեր այժմ երկրպագեցին Քեզ, Քո սիրելիներին: Եվ ճշմարիտ երկրպագուներին միացրու մեզ, ովքեր մարմնի պարանոցի հետ նաև իրենց հոգիները Քեզ խոնարհեցրին:

«Որովհետև ամենասուրբ Երրորդությանդ վայելում է փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Գ Մաս
ԿԱՆՈՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ
ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ժողովուրդն [ասում է] «Ամեն», քահանան՝ «Օրինյալ է մեր Տեր Հիսուս Քրիստոս», ժողովուրդը [դարձյալ]՝ «Ամեն», իսկ սարկավազը՝ «Օրինի՛ր Տեր»: Քահանան դառնում է դեպի ժողովուրդը և հրաման տալիս երախաներին (չմկրտվածներին) դուրս ելնել՝ ասելով. «Թող Տեր Աստված օրհնի բոլորիդ»:

Իսկ սարկավազը բարձր ձայնում է. «Դո՛ւք՝ չմկրտվածներդ, ելե՛ք»: «Երախաներից [չմկրտվածներից], թերահավատներից, ապաշխարողներից և անմաքուրներից ոչ ոք չմերձենա աստվածային խորհրդին»: Սրանից հետո նախ դուրս են հանում երախաներին, ովքեր հավատքի են եկել սակայն դեռևս չեն ընդունել ավագանի լվացումը, նաև նրանց, որոնց թերահավատներ են կոչում անկատարության պատճառով, որովհետև դեռևս կատարյալ չեն հավատքի մեջ:

Եվ ապա [դուրս են հանում] ապաշխարողներին, ովքեր ինչ որ չար մեղքերի մեջ թավալվեցին և ապա զղջման գալով խոստովանեցին, բայց դեռևս չի լրացել նրանց ապաշխարության օրերի թիվը: Եվ նրանցից հետո [դուրս են հանում] անմաքուրներին, այսինքն՝ ովքեր անմաքուր դեղերից չարչարվում են:

Այս երեք դասերը մինչև այս պահը սուրբ հավատացյալների հետ էին: Որպեսզի տեսնելով քահանայապետին, ով նմանվեց Քրիստոսին և ցույց տվեց Նրա անհամեմատելի սերը մարդկանց նկատմամբ, օգտվեն դրանից: Նաև որպեսզի մարգարեական, առաքելական և ավետարանական ընթերցումները նրանց համար զգուշացնող խրատ և նրանց անկատարությանը սնունդ լինեն: Իսկ այժմ Ինքը՝ Քրիստոս Թագավորը, պատրաստ է խորհուրդի մեջ մտնել Իր սիրելի և հավատարիմ ծառաների հետ, որոնք քահանայական դասերն են: Դրա համար պետք չէ այնտեղ լինել անկատարներից և ոչ մեկին, այլ՝ ի Քրիստոս կատարյալներին: Իսկ կիսասարկավագների դուրս հանելը նրանց և դռան մոտ զգուշությամբ պահելն այն է նշանակում, որ կիսասարկավագներն են նրանց դաստիարակում և սնուցում նրանց հոգևոր կաթով՝ Հին և Նոր Կտակարանների ընթերցումով:

Եվ դպիրներն երգում են արժանացածների համար. «Տերունական մարմինն ու փրկչական արյունը մեր առջև է: Երկնային զորություններն աներևութաբար և անդադար երգում են՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ Տեր զորությունների»:

Իսկ սարկավագներն ասում են. «Դպիրներ, սաղմո՛ս ասացեք մեր Տեր Աստծուն և քաղցր ձայնով՝ հոգևոր երգեր»: Եվ ապա ասվում է սրբասացությունը:

Սարկավագները գալիս են խորհրդանոց¹⁶ և երգում «Արևի վրա հաստատվեց» [սաղմոսը, իսկ դպիրները]՝ «Որ քերովբեներին ենք նմանվում» [շարականը]՝ խնկարկելով և մոմերով: Եվ վերցնելով սուրբ նվերը, բերում են դեպի սեղան և տալիս քահանային:

Սրանց մեկնությունը

Գեղեցիկ և աստվածավայելուչ են տեսնում այս կարգը, քանզի սարկավագները վերցնելով սուրբ նվերը, բերում են դեպի սուրբ սեղան: Որովհետև սարկավագները ժողովրդի ուսուցիչներն

են և միջնորդները քահանայի մոտ: Երբ [նրանք] տեսնում են քահանայապետին, սպասավորի ձև ընդունած, մանավանդ որ ժողովրդից դեպ Աստված միջնորդի և պատգամավորի ձև ընդունեց, այն ժամանակ նրանք, կիսասարկավագների հետ միասին, խնկերի բուրմամբ և մոմերով հանդերձ, ամենայն զգուշությամբ վերցնում են ընծաները և տալիս քահանային՝ այս ասելով ժողովրդի անունից. «Քանի որ մեզ համար միջնորդ և բարեխոս ուղարկվեցիր Հոր մոտ, հարկ է մեզանից ընծաներ տանել ու մատուցել Հորը և Աստծուն, ու դրանով Նրան հաշտեցնես մեզ հետ: Եվ մենք ուրիշ նախամեծար ոչինչ չունենք, քան այս հացն ու բաժակը, որ մեր գլխի՝ Հիսուսի խորհրդանիշն է: Այս վերցնելով Նրան ընծա մատուցիր»:

Եվ ապա բարձրաձայն երգում են և ասում. «Որ խորհրդաբար քերովբեներին ենք նմանվում»: Այսինքն՝ թե մենք՝ ամբողջ ժողովուրդը, քահանայական դասերի հետ, իմացականապես քերովբեներին ենք նմանվում, այն, որ տեսավ Եզեկիելը (տե՛ս Եզեկ. Ա), այսինքն՝ չորեքդիմյան կառքը, որ վեր բարձրացած հյուսիսից գալիս էր հարավ: Այսպես և մենք, Քրիստոսի խորհուրդը բարձրացնելով, բերում ենք եկեղեցու հյուսիսային կողմից, այսինքն՝ մեր բնության սառած և ձմեռացած վայրից դեպի աստվածային սեղանի լուսատեսակ կողմը: Եվ ինչպես այնտեղ մարգարեն տեսավ ծիածան, լապտեր ու փայլատակում, նույնպես և մենք, նմանվեցինք նրան մոմերի վառմամբ ու խնկերի բուրմամբ:

«Եվ կենդանարար Երրորդությանը մատուցում ենք երեքսրբյան օրհնություն»: Որը տեսավ Եսային (տե՛ս Եսայի Զ 1-4): Եվ սերովբեների նման «Երեքսրբյանով» են սրբաբանում:

«Բոլոր կենցաղային գործերը մի կողմ դնելով, որպեսզի բոլորի Թագավորին ընդունենք»: Քանզի ոչ թե պարզունակ կերպով նմանվեցինք սրան, այլ կենցաղական զբաղմունքներից և հոգսերից հեռու մնալով, հրեշտակային մտքով բոլորի Թագավորին իմացականապես մեր մեջ ընդունելով:

«Եվ հրեշտակների նմանությամբ, ընծայված, հանդիսավորապես կարգը կատարենք»: Ասում են, թե սա վայրիվերո ձևով չէ, որ մենք կատարում ենք, այլ որպեսզի սրանով նմանվենք հրեշտակների կարգավորությանը:

Եվ մինչդեռ նրանք այս են երգում, սարկավագները զգուշությամբ նվերը՝ [սկիհը] բերում են քահանայի մոտ, և քահանան խոնարհվելով ծածկաբար ասում է այս աղոթքը, որպեսզի աղոթքը և «Որք քերովբեիցը» միասին վերջացնեն:

Քահանայի աղոթքներն ուղղված են Քրիստոսին, որպեսզի Նա զորացնի իրեն խոսելու Նրա Հոր հետ, Իր տնօրենության խորհրդի [մասին]: Քանզի մտաբերեց մեծ խորհրդի անհասանելիությունը, որի պատճառով սարսափում է, դողում և մեծ երկյուղով պաշարվում, տեսնում սարկավագների, դպիրների և ամբողջ ժողովրդի ահն ու երկյուղը, և [ինքն էլ] ընկնում է երկյուղի և սոսկման մեջ:

Քահանան խոնարհեցնում է պարանոցը և միտքը ձեռքերի հետ երկինք է բարձրացնում՝ դեպի քահանայապետ Քրիստոսը և աղոթում՝ ասելով. «Մարմնական ախտերով և ցանկություններով բռնվածներից ոչ ոք արժանի չէ մոտենալու Քո սեղանին կամ սպասավորել Քո արքունական փառքին»: Արդարապես խոստովանում է մարմնի տկարությունները, որը միշտ ծառայում է պեսպես ախտերի և ցանկությունների, որով այսպիսիներիս անկարելի էր խոսակից լինել Աստծու հետ, ինչպես այժմ ինքը, [այսինքն՝ պատարագիչը] և կամ երկնավորներին նմանվել, ինչպես սպասավորները նմանակեցին:

Իսկ թե ինչո՞ւ համարձակվեցինք [ձեռնարկել] այս գործը. [որովհետև] Ղու՛ վստահեցրիր, ինչպես և ասում է. «Որովհետև Քեզ պաշտել՝ մեծ ու ահավոր երկնային զորություններին է [վայել], բայց Քո անչափ բարերարության պատճառով [Ղու՛] Հոր անընդգրկելի Խոսքը, Մարդ

եղար և մեզ համար ներկայացար [որպես] Քահանայապետ, և իբրև բոլորի Տեր և այս սպասավորությունն ու անարյուն զոհաբերության քահանայությունը մեզ ավանդեցիր»: Որ մեր նկատմամբ առատ շնորհիդ և սիրուդ համար, ոչ միայն Մարդ եղար և [որպես] Քահանայապետ Քեզ հաշտության Նվեր մատուցեցիր Հորը, այլև Քո սպասավորությունը մեզ սովորեցրիր:

«Որովհետև Դու ես մեր Տեր Աստվածը, որ տիրում ես երկնավորներին և երկրավորներին, որ բազմում ես քերովբեական Աթոռին՝ Տեր սերովբեների և Թագավոր Իսրայելի, միայն Դու՛ ես սուրբ, և սրբերի մեջ ես հանգստանում»: Այս ամենով հիշատակում է Տիրոջ անհասանելի և անհամեմատելի փառքը:

«Աղաչում են Քեզ՝ միակ բարերար և քաղցրալուր Տեր, նայի՛ր ինձ՝ Քո մեղավոր և անպիտան ծառային, և սրբիր իմ միտքն ու հոգին չարի բոլոր պղծություններից»: «Նայիր» ասելը հաճենալն ու կամենալն է ցույց տալիս, որպեսզի հաճենալով հաշտեցնի և սրբելով մաքրի ներքին մարդուն բոլոր աղտեղի խորհուրդներից:

«Եվ ինձ լցրո՛ւ սուրբ Հոգու զորությամբ, որ հագել եմ քահանայական շնորհը՝ կանգնելու սուրբ սեղանիդ առջև և քահանայագործելու Քո անարատ մարմինն ու պատվական արյունը»: Նախ սրբություն խնդրեց և ապա Հոգին, որպեսզի նրանով զորանա՝ քահանայագործելու համար Քրիստոսի անարատ մարմինն ու արյունը:

«Քո առջև խոնարհեցնելով իմ պարանոցը, աղաչում եմ, մի՛ դարձրու Քո երեսն ինձնից և մի՛ մերժիր ինձ Քո ծառաների [շարքից], այլ արժանի արա Քեզ մատուցելու այս Ընծան ինձնից՝ Քո մեղավոր և անարժան ծառայից»: Այսինքն՝ մի՛ անտեսիր ինձ, այլ ինձ արժանացրու, որպեսզի այս Ընծան, որ Դու Ինքդ ես, դարձյալ Քեզ մատուցեմ: Քանզի Քրիստոս Ինքն է Ամենն ամեն ինչում, որովհետև իբրև Քահանայապետ պատարագում է, և իբրև Գառ՝ պատարագվում, իբրև Ընծա ընծայվում է և դարձյալ Ինքն Ընծան ընդունում Հոր հետ, քանի որ մեկ է Հոր և Որդու կամքը:

«Որովհետև Դու ես, մեր Քրիստոս Աստված, որ մատուցում ես և մատուցվում, ընդունում ես և տալիս»: Ինչպես և ասացինք, թե նախ Ինքն է ընդունում, և ապա Հորը մատուցում, մանավանդ որ մեկ է Իր և Հոր ընդունելությունը, նույնպես և փոխարենը՝ տալը:

«Եվ Քեզ փառք ենք մատուցում Քո անսկիզբ Հոր և Ամենասուրբ և բարերար Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

ԸՆԾԱՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

Եվ սարկավազը ջուր է բերում սուրբ սեղանի առջև, քահանայի մատների ծայրերը լվանալու համար:

Մեկնություն

Մատների ծայրերի լվացումը խորհրդանշում է [մարդկային] բնության խորհուրդների չնչին կրքերը. այս ևս լվանալով մաքրեց մտքերից: Ինչպես, օրինակ, Քրիստոս՝ նախ լվաց աշակերտների ոտքերը, որ մարմնի վերջին մասն է, և ապա նրանց տվեց Իր սուրբ մարմինը: Իսկ որ սեղանի առջև ի տես ժողովրդին է լվանում, պատճառն այն է, որ աստվածայինին խորհրդին է մոտենում, պետք է նրան [[վացվել] տեսնող Աստծու առաջ, Ով քննում է գաղտնիքները, և մարդկանց առաջ, ովքեր հայտնիներն են տեսնում և ամեն ինչում սուրբ լինել՝ երևելի գործերով և անհայտ խորհուրդներով: Դարձյալ՝ [այս] ի ցույց ժողովրդի է կատարում,

որպեսզի նաև նրանք զգուշանան և ամեն ինչում սուրբ լինեն և հետո միայն հաղորդվեն աստվածային սուրբ խորհրդին:

Ինչո՞ւ սրանից հետո քահանան միայն Հորն է աղոթում:

Այժմ, այս խորհրդի վերջանալուց հետո, քահանայապետն աղոթքներն ուղղում է Հորը և սկսում Նրա սիրելի Որդու տնօրենությունը՝ Նրան ընծայելով [որպես] հաշտության Պատարագ ու Նվեր, որպեսզի սրանով մարդկանց համար Նրան մղի խանդաղատալից գթության և սիրո: Եվ այս է օրինակը, որ և ասացի, որովհետև լինելության սկզբից հոժարական մտքով հնազանդվեցինք չարին, և դրանով վայր ընկնելով՝ մերժվեցինք աստվածային փառքից և անմահ բնությունից: Եվ անտեսվելով Արարչից, մատնվեցինք թշնամու ձեռքը և եղանք վարձկան չար ախտերին և ծառա՝ սկզբնաչար բռնավորին: Իսկ երկնավոր Հայրը տեսնելով մեր հոժարական հնազանդությունը չարին, իրավամբ անտեսում էր մեզ: Իսկ Իր Միածին Որդին տեսնելով մարդկային ցեղի այսպիսի աղետը, Հոր կամքով եկավ և խոնարհվեց մեր փրկության համար: Եվ իր արդարությամբ դատապարտեց բռնացող գոռոզ չարին և մեզ ազատելով նրա ծառայությունից, ամրացրեց «Եկեղեցու աշտարակին» և խոստացավ, որ Իր մյուս անգամ գալուստին մեզ վերցնելով կտանի մեր նախկին գավառը: Բայց այժմ, ասում է, քանի դեռ ձեր կողքին ունեք թշնամիներ, և եթե փոքր ինչ նրանցից նեղվեք, Ինձ որպես Բարեխոս և Միջնորդ ունեք Հոր մոտ, Ով տեսնում է թշնամու կողմից ձեզ [պատճառած] բոլոր աղետները:

Տերն ասաց. «Այն ամենը, ինչ որ խնդրեք Հորից Իմ անունով, կտա ձեզ» (Հովհ. ԺԶ 23), դրա համար մենք նեղվելով դավաճանող թշնամուց, Որդու միջնորդությամբ Հորն ենք աղաչում և քահանայի միջոցով Որդու մարմնի և արյան նշխարը որպես պատվիրակ ենք ուղարկում Հոր մոտ: Որը քահանան դնում է Հոր առաջ՝ սեղանի վրա, և սկսում պատմել Որդու պեսպես տնօրենությունն ու աղաչում է Հորը, որպեսզի Որդու արյան հեղման համար մեզ չանտեսի, այլ մեր մեղքերը սրբի Նրա չարչարանքների հիշատակումով: Իսկ Հայրը երբ տեսնում է Իր Որդու անձամբի շնորհները և [սում] պատմությունը, որ քահանան աղերսում է և ժողովրդի անունից, առաքում է խնդրվածները: Եվ այս է, որ ասում է Հովհաննեսը, թե՛ «Նրա Որդու արյունը մեզ սրբում է բոլոր մեղքերից» (Ա Հովհ. Ա 7): Բայց դու մի՛ կարծիր այս խոսքերից, թե ինչ որ զանազանություն կա Հոր և Որդու կամքի միջև, այլ Որդին մեզ համար Հոր կամքի Ուսուցիչ եղավ, որի համար էլ մենք նախ իմանալի մտքով դեպի Որդին ենք բարձրանում և ապա Նրանով կարողանում ճանաչել Հոր գուրջը մեր նկատմամբ:

Բայց, ո՞վ Աստծու այր, սուրբ քահանա և Քրիստոսի պատարագիչ, երբ կանգնես սուրբ աստվածային խորհրդին սպասավորելու, միայն շուրթերի ծայրերով վայրիվերո աղոթքներ մի՛ մատուցիր, որովհետև աղոթքի խոսքերն այդպես անպտուղ են և ոչինչ չես օգտվի նրանից, և ոչ միայն անօգուտ, այլև դատապարտություն կլինի: Այլ իմանալի աչքերիդ առջև ունենալով Նրան, սիրո բորբոքմամբ սրտիդ ջերմությունը խառնիր լեզվիդ շարժման հետ, Ում հետ խոսում ես: Քանզի հնարավոր չէ հայտնել աղոթքների ձևը, թե ինչպիսի օրինակով մեկն իր սրտի իղձերը կխառնի աղոթքին, այլ ըստինքյան դա [պետք] է իմանալ: Ինչպես օրինակ, եթե մի կին իր առջև ունենա իր միակ և սիրելի մեռած որդուն, ապա նա իր սրտի աղետի պատճառով ինչպիսի՞ հեծեճանքներով պեսպես բաներ կխոսի նրա հետ: Այդպես և դու, ճմլված սրտով և վշտալի հայցմամբ աղոթքների աղերսներ մատուցիր Հորը և Աստծուն, որպեսզի ստանաս աղոթքների Պտուղը՝ նույն Իրեն Քրիստոսին՝ քո և համայն աշխարհի փրկության համար:

Սարկավագի քարոզի մեկնությունը:

«Ու նաև հավատքով, սրբությամբ և երկյուղով աղոթքի կանգնենք Աստծու սուրբ սեղանի առջև»: Որպես թե քարոզն արթնացնում է մեզ [հոգևոր] քնից, սեղանն Աստծու սեղան կոչելով, քանզի Աստծու առջև է, և Աստվածորդին բազմած է [սեղանի] վրա, որի համար ասում է՝ երկյուղով կանգնել Նրա առաջ:

«Առանց [ծանր] խղճմտանքի և գայթակղության»: Մեղքերից գայթակղվածներին է ասում, որ եթե [դեռ] չեն հանել իրենց սրտից խոստովանությամբ, չպիտի կանգնեն սուրբ սեղանի առաջ, այն ահավոր ժամին:

«Առանց խորամանկության ու նենգության»: Խորամանկության նենգությունը այնպիսիների համար է ասում, ովքեր կեղծավորություն են անում, իբր սեր և խաղաղություն ունեն եղբայրների հանդեպ, սակայն [իրենց] անձերում նենգությամբ չարություն են խորհում, որը չի ընդունում Աստվածեղեն խորհուրդը, այլ դուրս է հանում:

«Առանց պատրանքի և խաբեության»: Բազմաբնույթ են խաբեությունները և պատրանքները, քանզի կա որ Աստծու նկատմամբ է, և կա որ՝ մարդկանց: Նախ առաջին, ուղղափառ հավատքով կերպարանավորվածը՝ չարափառ լինելով, կամ արդար ձևացածը՝ մեղավոր լինելով: Եվ կամ նա, ով մարդկանց մոտ երևում է, ճշմարիտ, սիրալիր կամ պարզամիտ, սակայն այդպիսին չէ: Եվ կամ նա, ով խարդախություն, ստություն, խաբեություն և այլ այսպիսի բաներ է ցույց տալիս իր մեջ, որոնք չունի, և որոնց Տերը մերժում է՝ ասելով. «Հեռացեք ինձանից ամենքդ, որ գործում եք անօրենություն» (Մատթ. է 23):

«Առանց երկմտելու և թերահավատության»: Երկմտելը թերահավատություն է: Եթե այն բաներում, որ դավանեցինք Ավետարանից հետո «Հավատամքը» ասելով, մեկն երկմտի ու թերանա, և կամ սուրբ Խորհրդի մեջ, որի համար ասվում է, թե՛ երկյուղով պետք է մնալ Աստծու առաջ, չհավատա, թե [առաջադրվածը Տիրոջ իրական] մարմինն ու արյունն է, և կամ ինչ որ թերանում է Նրա [հանդեպ ունենալիք] հույսի մեջ, այս նախ՝ աղոթքով և գրվածքի խրատներով պետք է ուղղել, ինչպես և գրված է. «Նախ պետք է մաքրվել, և ապա մաքուրին մոտենալ»:

«Այլ Բարի վարքով»: Բարի վարքն այն է, որ ասում է պատվիրանը, անթերի լինել աջից ու ձախից:

«Պարզ մտքով»: Այսինքն՝ ինչպես արտաքուստ է երևում, այնպես էլ ներքուստ [պիտի լինի], և ոչ թե այլ կերպ:

«Միամիտ սրտով»: Ողջամիտ եղիր Աստծու և մարդկանց հանդեպ, և որևէ խորհրդով չմոլորվես:

«Կատարյալ հավատքով»: Հավատքի կատարյալ լինելն է՝ ճանաչել Երեք Անձերին, որպես մի Աստված՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, ու Նրանց մեջ չնկատել առավելը կամ նվազը, կամ առաջ կամ հետոն: Այլ ճշմարտապես հավասար և ամեն ինչում նման ու բնությամբ նույնը: Ծնողը՝ Հայրը, Ծնունդը՝ Որդին և Բխումը՝ Սուրբ Հոգին, Հորից, և ոչ թե [Հոր] ծնունդ: Երեքն էլ անժամանակ և սկզբից՝ Հոր հետ Որդին և Սուրբ Հոգին: Մարմնանալով Որդին Մարիամից անձառապես և անփոխարկաբար, նույն և Ինքը ճշմարիտ Աստված և Մարդ կատարյալ՝ Աստվածային զորությունը ցույց տալով որպես Աստված, և մարդկայինը՝ առանց մեղքեր կրելու, որպես միավորությամբ Մարդ: Նույն Ինքը խաչին ու մահվանը համբերեց, երեք օրից հարություն առավ և մեզանից վերցրեց անեծքը, մեղքն ու մահը, մեր մարմնով համբարձվեց երկինք: Պիտի գա դատելու ողջերին և մահացածներին, հատուցելու յուրաքանչյուրին ըստ գործերի, արդարներին՝ հավիտենական կյանք, իսկ մեղավորներին՝ հավիտենական տանջանք: Նաև մկրտությունը խոստովանելով [որպես] վերստին ծնունդ Սուրբ Հոգուց, և որդեգրություն երկնավոր Հորը: Հավատալ նաև փրկական խորհրդին, [որ] ճշմարտապես Քրիստոսի մարմինն

ու արյունն է, որով միանում ենք Քրիստոսին և Նրա ժառանգակիցը լինում: Եվ այս հավատքով լինում ենք կատարյալ, լցված աստվածգիտության կատարյալ սիրով և եղբայրասիրությամբ՝ անթերի, առավելապես ամեն տեսակ բարի գործերով, այսինքն՝ այն բարիքներով, որոնք [բխում] են աստվածսիրությունից և եղբայրսիրությունից:

«Աղոթքի կանգնենք Աստծու սուրբ սեղանի առջև»: Դարձյալ վերստին հիշեցնում է Աստծու սեղանի առջև կանգնելը, որպեսզի ավելի ահով լինենք:

«Եվ գտնենք ողորմության շնորհ մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մյուս գալստյան և Հայտնության օրը»: Հիշեցնում է Քրիստոսի ահավոր գալուստը, որպեսզի առանց փորձվելու չմոտենանք աստվածային սեղանին: Որովհետև եթե ծանր խղճմտանքով կանգնենք՝ մեծապես կշտամբված կլինենք, իբրև անմաքուր հանդերձներով հարսանիք մտած մեկը: Իսկ եթե, ըստ քարոզի խրատի մաքրելով ախտը, հագած լինենք հարսանեկան հանդերձը, այն ժամանակ ներված կլինենք և Քրիստոսի ողորմությամբ Նրա բարիքները կվայելենք: Չնայած որ բյուրապատիկ լցված կլինենք արդարության վաստակներով, սակայն պարզևերն ողորմությամբ են [տրվում] և առավել բազմապատիկ են, քան վաստակը:

Եվ աղոթքով կնքում է քարոզն՝ ասելով. «Ամենակալ մեր Տեր Աստվածը թող ապրեցնի և ողորմի մեզ»: Որովհետև եթե ողորմությամբ չօգտվենք, չենք կարող այնպիսի մաքրություն ստանալ, քանի դեռ չենք խառնվել Քեզ հետ¹⁷, այլ Քո ողորմածությամբ լինենք արժանի և հասնենք հավիտենական կյանքին. ամեն:

Աղոթք

«Տեր Աստված զորությունների և Արարիչ բոլոր գոյությունների, որ անէությունից բոլորին գոյության բերեցիր»: Տեր Աստված ոչ միայն [ստեղծեց] անմարմին զորություններին, այլև բոլոր եղածներին:

«Որոնց անէությունից գոյության բերեցիր», այսինքն՝ որոնք չկային, անգո էին, սակայն Դու անգոներին գոյության կոչեցիր:

«Որ մեր հողեղեն բնությունը մարդասիրապես պատվեցիր, այսպիսի ահավոր և անպատում խորհրդին սպասավոր կարգեցիր»: Բոլոր էություններից միայն մարդուն պատվեց և կանգնեցրեց [որպես] Իր խորհրդի սպասավոր:

«Դո՛ւ, Տեր, Ում ընծայում ենք այս ընծաները՝ ընդունիր մեզանից այս առաջադրությունը և ամբողջացրու այն Քո Միածնի մարմնի և արյան այս խորհրդակատարության մեջ, ճաշակողներիս համար [որպես] մեղքերի թողության դեղ պարգևիր այս հացն ու բաժակը»: Դո՛ւ, Հայր, Ում այս պատարագները որպես ընծա ենք ընծայում, հաճի՛ր և ընդունիր Քո առջև դրված այս նվերները, և սա Քո Հոգովդ [մարմնի և արյան] խորհուրդը դարձրու, որպեսզի լինի Քո Միածնի Մարմինն ու Արյունը, և ճաշակողներիս համար՝ մեղքերի թողության դեղ:

«Մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մարդասիրությամբ ու շնորհով: Որի հետ Քեզ, միանգամայն և Սուրբ Հոգուդ վայելում է փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

ՈՂԶՈՒՅՆ

Սարկավագը քարոզում է. «Ողջուն տվեք միմյանց սրբության համբույրով, իսկ ովքեր որ չեն կարող հաղորդվել աստվածային այս խորհրդին, ելեք դռան առջև և աղոթեցեք»: Համբույրը սրբությամբ է, երբ սուրբ սիրով է, և ոչ թե նենգավոր կամ պոռնկական խորհրդով, այլ մաքուր մտքով եղբոր հանդեպ, որով կարող եք հաղորդվել: Սովորեցրե՛ք միմյանց: Իսկ ովքեր չեն կարող հաղորդվել աստվածային խորհրդին, դռան մոտ աղոթեցեք:

Դարձյալ սարկավագի հրաման տալը, թե՛ «Ողջուն տվեք միմյանց», այս է նշանակում. ինչպես Եկեղեցու բոլոր բարեձևությունները հոգևոր են և մարմնավոր, և մարմնավորը հայտնողն ու ցուցադրողն է հոգևորի, այնպես էլ սա է խորհրդի տեսանելի [մասը]: Քանզի ժողովրդի հավելը միմյանց մարմնով և միության համար մարմինների շաղկապվելը համբույրով, ցույց է տալիս հոգևոր խառնումի միությունն ու հավասարությունը, ըստ այն խոսքի. «Հավատացյալների բազմությունը մի անձ և սիրտ էր» (Գործք. Դ 32): Եվ միանում են ինչի՞ համար, եթե ոչ՝ ցույց տալու այն, թե Քո բաշխվելու պատրաստ շնորհների պարզներին սպասում ենք միական հույսով ու հավատքով: Եվ բազմությունը համակամությամբ ու սիրով որպես մի անձ է լինում, որպեսզի չծագի ինչ որ պառակտող կարծիք, կամ էլ լույսի անջատում առջևում եղած խորհրդից, ուստի հրամանով, նախ՝ անկատարներին և անջատողական մեղքով բաժանվածներին դուրս հանեց և ապա կատարյալներին ու նույն փափագով համակվածներին տալիս է ողջունի ու սիրո միության հրաման:

Ինչո՞ւ սրանից հետո, հավատքի դաշինքն է երգվում Եկեղեցում, իսկ սարկավագն ողջունում է նախ սուրբ սեղանը, և ապա՝ միմյանց, և դպիրներն երգում են՝ ասելով. «Քրիստոս հայտնվեց մեր մեջ»:

Երբ դպիրները¹⁸ զգուշանում են տաճարի և «մարմնի դռներից», ապա միաբերան հավատի դավանությունն են խոստովանում: Սրանով ցույց են տալիս, թե ինչպես կամքով՝ համբույրի նշանի միջոցով ենք նույնանում, այսպես և՛ հավատքի ուղղափառ դավանությամբ: Եվ այն ժամանակ, նրանցից չկա մեկը, որ չհաղորդվի սրան՝ մեզ միանալու համար:

Դարձյալ՝ Աստծուն են նվիրում հավատքն ու դավանությունը՝ պարզորոշ ցույց տալով, թե այսպիսի հույսով խառնված միացանք Քո հետ՝ ոչ մի թերություն չունենալով Քո Երրորդության իմացությունից, քանի որ ակնկալում են մերձակա ապագայում բարիքներ գտնել: Եվ Քրիստոս մեզնից հավատք պահանջեց՝ իբրև ողորմության գրավական ասելով յուրաքանչյուր բժշկվածի. «Հավատո՞ւմ եք, որ կարող եմ այդ ձեզ անել» (Մատթ. Թ 28):

Սրա համար էլ սրանք նախ Նրա տնօրենության շնորհներն ու Աստվածության փառքն են միաբերան գովերգում և խոստովանում ամբողջ սրտով [իրենց] հավատալը Ամենակալին: Եվ ապա նույն խորհուրդը, որին ամենքը հավատացին, քահանան վերցնում է և ամբողջ ժողովրդի կողմից ընծայում Հայր Աստծուն: Ինչպես օրինակ՝ սարկավագները նրանցից վերցնում են հացը և [փոխարենը] փրկանքը բերում նրանց սեղանին, այսպես էլ [քահանան] վերցնում է նրանցից Քրիստոսի մարմնի խորհրդի հավատքը և նրանց փրկության համար ընծայում Հայր Աստծուն՝ մտքում ասելով. «Սրանք հավատացին Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն, [որ] մեր փրկության համար մարմնացավ, չարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ [կողմում]: [Եվ այժմ] նույն Իրեն և նույն [այն] խորհուրդը, որ եղավ նրանց փրկության համար, ես պահում եմ իմ ձեռքում՝ Քո առջև, Հայր Աստված, [որպես] պատարագ և հաշտության նվեր, Քո՛ կամքի [համաձայն], փրկող քաջ Հովվիդ արյամբ ստացված՝ ամբողջ ժողովրդի վրա»:

ԳՈՀՈՒԹՅՈՒՆ

Սարկավագն ասում է. «Ահով մնանք, երկյուղով մնանք, բարությանք մնանք և նայենք զգուշությամք»: Սարկավագի խոսքը ժողովրդի զգուշության համար է, իսկ նրանցը՝ անձնական խոստովանություն:

«Քրիստոս՝ Աստծու Գառը մատուցվում է [որպես] պատարագ»: Քանզի Քրիստոս է, որ պատարագվում է, և հոգով անմաքուրներն ու ապականվածները [պետք է] դո՛ւրս ելնեն, որովհետև արժանի՝ չեն հոգևոր ուրախությունը վայելելու:

[Թող] խրատեն միմյանց սուրբ գրվածքներով ու դռան մոտ աղոթեն սգացող սրտով ու ջերմեռանդ արտասուքներով և ողբան զրկանքների համար, քանզի հոգևոր հարսանիքից դուրս վտարվեցին, որովհետև ահավոր ժամին արժանի չեղան մերձենալու երկնավոր սեղանին և չերգակցեցին այնտեղ հավաքված հրեշտակներին, չմիացան Քրիստոսին սուրբ խորհրդով և մի անձ չեղան Նրանով:

Արդ, ովքեր այս խորհրդի [կատարման] ժամանակ ելան դուրս, իրենց սխալներն են երկյուղով և ամոթով խոստովանում Աստծու առաջ և հաշտություն խնդրում ամենողորմ Աստծուց՝ Քրիստոս զոհի միջոցով փութով հասնելու քավության: Իսկ անզգամներն՝ Աստծուց և սրբությունից դուրս ելածները՝ մերժվածները, ովքեր չապաշխարեցին, այլ սովորական գործ համարելով խնդամտորեն են ելնում [դուրս] ու մնում անտրտում, առավել ևս շարժում են անբարկանալի Աստծու ցասումը, քանզի ոչ պատուհասվելու և սրբերից բաժանվելու, և ոչ էլ իրենց դուրս մնալու համար չհոգացին, որի պատճառով էլ իրավացիորեն դատվում են:

Քահանան դառնում է դեպի ժողովուրդը և ասում. «Հոր, Որդու և Սուրբ Հոգու շնորհը, սերը և աստվածային սրբարար զորությունը թող լինի ձեր բոլորի հետ»:

Դպիրները՝ «Եվ քո հոգու հետ»: Քահանան որպես թե բաժին վերցնելով Աստծու շնորհներից, այն աղոթքի միջոցով, որը մատուցեց, դառնում ու կնքում է աջով, [այն] տալով ժողովրդին, իսկ նրանք ընդունելով, շնորհակալ են լինում նրան, ասելով՝ թե, այս շնորհը, որ տվեցիր մեզ, թող քո հոգու հետ մյուսներին էլ լինի:

Սարկավագն ասում է. «Դռները, դռները [փակեցեք և] ամենայն իմաստությամբ ու զգուշությամբ, դեպի վեր բարձրացրեք ձեր մտքերն աստվածային երկյուղով»: Դպիրներին հորդորում է զգուշանալ տաճարի դռներից, որպեսզի ոչ միայն նրանք, ովքեր դուրս ելան՝ երախաները և ուրիշները, չնայեն խորհրդին: Սրանով նաև նրանց է զգուշացնում, ովքեր ներսում մնացին, որպեսզի զգույշ ու պատրաստ լինեն հոգու դռների պահպանության համար, որն է զգայարանները՝ աչքը, ականջը և այլն:

Սարկավագը՝ «Ձեր մտքերը վեր բարձրացրեք աստվածային երկյուղով»:

Դպիրները՝ «Ամենակալ Տեր, [մեր մտքերը] Քո վրա են հառած»:

Սարկավագը՝ «Եվ գոհացեք Տիրոջից ամբողջ սրտով»:

Դպիրները՝ «Արժանի է և ճշմարիտ»:

Սարկավագը տեսնելով, որ ժողովուրդն ընդունեց շնորհը քահանայական օրհնությունից, հրամայում է նրանց դեպի վեր՝ առ Աստված բարձրացնել մտքերը: Իսկ նրանք պատասխանում են ոչ [թե] սարկավագին, այլ՝ Աստծուն. «Ամենակալ Տեր, մեր մտքերը Քո վրա են հառած»:

Դարձյալ սարկավագը հրամայում է գոհանալ, իսկ նրանք էլ հանձն առնելով խոստովանում են իրենց գոհանալը, ասելով՝ «Արժանի է և ճշմարիտ»: Բայց այժմ չեն գոհանում, որովհետև

ժողովուրդն ընծան այսինքն՝ հացն ու գինին տվեց քահանայի ձեռքը և նրան որպես հաշտության միջնորդ ու բարեխոս ուղարկեց Հոր մոտ: Եվ քահանան այն վերցնելով, գնաց Հոր առաջ: Եվ սարկավազն առաջանալով, պեսպես խոսքերով զգուշացնում է ժողովրդին, հորդորելով նրանց գոհանալ Տիրոջից: Սակայն ժողովուրդը կանգնած սպասում են քահանային, մինչ նա հաշտեցնող խոսքերով նրանց համար ողորմություն է աղերսում Հորից: Եվ ընծան, որ ուղարկեցին, [Հայրն] ընդունում է քահանայի ձեռքից, որից հետո երգում են գոհաբանական երգ:

Բայց այժմ քահանան ժողովրդից վերցնելով աղոթքի պատճառը, ասում է. «Արժանի՛ է ճշմարտապես և իրավացի ամենահորդոր փութով միշտ երկրպագելով՝ փառավորել Քեզ, ամենակալ Հայր»: Ասում է, ստուգապես արժանի է և ամենահորդոր [կերպով] իրավացի, այսինքն՝ միշտ միմյանց հորդորելով, երկրպագությամբ փառավորել Քեզ Հայր, որ ամենքին հավաքելով խնամում ես:

«Որ Քո անքննելի և արարող խոսքերով վերացրիր անեծքի արգելքը»: Հոր անգննելի և Արարչակից խոսքը՝ Միածին Որդին է, Ուն Հայրն ուղարկեց, իսկ անեծքը, որ կապանք և արգելք էր մեզ, Ինքն Իրենով վերացրեց մեր միջից:

«Որ Քեզ հավատացողներին վերցնելով սեփական ժողովուրդ՝ Եկեղեցի [կազմեցիր]»: Երբ վերացրեց անեծքը, որ միջնորմ ու կապանք էր մեր և Քո մեջ, այն ժամանակ Իր սեփական ժողովրդին, հաստատեց [որպես] Եկեղեցի, նրանց, ովքեր Քեզ հավատացին:

Եվ թե այս ինչպես եղավ, ասում է. «Եվ տեսանելի բնությամբ, որ տնօրինությամբ վերցրեց Կույսից, հոժարեց բնակվել մեր մեջ»: Հոր խոսքի առաջին բնությունն անքննելի ասաց, իսկ սա՝ քննելի, որովհետև ծնունդը Կույսից էր: Թեպետև մարդկայինից վեր էր Կույսից ծնվելը, սակայն իբրև Մարդ ծնվեց Կույսից, ասում է առաքյալը, (Մատթ. Ա 23, Ա Տիմ. Գ 16, Փիլիպ. Բ 7), ըստ Կույսի տնտեսության: Այն է տնտեսությունը, որ վերցրեց Կույսի արյունից և միացրեց Իրեն և դրանով հաճեց բնակվել մեզ հետ մեր բնությամբ:

«Եվ աստվածապես ճարտարապետելով նոր գործերով, երկինքն երկիր դարձրեցիր»: Եվ ինչո՞ւ ճարտարապետեց, և ինչպես երկինքն երկիր եղավ: Քանզի Նա, Ուն առջև չէին համարձակվում կանգնել հրեշտակների խմբերը, զարհուրելով Նրա Աստվածության անմերձենալի փայլակնացայտ լույսից, այժմ մարդ եղավ մեր փրկության համար, շնորհելով մեզ երկնայինների հետ պարելու հոգեղեն պար:

«Եվ սերովբեների ու քերովբեների հետ միաձայն սրբասացությամբ հորինել երգեր և համարձակաձայն գոչելով աղաղակել նրանց հետ ու ասել»: Հորն ասեց, թե Քո Որդին ճարտարապետ եղավ և երկինքն երկիր դարձրեց: Եվ այս է Նրա ճարտարապետությունը, քանզի հրեշտակների խմբերը, որոնք դողում էին Նրա Աստվածության լույսից և չէին կարողանում նայել, Այնպիսին մարդ եղավ ու շրջեց մեզ հետ, և մեզ համարձակություն տվեց պարակից ու երգակից լինելու երկնային ու հոգեղեն սերովբեներին և քերովբեներին ու երգել նրանց երգը:

Երբ ժողովուրդը քահանայից լսում է այսպիսի խոսքեր, հաստատում է նրա խոսքերը և բարձր գոչմամբ այսպես ձայնում Քրիստոսին. «Սուրբ, Սուրբ, Սուրբ ես Տեր Ձորությունների, երկինքն ու երկիրը լի՛ են Քո փառքերով: Օրհնություն բարձունքներում, օրհնյալ ես, որ եկար և գալու ես Տիրոջ անունով. Օվսաննա բարձունքներում»: Ժողովրդի բոլոր խոսքերը [ուղղված] են Քրիստոսին, ինչպես քահանայինը՝ Հորը: «Օվսաննա» թարգմանվում է փրկությունը բարձունքներից:

ՀԻՇԱՏԱԿ

Քահանան բազկատարած ասում է. «Սուրբ, սուրբ, սուրբ ես ճշմարտապես և Ամենասուրբ»: Քահանան ասում է, որ Որդին մեզ ձայնակից արեց սերովբեներին, որը լսելով ժողովուրդը, սկսեց սերովբեների նմանությամբ երեքսրբյան օրհնություն մատուցել Որդուն, իսկ քահանան՝ Հորը: Պողոս [առաքյալը] «Գործք Առաքելոցում», Հոգու [համար] է ասում այս նույնը, քանզի մի է Երրորդության բնությունը, իսկ անձերը՝ երեք:

«Եվ ով [կարող է] համարձակվել, խոսքերով պատմել դեպ մեզ [եղած] Քո անբավ բարեգործությանդ հորդումը»: Ով կարող է հպարտանալ, կամ թե խոսքերով պատմել Հոր անչափ բարի գործերի առատությունը: Ո՞վ իմացավ Տիրոջ միտքը և կամ ո՞վ եղավ Նրան խորհրդակից (տե՛ս Եսայի Խ 13):

«Որ դեռ այն ժամանակ՝ նախկինում մեղքով ընկածներին զանազան եղանակներով խնամելով սփոփեց»: Սկսում է պատմել Աստծու երախտիքների մասին, սկսած աշխարհի ստեղծումից, ասելով, թե հենց սկզբից, երբ մարդկային բնությունը մեղքի պատճառով զրկվեց դրախտից, [Աստված նրանց] զանազան օրհնակներով մխիթարեց:

Իսկ թե ինչո՞վ մխիթարեց, ասում է. «Մարգարեներով՝ օրենքների տվչությամբ, քահանայությունով և ստվերակերպ երինջների մատուցումով»: Նախ, [մեզ] տվեց Մովսես մարգարեին և մյուսներին, ապա՝ Օրենքը, Մովսեսի միջոցով: Նաև [տվեց] քահանայապետ Ահարոնին և նրա նմաններին: Այլև երինջները, որոնց մատուցում էին [իբրև] զոհ և ողջակեզ, որոնք ստվերն ու շուքն էին այս ճշմարիտ պատարագի, որն է Քրիստոս: Այլ, երբ սրանք չկարողացան փրկել, սրանցից հետո Որդուն ուղարկեց:

Ինչպես և ասում է. «Իսկ այդ օրերի վախճանին մեր բոլոր պարտքերի դատավճիռը խափանելով»: Որովհետև Հայրը կամեցավ պատռել մեր բոլոր պարտագրերը, ինչպես և ասում է այն:

«Քո Միածին Որդուն տվեցիր մեզ [որպես] Պարտապան և Պարտք, Ջոհ և Օծյալ, Գառ և Երկնավոր Հաց, Քահանայապետ և Պատարագ»: Այս բոլորի համար Որդին եղավ Պարտապան Քահանա, որովհետև իբրև Ադամի անեծքների Պարտապան՝ խաչ բարձրացավ: Իսկ Պարտք, քանզի մենք բոլորս մեր մեղքերի պարտքերի փոխարեն Նրան ենք տալիս ամեն օր: [Նա] մորթվում է որպես Ջվարակ և որպես Օծյալ Քահանա, Իրեն մատուցում Հորը, մեռնում է որպես Ամենը Գառ և մեզ համար Կերակուր լինում՝ [որպես] երկնքից իջած Հաց: Որպես Քահանայապետ թափեց Իր արյունը և պատարագվեց՝ որպես ճշմարիտ Ջոհ:

Ինչպես ասում է. «Որովհետև Դու Ինքդ ես բաշխող և նույն Ինքդ ես բաշխվում, մեր մեջ միշտ անսպառապես»: Մինչև այստեղ օրհնակներով էր պատմում, իսկ այժմ պարզ ասում է Որդու տնօրենության [մասին]:

«Քանզի ճշմարտապես և առանց մարդկային ցնորքների մարդացավ ու անշփոթ միությամբ մարմնացավ Աստվածածնից՝ Սուրբ կույս Մարիամից»: Ճշմարտապես և առանց ցնորքի, այսինքն՝ առանց մտքի կասկածանքների մարդ եղավ: Իսկ մարդանալն անշփոթ էր՝ Աստծու և մարդու միությունը: Չնայած երկու բնությունները միացան, սակայն ոչինչ չշփոթվեց, այլ մնացին կատարյալ, որովհետև Քրիստոս Աստված է և Մարդ կատարյալ:

«Առանց մեղքի ճանապարհորդեց մարդկային կյանքի բոլոր կրքերի միջոցով»: Ինչպես ստույգ ճանապարհ են գնում, այդպես Նա կրեց մեր բոլոր կրքերը, բացի մեղքից, որոնք են քաղցը, ծարավը և մնացած բոլորը:

«Եվ Աշխարհակեցուցն ու մեր փրկության Պատճառն Իր կամքով եկավ դեպի խաչին»: Եվ բոլորից հետո [Իր] կամքով բարձրացավ խաչ, որը մեր փրկության համար եղավ պատճառ ու առիթ:

«Վերցնելով հացն Իր սուրբ, աստվածային, անմահ, անարատ և արարչագործ ձեռքը, օրհնեց, գոհացավ, սրբեց, բեկանեց և տվեց Իր ընտրյալ, սուրբ ու բազմած աշակերտներին՝ ասելով. «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ Մարմինը, որ ձեզ և շատերի համար է բաշխվում՝ որպես մեղքերի քավություն և թողություն»: Սա խորհրդագործեց Վերնատան մեջ, ինչպես և պատմում է Ավետարանը: Վերցրեց հացն Իր արարչագործ ձեռքերի մեջ, որով երկինքն ու երկիրը գոյացրեց, օրհնեց և աստվածացրեց, գոհացավ, մեզ համար որպես օրինակ լինելով, որպեսզի մենք էլ, երբ ճաշակել կամենանք հացից, նախ արժանի է, որ գոհանանք Հորից և Որդու տնօրենությունից: [Հացը] խաչանման բեկանեց և տվեց իր սրբված աշակերտներին, քանզի մենք էլ այն միայն սրբերին ու ընտրյալներին ենք տալիս:

«Սա է Իմ Մարմինը, որ ձեզ և շատերի համար»: Որովհետև ոչ միայն աշակերտների, այլ Քրիստոսին հավատացող բազմության մեղքերի քավության ու թողության համար է բաշխվում:

«Նույնպես և բաժակը վերցնելով օրհնեց, գոհացավ, խմեց ու տվեց Իր սուրբ, ընտրյալ և բազմած աշակերտներին, ասելով՝ «Խմե՛ք սրանից ամենքդ, այս է Նոր Ուխտի Իմ արյունը, որ թափվում է ձեր և շատերի մեղքերի քավության և թողության համար»: Բաժակը, որ ասաց, թե նախ Ինքը խմեց, այս է նշանակում. «Այնպիսի ախորժեղի փափագով եմ ճաշակում մահը, ինչպես մեկը ծարավում է բաժակին: Նույնպես և դուք պարտավոր եք ծարաված սրտով մերձենալ Իմ սուրբ մարմնին ու արյանը»:

«Եվ այն միշտ Իր հիշատակի [համար] կատարելու պատվիրանն ավանդեց մեզ, Քո Միածին Բարերար Որդին»: Եվ ինչ Ինքն արեց, նույնը նաև մեզ պատվիրեց անել, որովհետև երբ մենք այն կատարում ենք, դրանով Նրա մահվան հիշատակն անմոռաց է լինում մեր մեջ:

«Եվ մարմնով, որ ազգակցությամբ մեզանից վերցրեց, իջնելով մահի ստորին վայրերը, դժոխքի նիզեղը հզորապես ջախջախեց, և Քեզ միայն ճանաչեցրեց Ճշմարիտ Աստված՝ Աստծուդ կենդանիների և մեռելների»: Մարմնով իջավ գերեզման և բանական հոգով՝ դժոխք, որ մահվան ստորին վայր է կոչվում, և դրա նիզեղը, որոնք դևեր էին, ջախջախեց՝ (հալածեց), այսինքն՝ զորեղապես արհամարհեց: Եվ այս զորությամբ, որ արեց, ցույց տվեց մեզ, որ Ինքն է միայն կենդանիների ու մեռելների Աստվածը, որովհետև ինչ որ երկրում կատարեց Իր կամքով՝ մարդկանց փրկության [համար], նույնը դժոխքում ցույց տվեց:

Եվ վերցնում է ընծան ձեռքն ու ասում. «Եվ արդ՝ մենք, Տե՛ր, ըստ այս հրամանի կատարում ենք Քո Միածնի մարմնի և արյան փրկական այս խորհուրդը»: Եվ երբ այս բոլոր աղերսական խոսքերն ասաց, նախ դրանցով հաշտության բերեց Երկնավոր Հորը, համարձակ պատգամավոր քահանայի հետ, որ ուղարկվեց ժողովրդի կողմից, մանավանդ որ, ողորմության պարտական դարձրեց Հորը: Քահանան վերցնում է ընծաներն իր ձեռքը, որպես թե այս ասելու Հորը. «Արդ, ես Քո առաջ կատարեցի Որդուդ տնօրենության խորհուրդը, այժմ Քո ձեռքն եմ հանձնում Քո Միածնի չարչարանքների նշանակը, որն է հացն ու գինին, որ այժմ բռնել եմ իմ ձեռքում: Եվ Դու կվերցնես սա իմ ձեռքից և որոնելով կտեսնես դրա [վրա] վերքերի սպիները, որ մեր համար է, և կողի խոցումը, բևեռների տեղը, թուքը, ապտակն ու բոլոր մնացածները [ինչ որ կա], քանզի տեսնելով այդ բոլորը, կիջնես դեպ ողորմության գուրջը, մեղքով հանցավորներիս [համար]»: Եվ այդ պատճառով էլ ասում է. «Եվ արդ՝ մենք, Հայր, Քո Միածին Որդու պատվիրանի համաձայն, Նրան, Ով գիտի Քո կամքը, համարձակվեցինք կատարել այս մեծ խորհուրդը»:

«Հիշում ենք մեզ համար Նրա կրած փրկագործ չարչարանքները, կենսատու խաչելությունը, երեքօրյա թաղումը, հրաշափառ հարությունը, աստվածապես համբարձումը, Ո՛վ Հայր, Քո Աջ կողմում նստելը և Նրա ահավոր ու փառավոր մյուս անգամ գալուստը, խոստովանում ենք և օրհնում»: Ասում է՝ այս ամենը, որոնք թվարկեց քահանան, մտաբերում ենք, երբ այս խորհուրդն ենք կատարում, և երբ այս ամենը խոստովանում ենք, առջևում դրված հացի ու բաժակի՝ արյան համար, այնժամ դարձյալ ասում ենք:

Եվ [քահանան] ընծան դնելով սեղանի վրա ասում է. «Եվ Քոնը, Քոնն եղողներից Քեզ ենք մատուցում, ըստ ամենայնի և ամենքի համար»: Այսինքն՝ Քո կամքով ուղարկված Քոնինին՝ Միածնին դարձյալ Քեզ նվեր և ընծա ենք մատուցում: Եվ ժողովուրդն այն ժամանակ տեսնելով, որ այն Նվերը, որն իրենք տվեցին իրենց միջնորդի ձեռքը, նրա ձեռքից ընդունեց Հայրը, ուրախանալով զվարճանում է:

Եթե սկզբում արժանի համարվեց գոհանալ, ապա այժմ՝ երգել, ասելով. «Ամեն ինչով օրհնված ես, Տե՛ր: Օրհնում ենք Քեզ, գովում ենք Քեզ և գոհանում Քեզանից, աղաչում ենք Քեզ, մեր Տե՛ր Աստված»: Մեծ և բազմապատիկ են մեր նկատմամբ Քո երախտիքները, Քրիստո՛ս, որ նախկինում արեցիր և այժմ նորից ես անում: [Այն] բոլոր բարիքների համար, որ արեցիր, օրհնում և գովում ենք Քեզ ու գոհանում: Եվ ակնկալում ենք, թե նորից ես անելու: Աղաչում ենք Քեզ, որ կատարես [այդ] և չանարգես մեզ:

Քահանան բազկատարած ասում է. «Արդարև, Քեզ ենք գովում մեր Տե՛ր Աստված և միշտ Քեզանից գոհանում, որ զանց արեցիր մեր անարժաններիս [մեղքերը] և այնպիսի ահավոր և անպատմելի խորհրդին սպասավոր կարգեցիր»: Քահանան ժողովրդից փոխ է առնում գոհաբանական երգերը և Հորը մատուցելով ասում. «Ճշմարիտ է Քեզանից ամեն օր գոհանալ, որովհետև անտեսեցիր մեր չար գործերը, և Քո Միածին Որդու անպատմելի խորհրդին մեզ սպասավոր դարձրեցիր»:

«Ոչ թե մեր ինչ-որ բարեգործությունների համար, որոնցից շատ հեռու ենք և միշտ ունայն ենք գտնվում, այլ Քո բազմահորդ ներողամտությանդ ապավինելով՝ համարձակվում ենք մոտենալ Քո Միածնի՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մարմնի և արյան սպասավորությանը»: Ճշմարտապես միշտ Աստծու ներողամտությանն աչք հառելով ենք համարձակվում մոտենալ աստվածային սեղանին և ոչ թե մեր վստահացած գործերով: Եվ Դու այժմ տես, որ միայն գոհանում է, քանզի [Հայրն] ընդունեց ընծան և խնդրվածը նրա ձեռքից:

«Ում վայելում է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

ՎԵՐԱԿՈՉՈՒՄ

«Խաղաղություն ամենքին»:

Ժողովուրդը՝ «Քո անձիդ նույնպես»:

Սարկավազը՝ «Աստծուն երկրպագենք»:

Ժողովուրդը՝ «Քո առաջ, Տե՛ր»:

Քահանան խոնարհվելով երկրպագում է սեղանին ու ասում:

Պետք է իմանալ, որ աղոթքի բոլոր խոսքերը, որ մինչև այս ասվեցին քահանայի կողմից, այնպիսին են, ինչպես օրինակ՝ իշխաններից մեկը երբ բարկանում է իր ծառայի [վրա], ինչ-որ հանցանքների համար, և [նրա] սիրելիներից որևէ մեկը երբ ցանկանում է նրան հաշտության

բերել ծառայի հետ, նախ աղերսում է, որ հաշտվի և ընդունի ծառայի տված ընծան: Եվ երբ իշխանն ընդունում է ընծան, ծառան իմանում է, որ հաշտվել է իր հետ: Ապա ծառան գոհանում է նրանից և համարձակվում ուրիշ խնդրվածքներ ևս հայցել: Նույնը և այժմ միջնորդող քահանան արեց, որովհետև պատմեց աշխարհի ամբողջ տնօրենության [մասին], ապա ընծան տվեց Հորը: Երբ Հայրը վերցրեց և հոժարեց, քահանան գոհացավ Նրանից: Իսկ այժմ համարձակվում է ուրիշ խնդրվածքներ ևս հայցել Նրանից: Եվ ո՞րն է այդ խնդրվածքը:

Աղոթք

«Երկրպագում, աղաչում ու խնդրում ենք քեզանից, Ո՛վ Բարերար Աստված, ուղարկի՛ր մեզ և [Քո] առաջ դրված այս Ընծայի վրա Քո մշտնջենավորակից և էակից Սուրբ Հոգուն»: Սուրբ Հոգուն է աղերսելով խնդրում, Ով այն ժամանակն Որդու տնօրենության կատարումից հետո իջավ սուրբ առաքյալների վրա: Քահանան նախ պատմում է Որդու տնօրենության մասին, ապա երկրպագությամբ Հորից հայցում Սուրբ Հոգին:

Բայց եթե մեկը տարակուսի և [ասի], թե ինչո՞ւ է Սուրբ Հոգուն խնդրում իջնել և ոչ թե Որդուն, հացն ու բաժակը խորհրդագործելու [համար] Իր Մարմնի և Արյան, թող այսպես իմանա, որ չնայած մի է Երրորդության կամքը, սակայն բոլոր շնորհների բաշխումը Սուրբ Հոգուց է իջնում մեր վրա, և Սուրբ Հոգին է կատարողն ամեն շնորհների, ինչպես քո համար օրինակ ունես նախ մարգարեներին, ապա՝ առաքյալներին: Այլև Որդին Ինքը նախ տնօրինաբար վերցրեց Հոգին Հորդանանում, ապա Հոգով տարվեց անապատ՝ փորձվելու սատանայից ու հաղթեց փորձողին: Նույնպես և այժմ Սուրբ Հոգին իջնում է Քրիստոսի նշանակների վրա, ինչպես այն ժամանակ, և այն դարձնում կատարյալ Աստված:

Եվ քահանան խաչակնքում է ընծան և ասում. «Որով հացն օրհնելով, ճշմարտապես կդարձնես մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մարմինը»:

Սարկավազն ասում է. «Ամեն»:

Քանի որ մինչև այժմ հացն ու գինին միայն օրինակն էր [Տիրոջ մարմնի և արյան]: Այժմ քահանան Հորից հայցում է Սուրբ Հոգին, որպեսզի Նա իջնի և սրբելով Քրիստոսի մարմնի և արյան նշանակը, ճշմարտապես դարձնի Քրիստոսի Մարմինն ու Արյունը: Ինչպես օրինակ. մեռած մարդը միայն մարդու օրինակն է և ոչ [թե] ճշմարտապես մարդը, քանզի չունի հոգի, որը կենդանացնում է [նրան]: Իսկ եթե լցվի Աստծու շնորհներով, ապա հոգին կմտնի այն մեռած (անշունչ) մարմինը, ու կկենդանացնի այն, այսուհետև մարմինն ոչ թե մարդու օրինակը կլինի, այլ՝ ճշմարտապես կենդանի մարդ: Այսպես և հացն ու գինին մինչև այժմ նշանակը և օրինակն էին Քրիստոսի, իսկ երբ կատարող Հոգին իջնում և կատարում (սրբագործում) է, այն ճշմարտապես լինում է Քրիստոս: Եվ ինչպես այն մեռած մարմնի մեջ հոգին է գալիս աներևութաբար և կենդանացնում, և երբ կենդանանում է մարմինը, այլ ձևի չի փոխակերպվում, այլ միայն կենդանի գորությունն է նրա մեջ ավելանում: Այսպես և Սուրբ Հոգին աներևութաբար իջնում է հացի և գինու վրա: Եվ ոչ թե հացի ու գինու ձևը մսի ու արյան է փոփոխում, այլ միայն Քրիստոսի մարմնի և արյան աստվածային գորությունն ու ներգործությունն է հացի և գինու վրա տպավորվում:

«Որպեսզի սա մեզ բոլոր մերձեցողներիս համար լինի ձերբազատում դատապարտությունից՝ մեղքերի քավության և թողության համար»: Սա դատապարտության է մատնում անարժաններին, ովքեր անխտրաբար մոտենում են սրան, որպես սոսկ հացի և գինու: Նաև նրանցն է դատապարտությունը, ովքեր մարդկանցից փառք որսալու պատճառով կամ հարստության, ազահության համար պատարագում են Քրիստոսին, [դրանք] հայտնապես դատապարտվում են քրիստոսավաճառ հրեաների հետ:

ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվ այսուհետև տեսանելի նվերներով աղերսում է Հորը, քանզի Սուրբ Հոգին իջավ Ունծաների վրա, և անկենդան նյութը կենդանացավ, անշունչը՝ շնչավորվեց, օրինակը դարձավ ճշմարտություն և նշանակը ճշմարտապես դարձավ Քրիստոսի Մարմինը և Արյունը:

Որի համար էլ այժմ իբրև Աստծու մեջ հայելով հայցում է՝ ասելով. «Սրանով շնորհիք սեր, հաստատություն և ցանկալի խաղաղություն ամբողջ աշխարհին, սուրբ Եկեղեցուն և բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, քահանաներին, սարկավագներին, աշխարհի թագավորներին, իշխաններին, ժողովուրդներին, ճանապարհորդողներին, նավարկողներին, բանտարկվածներին, վտանգվածներին, նեղվածներին և նրանց, ովքեր բարբարոսների դեմ են պատերազմում»: Ասում է՝ սրանով, այսինքն՝ այս աստվածացած ընծայի միջոցով, Հայր, մեզ շնորհիք սեր առ Աստված և մարդիկ, հաստատություն՝ հավատքի և բոլոր բարի գործերի մեջ, խաղաղություն՝ առ Աստված և մարդիկ, հոգեպես և մարմնապես: Թեպետև տալիս ես այս մեծ պարգևն ամբողջ աշխարհին, սակայն առավելապես [տուր] Քո հոտին՝ քրիստոնեական Եկեղեցիներին:

Ապա գլխավորներից սկսելով՝ մինչև հետինի համար, ողորմություն է հայցում: «Սրանով և օդին շնորհիք բարեխառնություն և անդաստաններին՝ պտղաբերություն, իսկ զանազան ցավերով տառապողներին՝ շուտափույթ առողջություն»: Սրանով ցույց է տալիս, թե բոլոր նրանք, ովքեր հավատով ակնկալում են այս աստվածային շնորհը, ստանում են մեծամեծ պարգևներ:

«Սրանով հանգիստ շնորհիք նախկինում ի Քրիստոս վախճանված բոլոր ննջեցյալներին՝ նախահայրերին, հայրապետներին, մարգարեներին, առաքյալներին, վկայողներին, եպիսկոպոսներին, երեցներին, սարկավագներին ու Քո սուրբ Եկեղեցու բովանդակ ուխտին, և աշխարհական կարգից հավատքով վախճանված բոլոր տղամարդկանց և կանանց: Որոնց հետ և մեզ այցելության արի, Բարերար Աստված, աղաչում ենք»: Սրանով ցույց է տալիս, թե ոչ միայն ողջերի, այլև նրանց, ովքեր միանգամայն ճշմարիտ և սուրբ հավատով ննջեցին ի Քրիստոս, սա հույս ու փրկության ակնկալություն է բոլորի համար: Եվ սկսելով Ադամից, թվարկում է բոլոր առաջին նահատակներին, ովքեր հայրեր ու հայրապետներ են կոչվում, ապա առաքյալներին, մարգարեներին և մնացած բոլորին:

Իսկ եթե մեկն ասի, թե ինչո՞ւ այստեղ արդարներին հիշատակում է իբրև կարոտյալների, որոնց բարեխոսությունը մենք ակնկալում ենք: Այսպես իմացիր: Թեպետև նրանք փառավորվեցին և ստացան, սակայն ամենևին լրումին չհասան, այլ օրեցօր քաղցում են և գերազանցություն խնդրում: Քանի որ այն անմարմին փառքը, որին նրանք հասան, հնարավոր չէ, որ վախճանը լինի, որովհետև այն փառքը հոգևոր իմաստությունն ու աստվածային գիտությունն է: Արդ, եթե այս երկրավոր իմաստությունը հնարավոր չէ, որ իր լրումին հասնի, ո՞րչափ առավել ևս Նա, որ հոգևոր է ու աստվածային: Այլ միշտ օրեցօր փառքից փառք են բարձրանում, ինչպես հրեշտակները, քանզի ամեն օր իմաստություն են վերցնում Աստծուց: Այսպես էլ սրբերը:

Այս պատճառով նախ նրանց [համար] է հայցում Քրիստոսով ողորմություն, ապա մյուսներին հիշատակում մեկը մյուսի ետևից: Բայց դու տես, ո՞վ իմաստուն և խոհեմ այր, աղոթքների կարգը և խորհուրդը, որ մատուցում ես, թե ինչպես նախ ողջերին ես հիշատակում և ապա ննջեցյալներին: Սրանով հաստատ իմացիր, որ նախ ողջերինն է փրկությունը՝ աստվածային այս

գոհագործմամբ, և հետո՝ մեռյալներինը: Ունայն են նրանց խոսքերը, ովքեր տղայական մտքով մտածում են, թե հարկ չէ ողջերից մեկին հիշատակել պատարագի ժամանակ: Ո՛վ եղբայր, մի՞թե թագավորները, իշխանները, եպիսկոպոսները, քահանաները, ճանապարհորդները, նավարկողները, հիվանդները և մյուսները կենդանի չեն:

Արդ, կամենո՞ւմ ես սովորել ճշմարտությունը: Պատարագը, որ մատուցվում է, հնարավոր չէ միայն մեկի համար կատարել, ինչպես կարծում են [ոմանք], այլև՝ բովանդակ աշխարհի, ինչպես և հայտնի են դարձնում աղոթքի խոսքերը: Բայց եթե մեկը հավատքով քո ձեռքն ողորմություն տա, ինչ էլ որ դա լինի, և հանձնարարի քեզ պատարագի ժամանակ հիշատակել իրեն կամ ուրիշներին, ողջերին կամ մեռածներին, նախ քննիր և տես նրա գործերը, թե արժանի՞ է այսպիսիներին հիշել ահավոր խորհրդի առաջ: Միգուցե անառակ կամ պոռնիկ, կամ շնացող և արբեցող, կամ զրկող և անօրեն մեկը լինի: Ուրեմն, եթե այսպիսիներից ինչ որ բան վերցնես և պատարագես Քրիստոսին, [ապա] միացար նրանց չարիքներին ու խաբված կգտնվես ոչ միայն խնդրվածքներիդ, այլև քահանայական կարգիդ մեջ: Իսկ եթե նա երկյուղած և աստվածապաշտ մեկը լինի և քո միջոցով ինչ-որ ողորմություն տա, իրեն պատարագի ժամանակ հավատով հիշատակելու համար, որ մատուցում ես, թեպետև աշխարհի համար ես դու պատարագ մատուցում, սակայն նա, ով տվեց ողորմությունը, փոխարենը կստանա ըստ իր հույսի: Ո՛չ միայն այն պատարագից, որ դու մատուցեցիր, այլև՝ այն բոլորից, որ աշխարհի բոլոր կողմերի ուղղափառ եկեղեցիներում պատարագվում է Քրիստոս, այս կյանքում հարյուրապատիկը կվերցնես և աշխարհի վախճանին, որ գալու է, հավիտենական կյանքը կժառանգես: Որովհետև մի է Տերը, և մի է Նրա արյան ու մարմնի խորհուրդը, որ կատարվում է ամբողջ տիեզերքում: Նույնպես և եթե ննջեցյալների համար ես պատարագում, քննիր և տես, արդյո՞ք բարի գործերով գնացին աշխարհից, կամ թե, մեղանչեցին և դարձյա՞լ զղջացին ու խոստովանությամբ, արտասուքներով հաճելի եղան, ողորմության արժանացա՞ն: Իսկ ովքեր այդպես չեն, այլ անզգուշության ու անզղջության մեջ նրանց գտավ մահը, և վախճանի պահին էլ արժանի չեղան զղջման՝ նրանց արժանի չէ հիշատակել պատարագով:

Առավելապես նաև քո անձի [համար] զգույշ և պատրաստ եղիր՝ ամեն ինչում սուրբ և մաքուր լինել բոլոր արատավոր մեղքերից, մանավանդ ազահության և փառասիրության ախտից, որովհետև ահա քրիստոսավաճառ կլինես, որ ավելի չար է, քան Հուդայինը:

Իսկ այժմ, թե ի՞նչ է նշանակում սեղանի մոտ սրբերի հիշատակումն ի լուր ժողովրդին: Սարկավազը ժողովրդի հայրն է, որովհետև ինչպես քահանան, որ մեծ էր պատվով, Քրիստոսի հիշատակը մատուցեց Հորը, նույնպես և սարկավազը, որ նրա սպասավորն է, սրբերի հիշատակն է կատարում, քանզի սրբերը Հիսուսի մարմնի անդամներն են: Իսկ ով սեղանի մոտ անուշահոտ անուշահոտ խնկերով հանդերձ հիշատակում է սրբերին, հայտնի է դարձնում, թե սրբերն իրենց անուշահոտ առաքինություններով մոտ են Աստծուն: Եվ այն պատարագի ավարտից հետո է անում, որովհետև նախ Քրիստոս պատարագվեց, ապա՝ սրբերը մահակից և չարչարակից եղան Քրիստոսին, և ինչպես Քրիստոսի մահն ենք հիշատակում Հոր հետ հաշտության համար, այսպես էլ՝ Նրա սրբերինը: Իսկ որ բարձր ծայնով գոչում է ի լուր ժողովրդի, [այն է], որպեսզի լսելով նախանձախնդիր լինեն նրանց վարքին:

Քահանան ասում է. «Սուրբ կույս Մարիամ Աստվածածնի և Հովհաննու Մկրտչի, սուրբ Ստեփաննոս Նախավկայի և բոլոր սրբերի հիշատակը թող լինի այս սուրբ պատարագին, աղաչում ենք»: Արդ, եթե սրբերին հիշատակելու կարգը սարկավագինն է, ինչպես և ասվեց, արդ ինչն է նախ քահանան սկսում: Որովհետև այս խոսքերն աղոթքի են նման, իսկ սարկավագն իշխանություն չունի աղոթք ասել ժողովրդի առաջ, այլ միայն՝ քարոզել: Այս պատճառով, նախ

քահանան է սկսում, կարծեք հրաման և համարձակություն տալով սարկավագին, ապա նա [այն] ստանալով նրանից, հիշատակում է մյուս սրբերին:

Սարկավագը խնկարկելով սեղանի շուրջը, գալիս է սեղանի աջակողմը, դեմքն ուղղում Պատարագին և ի լուր ժողովրդի բարձր ձայնով ասում. «Սուրբ առաքյալների, մարգարեների, վարդապետների ...» և այլն, ըստ կարգի: Այս է սարկավագի խոսքերի իմաստը: Քանզի նա Հորն ասում է, թե սուրբ Պատարագին, որ պատարագվեց, թող հիշվեն բոլոր սրբերի առաքինությունները Քո առջև՝ բարեխոսելու մեր փրկության համար:

Իսկ ժողովուրդը միանալով սարկավագի խոսքերին, ասում է. «Հիշի՛ր, Տեր և ողորմի՛ր»: Եվ [այս ասում են ոչ թե այն պատճառով], որ իբրև նրանք մոռացվել են Աստծու առջև, որի համար «հիշել» են ասում, այլ այսպես են բացատրում. թե նրանց առաքինությունների հիշատակումով, որ Քո առաջ անմոռաց են, և նրանց նայելով Քո գուրջ մեր վրա շարժի՛ր, քանզի մեր ազգակիցներն են:

Իսկ քահանան կրկնելով նրանց խոսքերն ասում է. «Հիշի՛ր, Տեր և ողորմի՛ր, օրհնի՛ր Քո Սուրբ Ընդհանրական և Առաքելական Եկեղեցին, որ փրկեցիր Քո Միածնի պատվական արյունով ու ազատեցիր սուրբ Խաչով: Շնորհի՛ր սրան անշարժ խաղաղություն»: Քահանան խնդրում է Հորը հիշել Քրիստոսին և Իր սրբերին: Քրիստոսին՝ Իր գործերով, որ նախ ինքը՝ քահանան հիշատակեց, և սրբերին, որ սարկավագը հայտարարեց Նրան առընթեր: Կրկնում է աղոթքը, որ մինչ այդ Քրիստոսով միայն խնդրեց, այժմ վերստին Նրանով և Իր սրբերով, ովքեր Նրա անդամներն են: Թախանձում է Հորը հիշել և ողորմություն ու խաղաղություն պարգևել Կաթողիկե [Եկեղեցուն], այն է՝ բոլոր եկեղեցիներին, որոնք առաքյալների քարոզությամբ հավաքվեցին մի հոտի մեջ՝ գնված Միածնի արյունով:

«Հիշի՛ր, Տեր և ողորմի՛ր, օրհնի՛ր բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, ովքեր ճշմարիտ վարդապետությամբ մեզ համար մեկնաբանում են ճշմարտության Խոսքը»:

«Եվ առավել ևս [հիշի՛ր] մեր եպիսկոպոսապետին (անունը)՝ շնորհելով մեզ ճշմարիտ վարդապետությամբ երկար օրեր»: Ուղղափառ դավանող եպիսկոպոսների համար է ասում, ովքեր Խոսքը բացատրողներ են, այսինքն՝ մեկնիչներ և ուսուցիչներ:

Իսկ սարկավագը քահանայի աղոթքի սկսվելու ժամանակ դարձյալ խորհրդաբար գալիս է իր նախկին տեղը՝ քահանայի աջակողմը և սկսում ասել. «Գոհություն և փառաբանություն ենք մատուցում Քեզ, մեր Տեր Աստված, այս սուրբ և անմահ Պատարագի համար, որ [մատուցվում է] սուրբ սեղանի վրա ...» և այլն, ըստ կարգի: Սարկավագի քահանայի աջ կողմում կանգնելը, քահանայի հանդեպ [ունեցած] նրա պատիվն ու առավել մոտիկությունն է նշանակում, ինչպես և Ավետարանի բառերով սրբերի հույժ մտերմության համար ասում է. «Աստծու աջում են»: Նույնը և ինքը սարկավագը ցույց տվեց, որ սեղանի աջակողմը գնաց և հիշատակեց սրբերին:

Քահանան ասում է այս աղոթքը. «Հիշի՛ր, Տեր և ողորմի՛ր, օրհնի՛ր Քո առաջ կանգնած ժողովրդին և պատարագ մատուցողիս: Պարգևիր սրանց [իրենց] պետքերն ու օգտակարները»:

«Հիշի՛ր» ժողովրդին, որ կանգնած է [Աստծու] առաջ սպասավորելու, և պատարագը մատուցողներին, որոնք քահանայական բոլոր դասերն են: Թեպետև միայն մեկն է մեծարվում այդ պատվի մեջ, սակայն բոլորն էլ, և՛ քահանաները, և՛ դպիրները, ովքեր կանգնած սպասավորում են աստվածային սուրբ խորհրդին, յուրաքանչյուրն ըստ իր չափի պատարագ մատուցող է:

«Հիշի՛ր, Տեր և ողորմի՛ր, օրհնի՛ր Քո սուրբ Եկեղեցու պտղաբերներին և ուխտավորներին, և նրանց, ովքեր հիշում են աղքատներին ողորմությամբ: Եվ հատուցիր նրանց իրենց պարտքերը Քո ընդաբույս առատածեռնությամբ, հարյուրապատիկ առատությամբ՝ այստեղ և

հանդերձյալում»: Այս խոսքերով ամբողջացնում է բոլոր ընծայաբերների և պողաբերների հիշատակը, ովքեր Եկեղեցուն, քահանային կամ աղքատներին ինչ որ բան նվիրեցին: Եվ հանդիմանում է նրանց, ովքեր թերահավատությամբ հաշիվ ու պատասխան են պահանջում և փրկությունը միայն մի անձի [համար] են նկատում: Իսկ «ընդաբույսը» բնութենակից է ասվում, որովհետև կցորդ է Աստծու բնությանը Նրա առատությունը:

«Հիշիր, Տեր և ողորմիր, գթա հանգուցյալների հոգիները, հանգստացրո՛ւ նրանց, լուսավորիր և նստեցրո՛ւ Քո սրբերի հետ երկնքի արքայությունում, արժանացրո՛ւ Քո ողորմությանը»: Նախ ողջերին է հիշում, հետո՝ հանգուցյալներին, ինչպես և առաջ, որովհետև սա կրկնությունն է նախընթաց աղոթքների: Իսկ թե ինչի՞ համար դարձյալ կրկնեց: Այնտեղ, երբ Քրիստոսի հիշատակումը կատարվեց, հացն ու գինին անմահացան՝ կենդանարար դարձան, նույն աղոթքն արեց: Իսկ այժմ սրբերի հիշատակումից հետո պատշաճ համարվեց վերստին նույն աղոթքը կրկնել:

Եվ այստեղ, եթե կամենում ես մեկին անունով հիշատակել՝ բարի է, հիշիր:

«Հիշիր, Տեր և նրանց, ովքեր մեզ պատվիրեցին աղոթքի մեջ հիշատակել ողջերին ու հանգուցյալներին, կառավարիր նրանց և մեր խնդրվածքների ընթացքը դեպի ուղիղը, որ լցված է փրկությամբ: Եվ վարձատրիր բոլորին անանց և երանելի բարիքներով»: Ահա, որոյակ, տես և հասկացիր ուղիղ մտքով, թե ինչպես բոլորին՝ ողջերին ու հանգուցյալներին ամփոփեց լոկ մի խոսքով, էլ ինչի՞ համար է քեզ պետք մեկին անունով հիշատակելը: Կառավարիր, այսինքն՝ ուղղիր: Քանզի շատ անգամ անպատշաճ և թյուր են լինում մեր խնդրվածքները: Որի համար էլ խնդրում է, որպեսզի նրանց կամքը, ովքեր իրենց հանձնեցին մեզ և մերը [նունյալես], ուղիղ ընթացքի մեջ դնի, ինչը մեզ համար փրկության առիթ է, որպեսզի վարձատրի բոլորին հավիտենական բարիքներով:

«Եվ գտելով մեր խորհուրդները՝ [մեզ] տաճար դարձրո՛ւ՝ մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի՝ Քո Միածնի Մարմինն ու Արյունն ընդունելու համար»: Խնդրում է, որպեսզի պարզ ու մաքրամաքուր լինեն ճաշակողների խորհուրդները:

«Ում հետ Քեզ Հայր ամենակալ՝ կենդանարար ու ազատող Սուրբ Հոգուդ հետ վայելում է փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ, և միշտ, և հավիտյանս հավիտենից. ամեն»:

«Եվ մեր մեծ Աստծու և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի ողորմությունը թող լինի ձեզ և բոլորիդ հետ»:

Դպիրները՝ «Եվ քո հոգուդ հետ»:

[Ասված] Ներսես [Լամբրոնացու] կողմից

Ինչո՞ւ սրանից հետո հասավ սարկավազի քարոզության ժամանակը:

Պետք է իմանալ, թե այսուհետև Պատարագի խորհուրդը հասնում է իր վախճանին՝ քահանայի կողմից [ասված] պեսպես աղերսանքների հետ միասին, որովհետև քանի դեռ սա չէր ավարտվել, սարկավազն որևէ իրավունք չունեի իմաց տալու ժողովրդին, որի համար էլ լուռ մնաց:

Քահանաները խորհրդապես Քրիստոսին ընծայեցին Հորը, ստացան նրանից Սուրբ Հոգին, [ապա] խնդրեցին զանազան ողորմություններ: Իսկ երբ հասան խորհրդի ավարտին, սարկավազը քարոզով իմաց է տալիս ժողովրդին, թե ձեր փրկության Ընծան, որ տվեցիք քահանային, բարձրացավ Աստծու առաջ և Նա ընդունեց հաշտությամբ և քաղցր կամքով: Արդ, պատրաստ եղեք, որպեսզի ձեր Պատարագի փոխարեն այն շնորհները, որ քահանաները ստացան Աստծուց, ձեր հոգում վայելեք: Եվ այսպես զգուշացնում է նրանց, որպեսզի

պատրաստվեն ընդունելու շնորհը, որ իջնելու է նրանց մեջ, այսինքն՝ մինչև հիմա դեռևս ժողովուրդը չէր համարձակվել խոսել Հայր Աստծու հետ: Նաև չեն իմացել Պատարագի վրա Հոգու էջքի մասին, քանի որ այս բոլորը ծածկաբար և խորհրդապես կատարվեց, սուրբ խորանի ներքին մասում՝ քահանաների մեջ: Իսկ ժողովուրդը միայն Քրիստոսի հետ էր խոսակից՝ սերովբեական երգ երգելով և ամեն ինչի համար գոհություն տալով, ինչպես և այնտեղ է ասվել: Արդ, այսուհետև [ժողովուրդը] միատեղ է ընդունելու Տերունական Հոգին, որի համար էլ պետք է նախ, ինչպես քահանաները խոսեցին Հոր հետ և ապա Քրիստոսի միջոցով ընդունեցին Հոգին, այսպես պետք է լինի նաև սրանց հետ, նախ՝ համարձակվել և Հայր Աստծուն աղոթել, ապա՝ շնորհի պարզևը Նրանից ընդունել:

ԱՂՈԹՔ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ

Սարկավազը քարոզում է. «Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը»:

ժողովուրդը՝ «Տեր, ողորմիր»:

«Առավել ևս Տիրոջն աղաչենք բոլոր սրբերի հետ, որոնց հիշատակեցինք»:

«Սուրբ սեղանի վրա մատուցված սուրբ և աստվածային պատարագի համար աղաչենք Տիրոջը»:

«Աղաչենք Տիրոջը, որպեսզի մեր Տեր Աստվածը, Ով ընդունեց սա Իր երկնային, սուրբ և իմանալի մատուցարանում, փոխարենը մեզ ուղարկի Սուրբ Հոգու շնորհները և պարզները»:

Սարկավագի քարոզը, ինչպես ասվեց վերևում, ուղղված է ժողովրդին, որպեսզի խնդրեն Հորը՝ տալու նրանց Սուրբ Հոգին: Որի համար նախ քահանան է աղոթում Հորը՝ նրանց այդպիսի համարձակություն տալու:

Եվ նույն տեղում քարոզության ժամանակ քահանան ծածկաբար աղոթում է. «Աստված ճշմարտության և Հայր ողորմության, գոհանում ենք Քեզանից, որ երանելի նահապետներից ավելի վեր մեր՝ մեղապարտներիս բնությունը մեծարեցիր»: Աստծու մարդասիրությունը մեծ է մեր՝ վերջիններիս նկատմամբ, քան թե առաջին նահապետների: Քանի որ նրանց համար Աստված կոչվեց՝ նրանց հանդեպ [ունեցած] ճշմարիտ դատաստանի պատճառով, իսկ մեզ [համար] Իրեն Հայր անվանեց, մեր մեղավորներիս հանդեպ իր բազում ողորմության պատճառով:

«Որովհետև նրանց համար Աստված կոչվեցիր, իսկ մեզ գթալով հոժարեցիր Հայր կոչվել: Եվ այժմ աղաչում ենք Քեզ Տեր, Քո կողմից տրված այսպիսի նոր և պատվական անվանադրության շնորհն օրըստօրե պայծառացնելով ծաղկեցրո՛ւ Քո սուրբ Եկեղեցու մեջ»: Այս «պայծառանալը և ծաղկելը» նշանակում է, որ սուրբ վարք և մաքուր գործ շնորհի մեզ, որպեսզի համարձակվենք այսպիսի մեծ և սարսափելի անունը կանչելու:

Ինչպես և ասում է. «Եվ տուր մեզ համարձակորեն բանալ մեր բերանները, Քեզ կանչել երկնավոր Հայր, երգել ու ասել»:

Եվ դպիրները բազկատարած երգում են. «Հայր մեր, որ երկնքում ես, թող սուրբ լինի Քո անունը»: Քանզի ինչպես հարազատ որդիներ՝ Հոր նմանությունն են կրում իրենց մեջ, և երկրայիններից հեռու մնալով՝ հոգով վերանում երկինք: Որի համար աղաչում են, [որ] սուրբ լինի Նրա անունը, այսինքն՝ որպեսզի բոլորը մաքուր վարք և առաքինի գործ ստանան Աստծու շնորհիվ, որպեսզի Նրա անունը փառավորվի մեր գործերով, ինչպես այն, որ ասում է. «Որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է»։ (Մատթ. Ե 16):

«Թող գա Քո Արքայությունը»: Քանզի ծանր ծառայությունով մեղքի մեջ ընկանք և սատանայի արքայությունը տիրեց մեզ վրա: Այժմ, ասում է, թող վերանա նրա իշխանությունը, և Քո թագավորությունը տիրի մեզ:

Եվ թե սա ինչպես պիտի լինի, ասում է. «Թող Քո կամքը լինի, ինչպես երկնքում է, այնպես էլ երկրում»: Այսինքն՝ մեր խորհուրդների մեջ խափանվի սատանայի կամքը, և մեր մեջ կատարվի Քո կամքը հոժարությամբ, ինչպես երկնքում հրեշտակների մեջ է կատարվում, նույնպես և մեր՝ երկրավորներիս՝ մարդկանց մեջ կատարվի:

«Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր»: Քանզի բնությամբ կարիքավոր արարածներ ենք, որի համար էլ ամենօրյա հաց ենք հայցում, նաև՝ իմաստություն, որը բանական հոգու հացն է: Այդպիսին է և Ինքը Քրիստոս, Ով երկնքից իջած Հացն է:

«Թող մեր պարտքերը, ինչպես և մենք ենք թողնում մեր պարտապաններին»: Որովհետև մեր հանդեպ Քո բյուրավոր երախտիքներին, պարտական գտնվեցինք, քանզի չեղանք շնորհակալ, այլ անհնազանդ լինելով Քո օրենքներին՝ բարկացրեցինք Քեզ: Արդ, թողություն շնորհի՞ր մեզ՝ այսպիսի պարտավորներիս, ինչպես և մենք՝ նրանց, ովքեր մեզ պարտական են, ու մեր նկատմամբ եղան հանցավոր, ներեցինք սրտանց և անոխակալ եղանք:

«Եվ մի տար մեզ դեպի փորձություն»: Եթե փորձությունները մեղքերի և մարմնավոր հանցանքների պատճառով են [այդ] բոլորից մեր ազատվելն ենք խնդրում:

«Այլ փրկիր չարից»: Չար է նույն ինքը սատանան և նրա խաբեությունը, որից փրկվելն ենք խնդրում: Եվ աղոթքների ավարտումը քահանային են հանձնում, որովհետև նա է սրանց հայրը, ինչպես և ասում է:

Աղոթք

«Տերերի Տեր, աստվածների Աստված, հավիտենական Թագավոր, բոլոր արարածների Արարիչ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, մի՛ տանիր մեզ դեպի փորձություն և դատապարտություն, այլ փրկիր չարից և պահիր փորձությունից: Որովհետև Քոնն է արքայությունը, զորությունը և փառքը հավիտյանս. ամեն»: Դու ես Տեր, Աստվածը բոլորի, ովքեր [գտնվում են] երկնքում և երկրի վրա, և բնությամբ Տեր Հիսուսի Հայրն ես: Որովհետև Քեզ հատուկ է թագավորելն ու զորություն արարելը և Քեզ փառք հավիտյանս. ամեն:

ԽՈՆԱՐՀՈՒՄ

«Խաղաղություն բոլորին»:

Ժողովուրդը՝ «Քո անձիդ նույնպես»:

Սարկավազը՝ «Աստծուն երկրպագենք»:

Ժողովուրդը՝ «Քո առջև, Տեր»:

Հորն աղոթելը վերջացրեց, այժմ կամենում է [ժողովրդի] առաջ բերել աստվածային խորհուրդը, որի համար էլ նախ խաղաղություն է մաղթում: Իսկ սարկավազն երկրպագելու հրաման է տալիս, որպեսզի հարևանցիորեն՝ որպես պատահական երևույթ չտեսնեն այս մեծ Խորհուրդը: Դարձյալ՝ որպեսզի այնպես չլինի, որ տեսնելուց հետո միայն խոնարհվեն երկրպագելու և զրկվեն տեսությունից, այս պատճառով էլ նաև հրամայում է երկրպագել:

Եվ քահանան ժողովրդի նման խոնարհեցնելով իր գլուխը, աղոթում է Սուրբ Հոգուն: Որովհետև ինչպես վերևում ասացինք, թե ամբողջ շնորհաբաշխությունը Սուրբ Հոգուց է և Նա՝

Սուրբ Հոգին աստվածացրեց նշխարը, դրա համար էլ այժմ քահանան ժողովրդի համար աղոթում է Սուրբ Հոգուն:

Քահանայի աղոթքի մեկնությունը

«Ո՛վ Սուրբ Հոգի, որ կյանքի աղբյուր ես և ողորմության բխում, ողորմի՛ր [այս] ժողովրդին, որ խոնարհվելով երկրպագում է Քո Աստվածությանը»: Սուրբ Գիրքը միշտ և ամենուր Սուրբ Հոգուն անվանում է Կյանքի Աղբյուր, ինչպես օրինակ, ջրի աղբյուրն իր մի որակով ոռոգում է դրախտի բոլոր ծառերը, ծաղիկները, և բույսերը և այն փոխարկում պեսպես համերի, զանազան գույների և զորության: Այսպես և Սուրբ Հոգին, իր մի պարզ և իմանալի Աստվածությամբ ոռոգում է Եկեղեցու դրախտը և զանազան շնորհներ ու զորություններ տալիս բոլորին, յուրաքանչյուրին ըստ իր հավատի չափի, ինչպես ասում է առաքյալը (տե՛ս Հռոմ. ԺԲ 6):

Այժմ քահանան հայցում է, որպեսզի շնորհների ողորմության նույն առատությունը պարզև ժողովրդին, ինչպես ասում է. «Պահի՛ր նրանց ողջ և անարատ»: Ոչ միայն մաղթում է մարմնով ողջ և անարատ լինել, այլ առավել ևս՝ հոգով:

«Սրանց հոգու մեջ տպավորիր մարմնի տեսանելի ձևը»: Ասում է, թե մարմնի այն ձևով, որ այժմ կան Քո առջև սպասավորելու համար և խոնարհվելով երկրպագում են, նույնը տպավորիր սրանց հոգիների մեջ, որպեսզի հոգով ևս լինեն Քո առջև և հոգով երկրպագեն:

«Հանդերձյալ բարիքները ժառանգելու և տիրելու համար, Քրիստոսով Հիսուսով, մեր Տիրոջով»: Որպեսզի այն վիճակին՝ հանդերձյալ բարիքների ժառանգությանն արժանանան նրանք, ովքեր Հիսուս Քրիստոս Տիրոջով ընդունեցին գրավականը:

«Որտեղ Սուրբ Հոգուդ և Ամենակալ Հորը վայելում է փառքը, իշխանությունը և պատիվն այժմ և միշտ և հավիտյանս. ամեն»:

ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Քահանան իր ձեռքն է վերցնում սուրբ հացը, իսկ սարկավազը բարձր կանչում է «Պռոպխումե»:

Այս բառը հունարեն է: Մեր լեզվով թարգմանվում է ականջ դրեք կամ վերև նայեցեք:

Քահանան գլխից վերև է բարձրացնում ընծան և ասում. «Դեպի սրբերի Սրբությունը»: Սարկավազի ձայնից, երբ ասաց, թե՛ երկյուղով վերև նայեցեք, ժողովուրդը տեղից վեր է կենում: Եվ երբ լսում և տեսնում է այն, ինչ ցանկանում էին, քահանան ասում է, թե՛ սա Սրբություն է, բայց սրբերի և մաքուրների համար է սա սրբություն լինում, ովքեր խոստովանությամբ և արտասուքներով իրենց մաքրեցին մեղքերից:

Ժողովուրդը միաձայն երգում է. «Աստծու Հոր փառքի մեջ [Դու՛ ես] միայն Սուրբ, միայն Տեր Հիսուս Քրիստոս. ամեն»: [Ժողովուրդը] չափազանց ուրախությունից [իր] պարտությունն է խոստովանում՝ ասելով. «Մեր Տե՛ր Քահանա, մեզ՝ մարմնին և արյանը կապվածներիս որտեղի՞ց սրբություն»: Այլ միայն Դու ես Սուրբ, Սուրբդ սրբերի, Դու՛ ես միայն Տերն երկնքի և երկրի, Հոր փառքով փառավորված մեր Տեր Հիսուս Քրիստոս:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քահանան նույնն երկու ձեռքում բռնելով, ասում է. «Օրհնված Հայր Սուրբ Աստված Ճշմարիտ»: Ժողովուրդը՝ «Ամեն»:

«Օրհնված Որդիդ Սուրբ Աստված Ճշմարիտ»: Ժողովուրդը՝ «Ամեն»:

«Օրհնված Հոգիդ Սուրբ Աստված Ճշմարիտ»: Ժողովուրդը՝ «Ամեն»:

Քահանան՝ «Օրհնություն և փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»: Որովհետև Երրորդությունից ընդունեց այս մեծ շնորհը, որի համար էլ գոհաբանական երգ է Նրան մատուցում:

Իսկ ժողովուրդը կրկնում է քահանայի ասածը՝ ասելով՝ «Ամեն. Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ, Հոգիդ Սուրբ: Օրհնություն Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Քահանան դարձյալ խոնարհվում է և աղոթում. «Մեր Տեր Հիսուս Քրիստոս, նայի՛ր երկնքից՝ Քո Սրբությունից և Քո թագավորության փառքի աթոռից»: Սրանով ցույց է տալիս Որդու անբովանդակելի Աստվածությունը:

«Այցելի՛ր մեզ՝ սրբելու և ապրեցնելու համար, որ Հոր կողքին ես նստում և այստեղ՝ պատարագվում»: Նա է՝ Քրիստոսը բոլորի սրբությունը և կենդանությունը, թեպետև Հորից անբաժանելի է, սակայն միշտ պատարագվում է սեղանի վրա:

«Արժանացրու մեզ Քո անարատ Մարմնին և պատվական Արյանը, և մեր միջոցով՝ բովանդակ ժողովրդին»: Որովհետև մենք մեր [կատարած] գործերի պատճառով չենք համարձակվում Քեզ մոտենալ, բայց Դու Քո ողորմությամբ մեզ արժանացնում ես, և մեր միջոցով բովանդակ ժողովրդին, որպեսզի բոլորն էլ միաբանված հաղորդվեն Քեզ հետ:

ԹԱԹԱԽՈՒՄ

Այս ասելով երկրպագում է և համբուրում սեղանն ու վերցնելով Սուրբ Մարմինը, ամբողջությամբ թաթախում է անապական Արյունով և ասում այս աղոթքը. «Մեր Տեր Աստված, Դու՛, Քո Միածին Որդու անունով մեզ քրիստոնյաներ կոչեցիր»: Գոհաբանությամբ ու աղոթքներով գլխավորելով այն ամենը, ինչը պատարագի մատուցման համար էր, որը և ավարտում է առանձնաբար օրհնություններով Սուրբ Երրորդությանը:

Եվ դարձյալ օրհնությունն ու փառքը միասին է սկսում, ապա դարձյալ՝ գոհություն ու դարձյալ՝ մաղթանք, որն [այս անգամ] ոչ թե՛ ողջ մարդկության, այլ միայն հավատացյալների համար [է ասվում]: Որովհետև ասաց, թե սրբությունները վայել են սրբերին: Եվ հայտնում է, թե Ովքեր են Սրբությունները, ասելով՝ Հայր Սուրբ, Որդի Սուրբ և Հոգին Սուրբ:

Իսկ սուրբ Քրիստոսյան պատարագը վայելում է Սուրբ Երրորդությանդ [որպես] Ընծա, և նրանք, ովքեր հաղորդվում են Սրբություններին, նրանք պետք է մաքուր և սուրբ լինեն: Եվ որովհետև մարդկային բնությունը միշտ պղծվում է սխալներից և երբեք չի կարողանում ամբողջովին անախտ լինել, դրա համար էլ մեր տկարությանն օգնության է կանչում Աստծու գթությանը, որպեսզի որով մաքրվեցինք՝ [դրանով էլ] Մաքուրին մոտենանք:

Եվ նախ Հայր ասելով, դեպի գթությունն է մղում Աստծու մարդասիրությունը, ապա նրանով Հորը նայելով ասում. «Որ Քո Միածին Որդու անունով մեզ քրիստոնյաներ կոչեցիր»: Ասում է՝ քանզի այնպիսի շնորհ տվեցիր մեզ, մինչև իսկ Քո Միածին Որդու անունը կրեցինք մեր վրա, որովհետև Նա կոչվում է Քրիստոս, իսկ մենք՝ քրիստոնյաներ: Սրանով և՛ գոհանում ենք, և՛ գործ ձեռնարկում: Որովհետև մինչ օտար էինք, Քո սերը շարժեց [Քո] գութը [մեր հանդեպ], մինչև որ

Քո Միածնին բաժին և ժառանգություն ունեցանք, և Նրանով անվանակոչվեցինք: Ապա որչափ առավել [այժմ] աղեկեզ կլինես մեզ համար, երբ մենք քրիստոնյաներ լինելով՝ Քո միակ Միածնիդ և սիրելի Որդուդ ենք պատկանում ու Նրա անվամբ կոչվում:

«Եվ մեր մեղքերի թողության համար [մեզ] շնորհեցիր հոգևոր ավագանով մկրտություն»: Ասում է. «Ոչ միայն բաժին և ժառանգություն տվեցիր մեզ Քո Միածին Որդուն, ըստ մարգարեի խոստումի. «Կտամ Քեզ [որպես] ժառանգություն հեթանոսներին» (Սղմ. Բ 8), այլև եղբայրներ ևս կամեցար մեզ դարձնել Քո սիրելի և համագո Որդուն, որպեսզի Նա լինի Անդրանիկը բազում եղբայրների մեջ: Այդ բանի համար էլ մեր մեղքերի աղտոտությունները լվացիր սուրբ ավագանի մկրտությամբ և Սուրբ Հոգով մեզ վերստին ծնելով որդիներ դարձրիր, և դրանով առավել ևս ջերմացրիր հայրական սիրո բորբոքումը, որովհետև Քեզանից բխող Սուրբ Հոգին, որ մեզ ծնունդ տվեց, Քեզ որդեգրեց»:

«Եվ արժանացրիր մեզ հաղորդվել Քո Միածնի Սուրբ Մարմնին և Արյանը»: Եվ որովհետև առավել հույժ զորացավ Քո սերը մեր հանդեպ, քանի որ Ինքդ Քեզ չարգելեցիր որդի ունենալ միայն Քո բնութակից Որդուն, այլև՝ մեզ, որ շնորհներով որդիացանք, քանզի մղված մարդասիրությունիցդ Նրան կամեցար մեզ հետ խառնել: Որպեսզի Նա մեր գլուխը լինի, իսկ մենք Նրա մարմնի անդամները լինենք, Նրա Մարմնով և Արյունով Նրան հողակապված և հարմարված: Որովհետև շատերս մի մարմին ենք Քրիստոսով, ինչպես ասում է առաքյալը՝ «Եվ ըստ այսմ բոլորս մի որդի ենք» (Գաղատ. Գ 26):

Եվ այսպիսի անպատմելի սիրո հիշատակումից հետո, աղաչանք է անում, չընկնելու համար պատվից ու շնորհից՝ մեղքերի ու սխալների պատճառով: Եվ ասում է՝ Դու, որ նախկին այնչափ վատթարացածներին բերեցիր այսպիսի բարության և այժմ մաքրում ես մեզ, որպեսզի այսպիսի ձևով Քրիստոսի Մարմնին և Արյանը մերձենանք, ինչպես և ասում է. «Եվ այժմ աղաչում ենք Քեզ, Տեր, արժանացրու մեզ ընդունել այս Հաղորդությունը՝ մեր մեղքերի թողության համար»: Նրա համար է «Հաղորդություն» կոչում, որովհետև Նա միանում է մեզ և մենք՝ Նրան:

Այս բանի համար իսկ պետք է այսպիսի շնորհից արժանապես գոհանալ, ինչպես ասում է. «Եվ գոհությամբ փառաբանել Քեզ Որդու և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Քահանան երկրպագելով [սկիզբ] բարձրացնում է՝ ի տես ժողովրդի:

Մեկնություն

Նախ՝ Պատարագի սկզբում, երբ եկավ սեղանի առաջ, երկրպագեց: Ապա կրկին [երկրպագեց], երբ խնդրեց Հոգուն՝ իջնել և կատարել Պատարագը, իսկ սա արդեն երրորդ անգամն է, որ երկրպագում է: Ինչպես մի պատգամավոր, երբ մոտենում է թագավորին, նախ երկրպագում է, ապա ասում [իր] պատգամը, այդպիսին էր քահանայի առաջին երկրպագությունը: Նմանապես, երբ մեկը շնորհ է գտնում թագավորից, երկրպագում է ու գոհանում, այսպես և սա, երբ Հոգին ընդունեց՝ երկրպագեց ու գոհացավ: Նույնպես և այժմ, երբ ուրիշ խնդրվածքներ ևս ընդունեց, երկրպագելով գոհացավ: Նման ձևով այժմ կրկին անգամ բարձրացնում է Խորհուրդը, որպեսզի ժողովրդին ճաշակման հորդորի, ինչպես ասում է.

«Սրբությամբ ճաշակենք մեր Տեր և Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ, Սուրբ և պատվական Մարմնից ու Արյունից, որ իջնելով երկնքից՝ բաշխվում է մեր մեջ: Սա է կյանքը, հույսը, հարությունը, մեղքերի քավությունն ու թողությունը:

Սաղմոս ասացեք մեր Տեր Աստծուն, սաղմոս ասացեք մեր անմահ երկնավոր Թագավորին, որ նստած է քերովբեական կառքերի վրա»:

Նախ՝ երկյուղ [տարածեց նրանց մեջ], երբ բարձրացրեց ու ասաց «Դեպի սրբերի Սրբությունը», և նրանք զարհուրեցին ձայնից՝ իմանալով իրենց սխալական բնությունը: Այժմ նորից հորդորում է նրանց ճաշակման համար ասելով՝ «Թեպետև սա է սրբերի Սրբությունը, սակայն երբ ձեզ մաքրեք խոստովանությամբ ու հավատաք ճշմարտությամբ, Սրանից կընդունեք կյանք, հույս, հարություն և մեղքերի քավություն ու թողություն»:

ԲԵԿՈՒՄ

Այսուհետև ի՞նչ է նշանակում սարկավագի կարգադրությունը դպիրների դասին, ինչպես ասում է. «Ով դպիրներ, սաղմոս ասացեք մեր Տեր Աստծուն և քաղցր ձայնով հոգևոր երգեր [երգեցե՛ք]: Որովհետև Նրան վայելում են սաղմոսներ և օրհնություններ, ալելուիաներ և հոգևոր երգեր: [Եկեղեցու] սպասավորներ, երգերով հանդերձ, սաղմոս ասացեք, և երկնքում [գտնվող] Տիրոջն օրհնեցեք»: Ինչպես սկզբում՝ մինչև պատարագի վերաբերումը ժողովրդից դեպի [սուրբ] սեղան, սարկավագը հրաման էր տալիս դպիրներին եղանակելու, այսպես և հիմա է անում, որովհետև արդեն պատրաստ է նույն շնորհն իջնել ժողովրդի վրա բաշխվելու համար: Եվ սա այն պատճառով, որ երաժշտական հնչյունների ազդումն իր կատարյալ զորությունն ունի. որպեսզի սթափեցնելով արթնացնի բոլորի մտքերը՝ շնորհի տենչման համար: Քանզի չկա մի բան, որ մեր կամքը փոխի ուրախության կամ տրտմության, ինչպես երգերի ձայնը, եթե [այն] պատշաճ կերպով է կատարվում: Այս պատճառով Եկեղեցին, տվյալ ավանդությունը դրսից ընդունեց: Դարձյալ՝ աստվածային, քաղցրաձայն երգերը մարդկանց իղձերը և ցանկություններն երկրից դեպ երկինք են բարձրացնում, Աստծու մոտ:

Մեկնություն

Ապա ժողովուրդը սկսում է երգել «Պատարագված Քրիստոս...»:

Տեսնում ես, թե ինչպես են քահանայից վերցնում ավետիսի խոսքերը և եղանակելով պայծառացնում բոլորի մտքերն ու մարմինները և ցնծությամբ խնջույքի հրավիրում:

Բայց արի՛, որպեսզի ասածներիս զորությունը քննելով իմանանք, թե ի՞նչ է ասում. «Պատարագված Քրիստոս բաշխվում է մեր մեջ»:

Այսինքն՝ ո՛վ ժողովուրդ, ճանաչիր սոսկալի խորհուրդը, թե այն Քրիստոսին, Ում մեր միջից քերովբեապես բարձրացնելով տվեցինք քահանայի ձեռքը՝ բոլորիս փոխարեն [որպես] Պատարագ մատուցելու Հայր Աստծուն, նույն Ինքն երկինք մտավ, հաշտություն կնքեց Աստծու և մարդկանց միջև, և այժմ նորից որպես Պատարագ մեր մեջ է գալիս Հոր կողմից և կյանքի դեղ բաշխում ամենքին:

Մինչ նրանք երգում են, քահանան Մարմինը վերցնում է իր ձեռքը, այն համբուրում արտասուքներով և ասում. «Ո՞ր օրհնությունը կամ ո՞ր գոհաբանությունն ասեմ այս Հացի ու Գինու վրա: Այլ Հիսուս, միայն Քեզ եմ օրհնում՝ Հորդ և Ամենասուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Դարձյալ ասում է. «Խոստովանում և հավատում եմ, որ Դու ես Քրիստոս՝ Աստծու Որդին, որ վերցրեցիր աշխարհի մեղքը»:

Բեկանելով դնում է սկիհի մեջ ասելով. «Սուրբ Հոգու լրումը»:

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ապա Տիրոջից հայցում է պեսպես խնդրանքներ [իր] անձի, ժողովրդի և ամբողջ աշխարհի համար, ինչքան որ կամենում է: Դրանից հետո վերցնելով [Խորհուրդը] ճաշակում է ու ասում. «Քո անապական Մարմինը թող լինի ինձ [համար] կյանք, իսկ Քո Սուրբ Արյունը՝ մեղքերի քավություն և թողություն»:

Մինչդեռ նա այս է ասում և դպիրներն երգում են, և [այս պահին] նրանք, ովքեր քահանայական դասից են, կարող են ճաշակել:

Մեկնություն

Ինչպես Տերն այն արեց, քանզի նախ Ինքը ճաշակեց, ապա տվեց առաքյալներին, որպեսզի նրանք էլ ճաշակեն: Որովհետև Տերն առաքյալներին իրեն համապատիվ անվանեց, ինչպես և ասաց. «Ձեզ ոչ թե ծառաներ անվանեցի, այլ բարեկամներ» (Հովհ. ԺԵ 14-15): Նաև նրանց որդիներ էր անվանում, իսկ մեկ այլ տեղում՝ եղբայրներ:

[Քահանան], վերցնելով սուրբ Ընծայով սկիհը, դառնում է ժողովրդին: Իսկ սարկավազը բարձր ձայնով կանչում է ժողովրդին, ասելով. «Երկյուղածությամբ և հավատով առաջ եկեք և սրբությամբ հաղորդվեցե՛ք»:

Մեկնություն

Ջգուշացան վարդապետությամբ, որով վարժեցրեց նրանց, իսկ այժմ, երբ ամեն ինչի վերջը հասավ, և ողորմության շնորհը, որ խնդրում էր ժողովուրդը՝ եկավ ու հասավ, իմաց տալով առաջ է կանչում աշակերտած մանուկներին:

Ասում է. «Երկյուղածությամբ և հավատքով մոտեցե՛ք», որովհետև այս երկուսն են սանձն ու դատողն անձնիշխան կամքի ստահակության, այսինքն՝ երկյուղն ու հավատը: Որովհետև մեկն Աստծու մոտ է համարձակորեն տանում, իսկ մյուսը պահում է Նրա հետ, ինչպես պետք է:

Որովհետև եթե միայն երկյուղը լինի՝ կօտարանանք նրանից, իսկ եթե հավատը՝ առանց երկյուղի, կհանդգնենք առավել քան անհրաժեշտ է: Սրա համար երկյուղը լծակից դառնալով հավատին, մեծ արագությամբ, թևելով բարձրացնում է միտքը, որպեսզի Քրիստոսին հաղորդակից անի, այն հավատով, թե սա է ձեր համար բաշխված աստվածային մարմինը: Ինչպես ճշմարտապես էլ այդպես է, և [պետք է] մոտենալ սրան այնպես, ինչպես զգուշությամբ [մոտենում ենք] կրակին, որովհետև սրանով է մաքրվում և սրբվում ձեր բոլոր անօրենություններն ու մեղքերը: Ահավասիկ սա դիպչելով ձեր շրթունքներին, լվանում է բոլոր անօրենությունները և ձեր մեղքերը սրբում ձեզանից, ինչպես և աստվածախոս մարգարեինը (տե՛ս Եսայի Զ 6):

Այս է ասում սարկավազը, որպեսզի [ժողովուրդը] հրամանով, կոչումով ու անձնիշխան կամքով առաջանան հաղորդվելու, ըստ այնմ. «Իր ծառաներին բարձր քարոզությամբ առաքեց՝ հրավիրելու Իր բաժակին և ասաց. «Ով տգետ է, թող ինձ մոտ գա և խմի: Եվ պակասամիտներին ասում է. Եկեք, կերեք Իմ հացից և խմեք այս գինուց, որ խառնեցի» (Առակ. Թ 3-5): Հարցնում են՝ ինչի՞ համար: Պատասխանում է. որպեսզի, ներված [[իննեն] ձեր անօրենությունները և ապրեք:

Ոչ մեկը թող ինձ ուրիշ իմաստության չկանչի, քան այս սեղանը, որովհետև արդարև, ով իմացության ճաշակելիքով ուտի Խորհրդի զորությունը զգայական մարմնի հետ, թեկուզև տգետ լինի կամ պակասամիտ, այսուհանդերձ անմիջապես կվերափոխվի ճաշակման զորությունով: Իսկ եթե մեկը միայն մարմնով մերժենալն է բավական համարում, ապա նա քաղած ու

պակասամիտ կմնա, և ինչ պետք է պակասամիտին կցուրդ լինել: Քանզի մեր Տեր Հիսուս Քրիստոս հոգի է և հոգիների Կյանք, հոգիների [համար] Կերակուր է և երկնքից իջած Հաց: Նա երկրում շոշափելի մարմնով երևաց, որպեսզի մեր հոգիներին կյանք տա:

Դպիրները բարձրաձայն երգում են. «Մեր Աստվածն ու Տերն երևաց մեզ, Օրհնված է Տիրոջ անունով եկողը»:

Քահանան գալիս է սարկավագից հետո և խաչակնքում ժողովրդին ասելով. «Պահպանիր, Տեր, Քո ժողովրդին և օրհնիր Քո ժառանգությունը, հովվիր և բարձրացրու սրանց, այսուհետ մինչև հավիտյան»:

ԳՈՀԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քահանան հաղորդություն է տալիս արժանիներին, իսկ դպիրներն երգում են երգը: Եվ որքան քահանան շարունակում է ճաշակեցնելը, այնքան՝ դպիրներն երկարացնում են երգը:

Մեկնություն

Դպիրների բոլոր երգերն ուրախացնող են և ժողովրդին հորդորում են ճաշակման: Նրանք երգում են. «Տեր, ճաշակելով Քո Մարմինն ու Արյունը, լիացանք Քո բարիքներով, փառք բարձունքներում մեզ Կերակրողիդ: Դու, որ հանապազ կերակրում ես մեզ, ուղարկիր մեզ Քո հոգևոր օրհնությունը. Փառք բարձունքներում»:

Քահանան լվանում է ձեռքերը, իսկ սարկավագը խնկարկում է սեղանի շուրջ, մինչ նրանք կերգեն, և վերցնելով սպասքը տանում դեպի խորհրդանոց ու գալով ազդարարում է ժողովրդին՝ այսպես գոհանալ. «Եվ Խաղաղության [համար] և Տիրոջն աղաչենք: Առավել ևս դուք, այս աստվածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ, և անապական խորհուրդը հավատքով ընդունողներդ, գոհացե՛ք Տիրոջից»:

Մի փոքր զանազանություն կա դրանց՝ գոհության ու օրհնության խոսքերի ընթացքի միջև: Օրհնությունն էական է փառատրությունն է Աստծու բարիքների համար, իսկ գոհությունը՝ նոր հաղորդվողների շնորհակալությունը: Արդ, մինչև այժմ, օրհնում էին Աստծուց ստացած շնորհների համար, իսկ հիմա գոհանում նոր ընդունած ընդհանրական պարզանների բաշխման համար, դաստիարակ սարկավագի ազդարարությամբ: Որպեսզի սրանով հաղորդակցվեն քահանայական աղոթքներին, որոնցով նա ևս խորհրդաբար գոհանում է այստեղ՝ խորանի ներքևի մասում:

Աղոթք

«Գոհանում ենք Քեզանից Քրիստոս Աստված, որ այսպիսի բարության ճաշակում շնորհեցիր մեզ՝ մեր կյանքի սրբության համար»: Խորհրդի կատարումից հետո [քահանան] գոհանում է Քրիստոսից, քանի որ Ինքը մեզ տվեց բարի ճաշակում՝ մեղքերից մաքրվելու և մեր մեռելությունից կենդանության գալու համար:

«Սրանով մեզ պահիր սուրբ և անարատ»: Այսինքն՝ պահի մեզ սխավվելուց և հանցանքներից: «Սրանով», այսինքն՝ Քո աստվածային Մարմնով և Արյունով պահպանվենք սուրբ և անարատ:

«Բնակեցնելով մեր շուրջը Քո աստվածային խնամքով: Հովվիր մեզ Քո սուրբ և բարեսեր կամքի անդաստանում»: Այլև Դու՝ քաջ Հովվիկդ, բնակվես մեր մեջ և հովվես Քո Սուրբ Գրքի

պատվիրանների անդաստանում, որոնք Քո կամքի պատմողներն են, որովհետև Քո կամքը սուրբ է և բարեսեր:

«Որով պատասպարվում ենք սատանայի ամեն տեսակ հակառակություններից»: Քո սուրբ պատվիրաններով և աստվածային սուրբ ճաշակունով պատասպարվում ենք սատանայի բոլոր գայթակղություններից:

«Այսուհետ արժանի լինենք լսելու Քո ձայնը, և միայն Քեզ՝ քաջահաղթ և ճշմարիտ Հովվիդ հետևել ու Քեզանից ընդունել երկնքի արքայությունում պատրաստված տեղը»: Միայն քաջ Հովվիդ արժանանանք, լսողներ լինենք [Քո] ձայնին և հոժարակամ [Քեզ] հետևենք: Որպեսզի վերջին [օրը] սրբերի պատրաստված տեղը, որն երկնքի արքայությունն է, Քեզանից ստանանք:

«Մեր Աստված և Տեր մեր Փրկիչ՝ Հիսուս Քրիստոս, որ օրհնված ես Հոր և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

«Խաղաղություն ամենքին»:

«Անքննելի, անհասանելի եռյակ Ինքնությանդ, հաստատող, ընդունող, անբաժանելի և անքակտելի Տերությանդ ու միասնական Սուրբ Երրորդությանդ վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»: Ինքնությունն էականերիս ստեղծողն է:

Եթե պատարագիչն եպիսկոպոս է, նույն ժամին հազնում է եմիփորոնը և իջնում եկեղեցու մեջ:

Մեկնություն

Քահանայապետը Քրիստոսի օրհնակն է, որովհետև ինչպես Քրիստոս ամբողջ տնօրենությունը կատարելով երկրի վրա, դարձյալ առ Հայր բարձրացավ մարմնով՝ մեզ բարեխոսելու համար, ինչպես ասում է առաքյալը՝ «Որ Հայր Աստծու Աջ կողմում է և բարեխոս է մեզ համար» (Հռովմ. Ը 34): «Եվ դարձյալ մյուս անգամ գալու է հատուցելու ըստ գործերի» (Բ Տիմ. Դ 14): Նույնը և՛ քահանայապետը կերպավորեց, քանզի խնկարկությամբ իջավ ժողովրդի մեջ և հավասարվեց նրանց, ապա դարձյալ բարձրացավ սրբերի Սրբությունը՝ բեմ, տերունական սեղանի մոտ և մինչ այժմ՝ [պատարագի վախճանը], բարեխոսեց Հոր առաջ: Իսկ այժմ ժողովրդի համար հազնում է եմիփորոնը և իջնում ու աղոթում, [որպես] օրհնակ [Տիրոջ] մյուս անգամ գալստյան՝ յուրաքանչյուրին հատուցելու, ինչպես և ասում է:

Դ Մաս ԱՐՁԱԿՈՒՄ

Աղոթք

«Որ օրհնում ես նրանց, ովքեր Քեզ են օրհնում Տե՛ր և սրբացնում ես Քեզ հուսացողներին»։ Քրիստոս Իր մյուս անգամ գալստյան ժամանակ բոլոր նրանց, ովքեր այստեղ հավատքով և բարի գործերով օրհնեցին և փառավորեցին Նրան, օրհնելու է, ասելով. «Եկեք, Իմ Հոր օրհնվածներ» (Մատթ. ԻԷ 34)։ Եվ սրբացնում է [նրանց], ովքեր մաքրեցին իրենց անձերը մեղքի ախտերից՝ Նրա հանդեպ ունեցած հույսով։

«Ապրեցրու՛ Քո ժողովրդին և օրհնի՛ր Քո ժառանգությունը»։ Այժմ պահպանիր մեղքերից և հանդերձյալում օրհնիր։

«Քո Եկեղեցու ամբողջականությունը պահի՛ր։ Սրբի՛ր նրանց, ովքեր սիրով ողջունեցին Քո տան վայելչությունը»։ «Ամբողջականություն» է կոչում հավատացյալների բազմությունը, որը և խնդրում է պահել փորձություններից։ Իսկ Աստծու տան վայելչությունը սուրբ սեղանն է, քանզի ովքեր սիրով համբուրում են, մաքրվում են բոլոր ախտերից։

«Դու մեզ փառավորիր Քո աստվածային զորությունով և մի՛ լքիր Քեզ հուսացողներին»։ Փառավորիր մեզ, երբ կգաս [Քո] հայրենի փառքով։

«Խաղաղություն պարգևի՛ր ամբողջ աշխարհին, եկեղեցիներին, քահանաներին, մեր թագավորներին ու նրանց զինվորներին և համայն ժողովրդին»։ Քանզի այս մեծ պարգևին, որ «խաղաղությունն» է, բոլորն են փափագում, ինչն այժմ հայցում է [քահանան] բոլորին տալ առանց խտրության։

«Որովհետև բոլոր բարի տուրքերը և բոլոր կատարյալ պարգևները, շնորհված են ի վերուստ՝ Քեզանից, որ Լույսի Հայրն ես և Քեզ վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն» (տե՛ս Հակ. Ա 17)։

Ի՞նչ է նշանակում ժողովրդի ասածը՝ «Թող օրհնված լինի Տիրոջ անունն այսուհետև մինչև հավիտյան»։

Մեկնություն

Երբ լսեցին, որ քահանան օրհներգությունների փոխարեն մեծ ու բարձր շնորհներ տվեց նրանց, նորից հորդորվում են սրտի նույն բաղձանքներով՝ հայտարարելով, թե Տիրոջ անունն ոչ միայն հիմա օրհնվեց մեր մեջ, ինչպես վկայեց հայր սուրբը, այլև՝ այսուհետև մինչև հավիտյան, այսինքն՝ անվախճան և անսահման ժամանակ, քանի որ հավիտյանն ավելի վեր է ժամանակից և ոչ թե ժամանակի մաս է։

Քահանա դառնում և ավելացնում է սրանց վրա. «Մարգարեների և օրենքների ամբողջացումը Դու՛ ես, մեր Փրկիչ Քրիստոս Աստված, որ լիությամբ կատարեցիր Քո հայրական տնօրենությունը։ Նաև մեզ լիացրու՛ Քո Սուրբ Հոգով»։ Բոլոր օրենքները և մարգարեները Քրիստոսի մասին խոսեցին, Ով եկավ ու կատարեց Իր տնօրենությամբ։ Եվ ինչո՞ւ է «հայրական» ասում, որովհետև ամեն ինչ կատարեց Հոր կամքով։ Արդ, լիացրու՛ մեզ Քո Աստվածային Հոգով։

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿՄԱՆ

Ապա նշխարը բերում են քահանային, ու նա օրհնելով բաշխում է ժողովրդին, և ասում են սաղմոս՝ «Ամեն ժամ Տիրոջն օրհներգեն, Նրա օրհնությունն ամեն ժամ բերանունս լինի»:

Քահանան ժողովրդին խաչակնքելով ասում է՝ «Օրհնյալ եղեք Սուրբ հոգու շնորհներով, գնացեք խաղաղությամբ, և Տեր Հիսուս Քրիստոսը թող լինի ձեզ և ամենքիդ հետ. ամեն»։ Ապա՝ դպիրները մինչ ասում են «Անծա Տիրոջով պարծենա» սաղմոսը, [այդ ընթացքում] մասը բաշխում են ողջ ժողովրդին:

Մեկնություն

Նշխարների բաժանումն այս է նշանակում. ժողովուրդը, որ միացավ քահանայական օրհնություններին, պարտ է նաև սեղանին միանալ: Այս պատճառով, եթե լինեն ոմանք, որ չեն կարողանա Աստվածային խորհրդին մերձենալ, [թող] այս սուրբ նշխարներին հաղորդվեն հավատով, իբրև թե Տիրոջ սեղանի կերակուրի փշրանքներից են [օգտվում], որի մասին վկայեց քանանուհին (տե՛ս Մատթ. ԺԵ 27, Մարկ. Է 28): Սրան պարտավոր են ոչ իբրև սոսկ հացի մոտենալ, այլ իբրև աստվածային սեղանի մնացորդի, որպեսզի իրենց չափով ճաշակման համար արժանանան շնորհների: Բայց ի՞նչ է նշանակում սաղմոսը, որ երգում են՝ «Օրհնենք Տիրոջն ամեն ժամ» (Սաղմ. ԼԳ 2):

Այս սաղմոսը Դավիթն երգեց այն ժամանակ, երբ փախավ Սավուղից ու գնաց քահանայապետի մոտ, և քահանայապետը նրան առաջավորաց հաց տվեց, որ իրավունք չէր աշխարհականներին ուտել: Բայց կերավ ինքը Դավիթը և [նրանք], ովքեր նրա հետ էին (տե՛ս Ա Թագ. ԻԱ) և դրանով բացեց հավատի դուռը, որպեսզի նաև աշխարհականներն ուտեն քահանայական հացից, որ այժմ նորը (ճաշակումը) Քրիստոսով կատարվեց, որի համար էլ այս խորհրդի ավարտմանն երգում ենք այս սաղմոսը:

ԽՐԱՏ

Եվ արդ, խորհրդի խոսքերի ավարտից հետո, պարտ է սա մտապահել: Քահանաներին, ովքեր սուրբ պատարագի խորհրդի կատարողներն են, կամ աշխարհականներին, ովքեր միայն հաղորդվում են սուրբ Պատարագին, չի կարելի առանց պատրաստության, լիրբ և հանդուգն երեսներով, քմահաճորեն մերժենալ սուրբ և աստվածային խորհրդին՝ իբրև սոսկ հացի և գինու, կամ թե՛ արծաթի ու փառքի համար: Որովհետև այդպիսիներն իրենց անձերի դատաստանի համար են ուտում և ըմպում, որի համար էլ պարտական են լինում Տիրոջ Մարմնին ու Արյանը (Ա Կորնթ. ԺԱ 27), ինչպես Հուդան և Տիրոջը խաչ հանողները: Քանի որ ասում է առաքյալը, թե՛ Մովսեսի օրենքներն արհամարհողը, առանց ողորմության մահվան էր արժանանում, երկու կամ երեք հոգու վկայությամբ: Եվ որովհետև անողորմաբար էին սպանում Մովսեսի օրենքներն արհամարհողին, ապա ինչպիսի՞ պատիժների արժանի կլինի նա, ով արհամարհում է Աստծու Որդուն և Նրա սուրբ Մարմինն ու Արյունը, որովհետև ինչով սրբվեց ամբողջ աշխարհը, [սրանք Նրան հաղորդակից եղան] քամահրանքով, իբրև անսուրբ և խառնակ բանի: Ահեղ դատաստանի ակնկալիքն այդպիսիների համար է պատրաստված, և այս է գեհեմի կրակի վրեժխնդրությունն ու բաժինը:

Դարձյալ՝ մեկը թող երկյուղը չվկայակոչի և հուսահատությամբ իսպառ հեռանալով օտարանա սուրբ և աստվածային կյանքի կերակուրից, որովհետև դրանով այդպիսին հայտնապես դեպի մահ ու մեռելություն է [գնում]: Եվ եթե մեկը բոլոր առաքինություններն առատապես ու լիակատար [ձևով] ունի և կենդանի հրեշտակների հետ հավասարված դեպ երկինք բարձրանա, սակայն Տիրոջ Մարմնի և Արյան հաղորդությունից հեռու մնա, ճշմարտապես սատանայի հետ ներքին սանդարամետում կխորտակվի: Որովհետև այդպիսիներն երկու հանցանք են գործում, մեկը, որ Տիրոջ հրամանն են արհամարհում, այն որ ասաց. «Այս բանն արեք Իմ հիշատակի համար» (Ղուկ. ԻԲ 19), և թե՛ «Ես եմ երկնքից իջած Կենդանի Հացը. ով ուտի այս Հացից, հավիտյան կապրի» (Հովհ. Զ 51-52): Նաև՝ «Ով ուտում է Իմ մարմինը և ըմպում Իմ արյունը, հավիտենական կյանք ունի, իսկ ով չի ուտում Իմ մարմինը և չի ըմպում Իմ արյունը՝ նա չունի հավիտենական կյանք» (Հովհ. Զ 55): Արդ, ով անփույթ է հաղորդության հանդեպ, արհամարհում է այս բոլոր քաղցր պատվերները: Եվ երկրորդ՝ նրա հանցանքն այն է, որ կամապաշտությամբ, անձնապաստան կերպով ակնկալում է միայն իր առաքինություններով արդարանալ:

Դարձյալ՝ ոմանք էլ վկայակոչելով իրենց ակամա բնական կրքերը կամ սխալները, հեռու են մնում սուրբ խորհրդից: Եվ նրանք չեն հավատում այն խոսքին, որ ասում է Հովհաննեսը. «Աստծու Որդու արյունը մեզ սրբում է բոլոր մեղքերից» (Ա Հովհ. Ա 7): Բայց թող յուրաքանչյուր ոք իմանա, որ երբեմն սատանան մեզ համոզում է մեծ հանցանքները չնչին բան համարել և հորդորում հաղորդվել մեր Տիրոջ մարմնին ու արյանը, որպեսզի դրանով մեզ կրկնակի պատժի արժանացնի:

Երբեմն էլ պատահում է, որ անիծյալ [սատանան] փոքր ու աննշան սխալները մեծ ու չափազանց է ցույց տալիս և օտարացնում [մարդուն], հեռացնելով Կյանքի ճաշակունից, որպեսզի իր հետ և այն ողորմածին տանի դեպի հավիտենական մահ ու կորուստ: Որի համար էլ հարկ չէ, որ մեկն ինքն իր անձի վրա քննիչ լինի, այլ հարկ է, որ մեկ ուրիշին իր անձի և գործերի վրա դատավոր ու քննիչ կարգի:

Եվ սա, թե ինչպես է լինում, այս է. մեծ ու փոքր բոլոր գործերը, խոսքերն ու խորհուրդները՝ կամա թե ակամա, գիտությամբ թե անգիտությամբ եղած, առհասարակ բոլորն էլ առանց

ամաչելու պետք է խոստովանել խոստովանահոր առաջ: Եվ եթե ինչ որ խոստովանահայրը նրան հրամայի, նա նույնը չկատարի՝ ապա նա անձնահավան է, կամապաշտ և ոչ թե մարդու խոսքն է արհամարհում, այլև նույն իրեն՝ Աստծուն է արհամարհում: Իսկ եթե թույլ չտա հաղորդվելու, ու նա հանդգնի դա անել, ապա վերոհիշյալ պատուհասը կկրի, որից մեզ թող հեռու պահի Աստծու Որդին՝ Քրիստոս իր խաչով ու չարչարանքներով և իր Մարմնի ու Արյան Խորհրդագործությամբ. Ում փառք և պատիվ, բոլոր արարածներից և գոյերից այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Սակայն մեր եկեղեցիներում տեսնում են և այլ շատ անկարգություններ, քանզի ոմանք՝ ոչ միայն աշխարհականներից, այլև կուսակրոն քահանաներից շատերը, մինչև իրենց վախճանվելու օրն անհոգ են, ոչինչ հանձն չեն առնում հաղորդության խորհրդի համար, իսկ երբ հիվանդանում են և հասնում մահվան դուռ, ապա հարկից դրդված [հաղորդվում են], և ոչ թե հանուն հույսի, այլ մարդկանց խոսքերի պատճառով, որպեսզի մարդկանցից չպախարակվեն, [ու չասեն] թե անհաղորդ մեռավ: Հաղորդվել են խնդրում շատերը, սակայն ոչ թե իրենք, այլ ուրիշներն են ստիպում դա անել, և շատերի մոտ շունչը փչելուց հետո է ժամանում քահանան ու նրա բերանը դնում սուրբ Խորհուրդը, որ չար և մեծ [մեղք] է բոլոր հերձվածներից ավելի, քանզի Աստվածային Խորհուրդը դնում է այնպիսի բերանում, որից չլսվեց խոստովանություն և մեղքի գղջում, կամ հավատքի դավանություն:

Արդ, եթե աշխարհականներից մեկը, մերձիմահ լինելով, գղջա մեղքերի համար և խոստովանի ու հավատով խնդրի սուրբ Խորհուրդը՝ պարտ է համարձակությամբ մոտենալ Քրիստոսի ողորմությանը և նրան տալ Քրիստոսի շնորհը: Բայց քահանաների պարագային խիստ դժվարին է, և չգիտեն՝ ի՞նչ ասեն:

Վերջ

Գրաբարից աշխարհաբարի վերածեց Մկրտիչ սարկավագ Այվազյանը